

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆԼԵԶՎԻՒՆՍԻՏԻՏԻՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р.АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

Լ Ե Ջ ՈՒ
Ե Վ
Լ Ե Ջ Վ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(Հայերենագիտական հանդես)

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
(Журнал арменоведческих исследований)

LANGUAGE AND LINGUISTICS
(Journal of Armenian Studies)

2 (33)
2025



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լոյս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Վ. Գ. Համբարձումյան
Խմբագրի տեղակալ Ն. Մ. Սիմոնյան
Պատասխանատու քարտուղար Մ. Ա. Սարգսյան

Խմբագրական խորհուրդ

Բրուստյան Լ. Գ., Գալստյան Ա. Վ., Թրագուտ Յ. (Ավստրիա),
Խաչատրյան Գ. Կ., Կատվալյան Վ. Լ., Հովհաննիսյան Գ. Ռ., Մոլոդիչենկո Ե.
(ՌԴ), Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա),
Մարկո Բաիս (Իտալիա), Անդրեա Սկալա (Իտալիա), Մանանա Միկաձե
(Վրաստան)

Բաժինների խմբագիրներ

Գալստյան Ա. Վ. (հայերեն), Բրուստյան Լ. Գ. (ռուսերեն), Հովհաննիսյան
Գ. Ռ. (անգլերեն)

Главный редактор В. Г. Амбарцумян
Заместитель редактора Н. М. Симионян
Ответственный секретарь М. А. Саргсян

Редакционная коллегия

Брутян Л. Г., Галстян А. В., Катвалян В. Л., Молодниченко Е. (РФ),
Мохаммади М. М. (ИРИ), Оганисян Г. Р., Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К.,
Тонапетян-Демопулос А. (Франция), Марко Баис (Италия), Андреа Скала (Италия),
Манана Микадзе (Грузия).

Редакторы разделов

Галстян А. В. (армянский), Брутян Л. Г. (русский), Оганисян Г. Р.
(английский)

Editor-in- chief V. G. Hambardzumyan
Vice-editor N. M. Simonyan
Responsible secretary M. A. Sargsyan

Editorial Board

Brutyan L. G., Donabédian-Demopoulos A. (France), Galstyan A. V.,
Hovhannisyan G. R., Katvalyan V. L., Khachatryan G. K., Mohammadi M. M. (Iran),
Tragut J. (Austria), Tonapetyan- Demopoulos A. (France), Marco Bais (Italy), Andrea
Scala (Italy), Manana Mikadze (Georgia).

Editors of sections

Galstyan A. V. (Armenian), Brutyan L. G. (Russian), Hovhannisyan G. R. (English)

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2025

Սերգեյ Աբրահամյան. ծննդյան 100-ամյակ

ՍԵՐԳԵՅ ԱՐԲԱՀԱՄՅԱՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Ավագ գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ

armenn.sargsyann1968@gmail.com

ՇՈՂԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Ավագ գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ

shogermiasyan@gmail.com

ԷԴԻՏԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Ավագ լաբորանտ

altunyanedita97@gmail.com

Համառոտագիր

Հայ նշանավոր լեզվաբան, մանկավարժ Սերգեյ Աբրահամյանը մեկն է այն երախտավորներից, որոնք մշտապես ուշադրության կենտրոնում են պահել հայրենի երկրամասը: Լինելով Հաղրուփի շրջանի պատմական Տումի գյուղի ծնունդ՝ նշանավոր լեզվաբանը մինչև կյանքի վերջին օրը մնաց կապված Արցախի հետ բազում թելերով՝ Արցախյան շարժմանն ակտիվ մասնակցություն, տարաբնույթ օգնությունների կազմակերպում, մեծագույն աջակցություն երիտասարդ հանրապետության կրթության ու գիտության առաջընթացին և այլն: Իր գիտական գործունեության ընթացքում նա անդրադարձել է նաև Ղարաբաղի բարբառին ու բանասիրությանը, կարևոր ներդրում ունեցել Արցախի գիտակրթական համակարգի կայացման ու զարգացման գործում: Ս. Աբրահամյանի անունն էին կրում հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. Սերգեյ Աբրահամյան, Արցախ, Տումի, Ղարաբաղի բարբառ, Հաղրուփի բարբառ, Արցախի բանասիրություն, հոդված, ակնարկ, գրախոսություն:

ON THE SERGEY ABRAHAMYAN'S DIALECTOLOGICAL HERITAGE

ARMEN SARGSYAN

NAS RA Institute of Archaeology and Ethnography
Researcher, PhD

NAS RA Institute of Language after H. Acharyan
Senior researcher, PhD

armenn.sargsyann1968@gmail.com

SHOGER MINASYAN

NAS RA Institute of Language after H. Acharyan
Senior researcher, PhD

shogerminasyan@gmail.com

EDITA ALTUNYAN

NAS RA Institute of Language after H. Acharyan
Senior lab. assistant

altunyanedita97@gmail.com

Abstract

Renowned Armenian linguist and educator Sergey Abrahamyan is one of those devoted individuals who always kept his native land in the center of attention. Born in the historic village of Tumi in the Hadrut region, the distinguished linguist remained deeply connected to Artsakh until the end of his life. This bond was reflected in his active participation in the Artsakh Movement, organization of various aid efforts, and significant support for the development of education and science in the young republic. Throughout his academic career, he also studied the dialect and folklore of Karabakh and played an important role in shaping and advancing Artsakh's scientific and educational systems. The secondary school in his native village and the Department of Armenian Language and Teaching Methodology at Artsakh State University were both named after Sergey Abrahamyan.

Keywords and phrases: Sergey Abrahamyan, Artsakh, Tumi, Karabakh dialect, Hadrut dialect, Artsakh folklore, article, essay, review.

ДИАЛЕКТОЛОГИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ СЕРГЕЯ АБРААМЯНА

АРМЕН САРГСЯН

Институт археологии и этнографии НАН РА

Научный сотрудник, к.ф.н.

Институт языка им. Р. Ачабяна НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н.

armenn.sargsyann1968@gmail.com

ШОГЕР МИНАСЯН

Институт языка им. Р. Ачабяна НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н.

shogerminasyan@gmail.com

ЭДИТА АЛТУНЯН

Институт языка им. Р. Ачабяна НАН РА

Старший лаборант

altunyanedita97@gmail.com

Аннотация

Выдающийся армянский лингвист и педагог Сергей Абраамян — один из тех преданных своему делу деятелей, которые всегда держали свою родину в центре внимания. Уроженец исторического села Туми в Гадрутском районе, выдающийся ученый до конца своей жизни оставался тесно связанным с Арцахом. Эта связь проявлялась в его активном участии в Арцахском движении, организации различных гуманитарных акций и значительной поддержке развития образования и науки молодой республики. В течение своей научной деятельности он также занимался изучением диалекта и фольклора Карабаха, внес важный вклад в становление и развитие научно-образовательной системы Арцаха. Средняя школа в его родном селе, а также кафедра армянского языка и методики его преподавания Арцахского государственного университета носили имя Сергея Абраамяна.

Ключевые слова и словосочетания: Сергей Абраамян, Арцах, Туми, карабахский диалект, гадрутский диалект, фольклор Арцаха, статья, очерк, рецензия.

Մի առիթով խոսելով գիտնականների վարքի, խառնվածքի, բնավորության մասին՝ ակադ. Գ. Զահուկյանը գրել է. «Կան գիտնական-ճգնավորներ և գիտնական-կենսասերներ, գիտնական-տեսաբաններ և գիտնական-կիրառողներ, գիտնական-ուղղափառներ և գիտնական-որոնողներ, գիտնական-նստակյացներ և գիտնական-ճանապարհորդներ, գիտնական-խրթնաբաններ և գիտնական ժողովրդականացնողներ, գիտնական սակավախոսներ և գիտնական ճարտասաններ և այլն, և այլն» [11, էջ 3]:

Դժվար է ասել, թե նշվածներից որ խմբին է հստակ համապատասխանում լեզվաբան Ս. Աբրահամյանը. կարծում ենք՝ նրան ավելի

ճիշտ կլինի կոչել գիտնական-հայրենասեր՝ վառ անհատականություն, որն իր գիտակցական կյանքը նվիրել է մայրենի լեզվի ուսումնասիրմանը, հայագիտության զարգացմանը, հայրենիքի հանդեպ անսպառ սիրո տարածմանը: Լինելով Հադրութի շրջանի պատմական Տումի գյուղի ծնունդ՝ նա բազում թելերով կապված էր հայրենի երկրամասի հետ: Սրտառույց են եղել նրա հանդիպումները շրջանի դպրոցների ուսուցիչների, աշակերտների հետ, հատկապես գյուղի միջնակարգ դպրոցը նրա անունով կոչելու առիթով: Ամեն անգամ նրա ելույթն ամենից առաջ երախտագիտության խոսք էր իր հայրենի գյուղին ու դպրոցին, որոնք, իր իսկ խոսքով, իր բոլոր հաջողությունների հիմքն են կազմում:

Ս. Գ. Աբրահամյանը նշանակալի դեր է ունեցել նաև Արցախի պետական համալսարանի, մասնավորապես հայոց լեզվի և գրականության ամբիոնների կայացմանը: Եվ պատահական չէ, որ 2016 թ. համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը կոչվեց ակադ. Ս. Աբրահամյանի անունով: 2000 թ. մեծ շուքով նշվեց Գ. Զահուկյանի 80 և Ս. Աբրահամյանի 75-ամյակը՝ հոբելյարների մասնակցությամբ, իսկ 2015 թ.՝ մեծ լեզվաբանի 90-ամյակը:

Արցախի պարբերականներում տարբեր տարիների տպագրվել են նաև Ս. Աբրահամյանին նվիրված հոդվածներ և ակնարկներ:

Անվանի գիտնականի ուշադրությունից չեն վրիպել մայրենի՝ Ղարաբաղի բարբառն ու բանահյուսությունը: Դեռևս 1955 թ. նա հանդես եկավ «Դիտողություններ բարբառների զարգացման ներքին օրենքների վերաբերյալ» հոդվածով [2], որում բարբառների քերականական կառուցվածքի ուսումնասիրման գործում առավել կարևորելով տվյալ բարբառի՝ համաժողովրդական լեզվից ու մյուս բարբառներից ունեցած տարբերությունների վերհանումը՝ հանգամանորեն քննության է առնում Ղարաբաղի և Հադրութի բարբառների երկու կարևոր օրինաչափություն:

Առաջինը նույն բառերի՝ որոշյալ և անորոշ առումներով գործածվելու դեպքում տարբեր հոլովման (ոչ բոլոր հոլովումներում) ենթարկվելու երևույթն է: Հաստատելով, որ հայերենում բառի որոշյալ և անորոշ առումների տարբերիչ գիծը որոշիչ հոդն է, որը, դրվելով բառի վրա, նրան տալիս է որոշակիություն, դրանով էլ բառը կամ բառաձևը տարբերվում է անորոշից, իսկ բառի անորոշ առումը ձևային յուրահատուկ դրսևորում չունի, քերականական որևէ մասնիկ չի ստանում, կամ, ինչպես ասում են, ունենում է զրո վերջավորություն: Դա համարելով անորոշ

և որոշյալ առումների տարբերակման միակ միջոցը ոչ միայն գրական հայերենում, այլև հայերենի շատ բարբառներում՝ Ս. Աբրահամյանը հաստատում է, որ «Ղարաբաղի և Հադրութի բարբառներում գոյություն ունի բառի որոշյալ և անորոշ առումների դրսևորման նաև մի այլ, յուրահատուկ և այդ բարբառների համար ավելի տիպական եղանակ, այն է՝ որոշյալ առման դեպքում բառը ենթարկվում է մեկ, իսկ անորոշ առման դեպքում՝ այլ (ու) հոլովման» [2, էջ 66]: Այնուհետև բերվում են օրինակներ, ինչպես, պատ, սար, քար, մարթ, ծի և այլ բառեր որոշյալ առման դեպքում հոլովվում են *է* հոլովումով՝ *պապէն, սարէն, քարէն, մարթին, ծիյին*, իսկ այդ նույն բառերը անորոշ առումով՝ *ու* հոլովումով՝ պատու, սարու, քարու, մարթու, ծիյու, կյիրու, որոնցից պարզ է դառնում, որ Ղարաբաղի և Հադրութի բարբառներում բառը անորոշ առման դեպքում ենթարկվում է ու հոլովման, իսկ որոշյալ առման դեպքում՝ այլ: Ընդ որում, անորոշ առման այս յուրահատուկ ձևավորումը կցական տիպի հոլովման ժամանակ դրսևորվում է եզակի սեռական, տրական և հայցական (անձի առման դեպքում) հոլովներում, իսկ մյուս հոլովներում քննարկվող առումների տարբերակումը կատարվում է հոդի միջոցով, ինչպես՝ որոշյալ առում՝ *մարթը, մարթին, մարթին, մարթին/մարթը, մարթան, մարթավը*, անորոշ առում՝ *մարթ, մարթու, մարթու, մարթու / մարթ, մարթա, մարթավ*: Շեշտվում է նաև, որ հիշյալ բարբառներում կան անջատական համակարգի հոլովման որոշ դրսևորումներ, որոնց դեպքում անորոշ առման նշված առանձնահատկությունը դրսևորվում է նաև բացառական, գործիական, ներգոյական հոլովներում, ինչպես՝ *մարթու անա (ներէստա), մարթու անավ (ներէստավ), մարթու անըմ (ներէստըմ)*: Ըստ հեղինակի՝ կցական և անջատական սիստեմի հոլովումների անորոշ առման այս տարբերությունների պատճառն այն է, որ անջատական սիստեմի հոլովման ժամանակ բացառական, գործիական և ներգոյական հոլովներում իբրև առաջին բաղադրիչ հանդես է գալիս տրական հոլովի ձևը, որն ունենում է ու հոլովիչը՝ ի տարբերություն նույն բառի որոշյալ առման հոլովիչի, մինչդեռ *անա (ներէստա), անավ (ներէստավ), անըմ (ներէստըմ)* անջատված մասնիկները թե՛ որոշյալ և թե՛ անորոշ առումների դեպքում ունենում են միևնույն ձևը, և առումների տարբերությունը երևում է միայն առաջին բաղադրիչից՝ *մարթին անա-մարթու անա, մարթին անավ - մարթու անավ, մարթին անըմ-մարթու անըմ*: Նշվում է նաև, որ «անորոշ առման դրսևորման այս առանձնահատկությունը հատուկ է ոչ միայն գո-

յականների ճնշող մեծամասնությանը, այլև անորոշ դերբային, թվականին, ածականին, իհարկե, երբ դրանք գործածվում են գոյականաբար և հոլովվում» [2, էջ 68]:

Հեղինակն անդրադառնում է նաև բառի անորոշ առման ձևային տարբերական այս միջոցի առաջացմանը: Առումների ձևային տարբերական անհրաժեշտությունը տրամաբանական տեսակետից նա համարում է հասկանալի. «Առարկան խոսողի համար կարող է լինել կամ նրա կողմից կարող է դիտվել իբրև հայտնի, ծանոթ և հակառակը՝ իբրև անհայտ, անծանոթ: Տրամաբանական այսպիսի տարբերակումը կարող է ամրապնդվել լեզվական որևէ միջոցով, ստանալ քերականական ձև՝ դրսևորվելով իբրև քերականական կատեգորիա» [2, էջ 68]: Իսկ ինչ վերաբերում է նշված բարբառներում բառերի մեծ մասը անորոշ առման դեպքում *ու* հոլովման ենթարկվելուն, իբրև այդ առման դրսևորման միջոց, նրա կարծիքով, պատմական զարգացման բարդ գործընթացի և մասնավորապես հոլովման համակարգում եղած համաբանության օրենքի հետևանք է, որով այլ հոլովման պատկանող բառերը, տվյալ դեպքում *ու* հոլովման ենթարկվող բառերի մեծ մասն անցել է *ի* և այլ հոլովումների, և դրան հակառակ՝ բարբառներն աշխատել են պահպանել շատ բառերում անհետացող *ու* հոլովումը՝ վերջինիս տալով քերականական նոր իմաստ՝ անորոշ առման իմաստ: *Ու* հոլովում կա թե՛ գրաբարում, թե՛ արդի հայերենում և թե՛ հայերենի բարբառներում: Հայտնի է նաև, որ *ի* հոլովումը ժամանակակից հայերենում մեծ կշիռ ունի, որին նա հասել է այլ հոլովումների պատկանող բառերը իրեն ենթարկելու միջոցով: Այդ երևույթը վերաբերում է նաև Ղարաբաղի ու Հադրութի բարբառներին: Արդյունքում այնպիսի բառեր, ինչպիսին են *ծի* «ծի», *հիլի* «հայելի», *ծիլի* «ածելի», *թէ* «թի» և այլն, այդ բարբառներում որոշյալ առման դեպքում ենթարկվում են *ի* հոլովման. *ծի-ծիլին*, *հիլի-հիլվին*, *ծիլի-ծիլվին*, *թէ-թիլին*: Իսկ եթե *ի* հոլովման ուժեղ ազդեցությունը որոշակի դեր չխաղար այդ հարցում, պետք էր սպասել, որ դրանք ևս հոլովվեին *ու* հոլովումով: Այդ և շատ բառեր որոշյալ առման դեպքում կորցնելով *ու* հոլովումը՝ վերջինս պահպանել են անորոշ առման դեպքում: Այսպես, *ծիլին-ծիլու*, *հիլվին-հիլվու*, *ծիլվին-ծիլվու*, *թիլին-թիլու*, այսինքն՝ մի կողմից հոլովական համակարգում եղած համաբանության որոշակի հաջողությունը, մյուս կողմից բարբառի՝ իր ունեցած քերականական ձևը պահպանելու միտումը առաջացրել են միևնույն բառի հոլովման երկու համակարգ:

Ղարաբաղի և Հադրութի բարբառները այդ հնարավորությունն օգտագործել են իբրև որոշյալ ու անորոշ առումների տարբերակման միջոց, ինչը բնական է. նախ՝ այդ բարբառներում *ու* հոլովումը ըմբռնվել է իբրև անորոշ առման արտահայտության միջոց, ստացել է նոր բովանդակություն և ապա տարածվել բառերի ճնշող մեծամասնության վրա: Ղարաբաղի և Հադրութի բարբառներում անորոշ առման ժամանակ *ու* հոլովման պատկանելը (*հացու, պէնու, պէրցու*) պետք է բացատրել ոչ այլ կերպ, քան *ու* հոլովումը, իբրև անորոշ առման դրսևորման միջոցի ըմբռնման և, անկախ բառի հոլովումից (որոշյալ առման դեպքում), անորոշ առումը *ու* հոլովումով արտահայտելու փաստով:

Երկրորդ կարևոր հարցը, որ ներկայացրել է լեզվաբանը, ժամանակի մակբայների գործածության առանձնահատկություններն են Ղարաբաղի և Հադրութի բարբառներում: Հաստատելով, որ հայերեն գրական լեզուներում ժամանակի մակբայները միևնույն ձևով կարող են գործածվել թե՛ անցյալում կատարված, թե՛ ներկայում կատարվող և թե՛ ապագայում կատարվելիք գործողության հատկանիշ (ժամանակ) ցույց տալու համար (*նա շուր եկավ, նա շուր է գալիս, նա շուր կգա*), և ժամանակի միայն մեկ հատվածին՝ միայն անցյալին, կամ միայն ապագային վերաբերող մակբայները ժամանակակից հայերենում նույնպես ձևով չեն տարբերվում, նշվում է, որ Ղարաբաղի և Հադրութի բարբառներում ժամանակի մակբայներին հատուկ է ժամանակի կարգի որոշ յուրահատուկ դրսևորում. «Այդ բարբառներում եթե մակբայը ցույց է տալիս ներկայում կատարվող կամ ապագայում կատարվելիք գործողության հատկանիշ, գործածվում է իր ուղիղ ձևով: Իսկ եթե նա գործածվում է անցյալ ժամանակում կատարված գործողության հատկանիշը ցույց տալու համար, ձեռք է բերում ձևային նոր հատկանիշ» [2, էջ 71]: Որպես օրինակներ են բերվում *մըհէնգյ* (հիմա), *կանօխ* (վաղ, շուտ), *ասօր* (այսօր), *ըստարէ* (այս տարի), *ուրուգյու* (երեկոյան), *դուբրուգյու* (իրիկնամուտ) ժամանակի մակբայները, որոնք գործածվում են իրենց ուղիղ ձևով, եթե ցույց են տալիս կատարվող կամ կատարվելիք գործողության ժամանակը (*Մըհէնգյ ըմ կյամ, Մըհէնգյ քընամ ըմ*), մինչդեռ անցյալում կատարված ժամանակ ցույց տալու համար վերջից ստանում են *ի* կամ *է*, ինչպես՝ *Մըհէնգյի ըմյըէկալ, Կընօխէ ըս յըէկալ, Ուրգյօնէ ժօղօվ ա իլալ* և այլն: Ըստ հեղինակի՝ նշված բարբառներում մակբայների նման դրսևորումները բացատրելու համար նախ պետք է նկատի ունենալ, որ մակբայ-

ները առաջացել են այլ խոսքի մասերից, մեծ մասամբ՝ գոյականներից, որոնցից առաջացման ուղիներից մեկը հոլովական իմաստի մթագնումը կամ կորուստն է։ Ընդ որում անցյալի իմաստ ունեցող մակբայները առաջացել են բառերի սեռական հոլովաձևերից, ինչը երևում է այդ մակբայների թե՛ ձևից և թե՛ գործածության որոշ առանձնահատկություններից։ Նրա կարծիքով՝ «Անցյալ ժամանակ ցույց տվող մակբայները ուղիղ ձևից (որոնք գործածվում են ներկայում և խոսելուց հետո կատարվելիք գործողության հատկանիշ ցույց տալու համար) տարբերվում են *ի, է (ն), ու* քերականական մասնիկներով։ Դրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ երբեմնի սեռական հոլովի վերջավորությունները՝ հոլովիչները» [2, էջ 72], որը շատ որոշակի երևում է հատկապես այն բարդ բառերից, որոնց երկրորդ բաղադրիչն այժմ էլ առանձին գործածվում է իբրև գոյական և հոլովվում է նույն հոլովիչով, ինչպես՝ *մըկալօրեն, էնօրէն, սօրէ* բառերի երկրորդ բաղադրիչն է *օր* բառը, որը իբրև գոյական ենթարկվում է *է* հոլովման, օրինակ, *Օրէն պէնըէքսին չըն թօղէլ* (Օրվա գործը վաղվան չեն թողնի)։ Այստեղից եզրակացվում է, որ միևնույն է քերականական մասնիկը (իսկ *ն*-ն հոդ է), որ հանդես է գալիս իբրև անցյալ ժամանակի մակբայի քերականական դրսևորման միջոց, հանդիսանում է այդ մակբայների երկրորդ բաղադրիչը հանդիսացող *օր* բառի հոլովիչը։ Նույն ձևով *ըստարէ* (այս տարի) բառի համապատասխան անցյալի ձևը՝ *ըստըռու*, հատկանշվում է *ու* մասնիկով, որտեղ *ու* մասնիկի՝ հոլովիչ լինելը երևում է նրանից, որ *տարէ* բառը Ղարաբաղի և Հադրութի բարբառներում ենթարկվում է *ու* հոլովման, ինչպես՝ *Տարուն կէսին ապուռը կըլիաւ ա* (Տարվա կեսին անասունների կերը վերջացել է), որը վկայում է, որ *ըստըռու* բառը ևս սեռականի քարացած ձև է։ Նշանավոր լեզվաբանի կարծիքով անցյալ ժամանակ ցույց տվող մակբայների՝ նախկին սեռական հոլովաձևեր լինելը վկայում են նաև յուրահատուկ կիրառությունները. «Ներկա և ապառնի ժամանակի իմաստ ունեցող մակբայները դրվում են միայն բայի վրա և գործողության կատարման ժամանակ են ցույց տալիս, իսկ անցյալ ժամանակի իմաստ ունեցող մակբայները, բացի դրանից, կարող են երբեմն դրվել նաև գոյականի ու գոյականաբար գործածվող բառերի վրա» [2, էջ 72], ինչպես՝ *Սօրէ կէրածըս մըրէս չի, յըրկէ ասածըր մըրէս կինի* (Նույնիսկ այսօրվա կերածս չեմ հիշում, երեկվա ասածդ կարո՞ղ էի հիշել)։ Այսպիսով, Ս. Աբրահամյանը հիմնավորում է, որ Ղարաբաղի և Հադրութի բարբառներում ժամանակի մակ-

բայներին հատուկ ժամանակի կարգը «հետևանք է այն բանի, որ մակբայների են վերածվել այլ խոսքի մասերի ոչ միայն ուղիղ ձևերը, այլև սեռականի ձևերը, որոնք բնականաբար նախապես եղել են հատկացուցիչներ, իսկ մակբայի վերածվելուց հետո գործածվում են իբրև գործողության կատարման անցյալ ժամանակը ցույց տվող բառեր և որպես այդպիսին մյուս մակբայներից տարբերվում են ոչ միայն իմաստով, այլև ձևով» [2, էջ 73]:

Գիտական ուսումնասիրությունների մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն գրախոսությունները, որոնցից մի քանիսը, բացի տվյալ աշխատության արժևորումից ու թերությունները նշելուց, ընդգրկում են լուրջ դիտարկումներ քննարկված հարցերի վերաբերյալ՝ դիտարկվելով որպես կարևոր հոդվածներ. դրանցից են, օրինակ, Ա. Մեյերի՝ Հ. Աճառյանի «Քննության Ղարաբաղի բարբառի» [10] և Ա. Ղարիբյանի՝ Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» (8) աշխատությունների վերաբերյալ գրած գրախոսությունները: Այդ շարքին պետք է դասել նաև Ս. Աբրահամյանի գրախոսությունը Ա. Պողոսյանի «Հադրութի բարբառը» մենագրության մասին [1]: Նախ հայերենի բարբառների ուսումնասիրումը համարելով հայ լեզվաբանության կարևոր և անհետաձգելի խնդիրներից՝ Ս. Աբրահամյանը հանգամանորեն ներկայացնում է մենագրության արժանիքները: Ըստ նրա՝ Ա. Պողոսյանը առաջին անգամ կատարել է Հադրութի բարբառի լայն ուսումնասիրությունը՝ քննելով հնչյունական համակարգը (հնչյունախոսություն, հնչյունափոխություն), ձևաբանական (բոլոր խոսքի մասերն իրենց ձևաբանական բոլոր հատկանիշներով) ու շարահյուսական (ամփոփ նկարագիր, բարբառին հատուկ կամ նրանում յուրահատուկ դրսևորում ունեցող երևույթներ) կառուցվածքը և բառային կազմը՝ ի տարբերություն Ա. Ղարիբյանի, որ «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» աշխատության մեջ [9, էջ 107-127] խնդրո առարկա բարբառն ուսումնասիրել է առավել ընդհանուր գծերով, և զգացվում էր բարբառի մենագրական ուսումնասիրության կարիքը: Կարևորվում են նաև աշխատության առաջաբանում ներկայացված տեղեկագրական, վիճակագրական ու մատենագիտական անհրաժեշտ տեղեկությունները, վերջում տրված նմուշները բարբառի բոլոր խոսվածքներով, յուրաքանչյուր տեքստին կից տրված անհասկանալի բառերի համառոտ բառարանն ու կցված բարբառային քարտեզները (*նա, էս, էտ, էն* դերանունները, *անա, նըխտա* մասնիկներով վերլուծական կազմությամբ

հոլովները, բայերի խոնարհիչները, օժանդակ բայը, անկատար դերբայի կազմությունը և այլն): Աշխատության արժանիքներից է համարվում այն, որ «...հեղինակը միաժամանակ նշում է այն տարբերություններն ու յուրահատկությունները, որ կան տարբեր գյուղերում» [1, էջ 274]: Այնուհետև ներկայացվում են աշխատության վիճելի հարցերը և թերությունները: Վիճելի է համարվում հեղինակի կարծիքը Հադրութի բարբառի հնչյունների քանակի վերաբերյալ: Ըստ Ս. Աբրահամյանի՝ «Թեև քմայնացումը շատ տարածված է Հադրութի բարբառում, որի հետևանքով առաջացել են մի շարք քմային հնչյուններ, բայց սրանց քանակը, այնուամենայնիվ, սահմանափակ է, և դիրքային քմայնացման ամեն մի արտահայտություն չի կարելի համարել առանձին հնչույթ» [1, էջ 277]: Հակառակ Ա. Պողոսյանի տեսակետի՝ Ս. Աբրահամյանը կարծում է, որ Հադրութի բարբառում չի կարելի ընդունել *դյ, տյ, թյ, ձյ, ծյ, ցյ, ճյ, չյ, լյ, ժյ* հնչյուններ, որոնց քմային արտասանությունը պետք է դիտել իբրև սոսկ դիրքային երևույթ, ճիշտ այնպես, ինչպես որ այդպիսի փաստեր ունենք ժամանակակից գրական հայերենում: Ըստ գրախոսի՝ «Հնչյունաբանություն» գլուխը կառուցված է այնպիսի սկզբունքով, որ ավելի օգնում է պատկերացնելու, թե գրաբարյան որ հնչյունը Հադրութի բարբառում ինչի է վերածվել, քան թե գաղափար կազմելու Հադրութի բարբառի հնչյունների ժամանակակից վիճակի, իբրև համակարգի, մասին: Մինչդեռ բարբառների նկարագրական ուսումնասիրության նպատակը նրանց արդի վիճակի ուսումնասիրությունն է: Նշվում է նաև, որ մի շարք դեպքերում բարբառի այս կամ այն բառի դիմաց ներկայացված են այնպիսի բառեր (իբրև գրաբարյան), որպիսին չկան գրաբարում, ինչպես՝ *կիրակամուր > կյիրկյամօւր, կուրուածք > կուրվասկ, թղբել > թուխպիլ* և այլն:

Առանձին քննարկման նյութ է դարձնում Ա. Պողոսյանի կողմից անհայտ ծագման բառ դիտարկված *կրթել* (մետաղե փոքրիկ ձողիկ (որ կոչվում է *կրթեչ*) օգնությամբ կուպիտ թելը հղկել և վերացնել նրա ավելորդ մազմզուկները) բայը՝ հիմնավորելով, որ այն գրական հայերենի նույնանուն բայն է, նրա պես կազմված է *կիրթ* արմատից, և ունի նշված մասնավոր իմաստը, բայց այնուամենայնիվ կա նաև որոշ ընդհանրություն. «ինչպես կրթելով ու դաստիարակելով վերացնում են կրթվողի անցանկալի գծերը և ցանկալի բնավորություն են մշակում, նույն ձևով էլ կրթեչ-ով (< կրթիչ) վերացնում են թելի ավելորդ մազմզուկները, անհարթությունները, այն դարձնում հարթ, ողորկ» [1, էջ 278]:

Ս. Գ. Աբրահամյանի տեսադաշտում է եղել նաև Արցախի բանա-
հյուսությունը: 19-րդ դ. կեսերից սկսած՝ տասնյակ բանահավաքներ, ազ-
գագրագետներ, մանկավարժներ, այլ երախտավորներ գրառել են
հրաշապատում, իրապատում, կենդանական հեքիաթների հազարավոր
նմուշներ, որոնց մեծ մասն ամփոփվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտի հրատարակած բազմահատորյակում [4]:
Հավաքածուի 5-րդ [5], 6-րդ [6] և 7-րդ [7] հատորների խմբագիրն է Ս.
Գ. Աբրահամյանը: 5-րդ հատորն ընդգրկում է Մ. Գրիգորյան-Սպանդար-
յանի, 6-րդ հատորը՝ Առաքել, Գրիգոր և Ալեքսանդր Բահաթրյանների,
Կ.Մելիք-Շահնազարյանի և ուրիշների, 7-րդ հատորը՝ Մ. Առաքելյանի, Ք.
Հարությունյանի, Ա. Առստամյանի, Ա. Ղազիյանի գրառած հեքիաթները:
Ժողովածուների նախաբաններում տեղեկություններ են տրվում Արցախի
պատմության, բարբառի հնչյունաքերականական առանձնահատկոյ-
թյունների և այլնի մասին, իսկ վերջում կցված են նյութերի գրառման հետ
կապված ծանոթագրություններ, բարբառային և փոխառյալ բառերի բա-
ռարան, տարբեր բնույթի ցանկեր, որոնց իրականացումը արդյունք է
նաև նշանավոր խմբագրի անմիջական մասնակցության: Անվանի լեզ-
վաբանը խմբագրել է նաև Արցախին վերաբերող այլ աշխատանքներ,
հանդես եկել հոդվածներով [3]:

Եզրակացություններ

Ս. Գ. Աբրահամյանը մինչև կյանքի վերջին օրը մնաց կապված
հայրենի Արցախի հետ՝ մեծապես նպաստելով նրա կրթական ու գիտա-
կան համակարգերի զարգացմանը:

Նա նշանակալի դեր է ունեցել Արցախի պետական համալսարանի,
մասնավորապես նրա հիմքը հանդիսացող հայոց լեզվի և գրականու-
թյան ամբիոնների կայացման ու զարգացման գործում:

Իր գիտական մի շարք աշխատանքներում նա քննել է Ղարաբաղի,
հատկապես Հադրութի բարբառների տարբեր իրողություններ, խմբա-
գրել հայ ժողովրդական հեքիաթների հատորները և այլ աշխատանք-
ներ:

Գրականության ցանկ

1. Abrahamyan S. (graxosuthyun), A. M. Poghosyan, Hadruthi Barbary, 1966, no. 3, pp. 274–278 [M. Poghosyan, “The Dialect of Hadrut,” *Patma-Banasirakan Handes* (Historical-Philological Journal)], 1966, no. 3, pp. 274–278.
2. Abrahamyan S. Ditoghuthyunner barbarneri zargatsman nerqin orenqneri veraberyal.- [“Observations on the Internal Laws Governing the Development of Dialects. -” *Bulletin of the Academy of Sciences of the Armenian SSR. Social Sciences*], 1955, no. 7, pp. 65–73.
3. Abrahamyan S. Miasnuthyuny azgi goyatevman u zargacman erashchiq [Unity as a Guarantee of the Nation’s Survival and Development,” in *Proceedings of the Conference Dedicated to the 10th Anniversary of the Karabakh Liberation Movement: Theses*], Yerevan, 1998, pp. 9–10.
4. Hay joghovrdakan heqiathner, hh. 1-19, E., 1959-2023 (Armenian Folk Tales, vols. 1–19, Yerevan, 1959–2023).
5. Hay joghovrdakan heqiathner, h. V (bnagiry ev canothagruthyunner A. Nazinyani ev M. Grigoryani (Spandaryan) E., 1966 (Armenian Folk Tales, vol. V (text and annotations by A. Nazinyan and M. Grigoryan [Spandaryan]; preface by A. Nazinyan), Yerevan, 1966).
6. Hay joghovrdakan heqiathner, h. VI (bnagiry, naxabany, canothagruthyunner, bararann u tcankery A. Nazinyani, V Svazlyani), E., 1973 (Armenian Folk Tales, vol. VI (text, preface, annotations, glossary, and indexes by A. Nazinyan and V. Svazlyan), Yerevan, 1973).
7. Hay joghovrdakan heqiathner h. VII (tpag8wutgyan en patrastel A. Nazinyany ev M. Araqelyany), E., 1979 (Armenian Folk Tales, vol. VII (prepared for publication by A. Nazinyan and M. Arakelyan), Yerevan, 1979).
8. Gharibyan A. (graxosuthyun) K. S. Davthyan, Lernayain Gharabaghi barbarayin qartezy.”*Patma-banasi8akan handews*”, 1966, 4, ej 273-276 (A. Gharibyan, (review) K. S. Davtyan, “The Dialect Map of Mountainous Karabakh,” *Patma-Banasirakan Handes* (Historical-Philological Journal), 1966, no. 4, pp. 273–276).
9. Gharibyan A., Hayeren barbarneri mi nor tshyugh.- “Erevani petakan hamalsarani gitakan ashxatuthyunner”, h. 11, Ե., 1939, էջ 24-188 (A. Gharibyan, “A New Branch of Armenian Dialects,” *Scientific Works of Yerevan State University*, vol. 11, Yerevan, 1939, pp. 24–188).
10. Meye A. (graxosuthyun) H. Atcharyan, Usumnasiruthyunner haykakan barbarakhosutyan. C. Qnnuthyun Gharabaghi barbari, vagharshapat, 1901, 198 ej («*Journal Asiatique*», Փարիզ, 1902, էջ 561-571) (A. Meillet, (review) H.Acharian, *Studies in Armenian Dialectology. III. An Examination of the Karabakh Dialect*, Vagharshapat, 1901, 198 pp. (*Journal Asiatique*, Paris, 1902, pp. 561–571).
11. Jahukyan G., Zruysner hayots lezvi masin, E., 1992ej 2 3 (G. Jahukyan, *Conversations on the Armenian Language*, Yerevan, 1992, p. 3).

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր. C T A T Ե H. A R T I C L E S.

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՌՈՒՍԵՐԵՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՈՒՆՆԵՐ ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ
Ավագ գիտաշխատող, ք. գ. թ., դոցենտ
sonmiq20@gmail.com

Համառոտագիր

«Կոնտակտային» լեզվաբանության՝ որպես լեզվում փոխառությունների ուսումնասիրության վերաբերյալ գիտության հիմնական հասկացությունների բնորոշումները (փոխատու լեզու, փոխառու լեզու, հնչյունական հարմարեցում, բառիմաստային փոփոխություն) հստակեցված են: Այդուհանդերձ, դեռևս ոչ լիարժեքորեն է պարզաբանված փոխառության գործընթացում միջնորդ լեզվի դերի և ազդեցության բնորոշման հարցը. արդյո՞ք որպես փոխառության սկզբնաղբյուր պետք է համարել այն լեզուն, որում առկա է նախատիպը, թե՞ լեզուն, որն էական ազդեցություն է ունեցել փոխառվող բառային միավորի ձևի և բովանդակության պլանների փոփոխության վրա:

Աշխատանքում ուսումնասիրվում են ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած արաբերեն ծագման փոխառություններ: Ուսումնասիրության նպատակն է վեր հանել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել արաբերեն բառերի փոխառման և փոխառու լեզվին հարմարեցման ընթացքում, իսկ արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հայերենում արաբերենի միջնորդավորված փոխառությունները գրեթե ուսումնասիրված չեն: Դրանից ելնելով՝ փորձ է արվում զուգադրաբար վերլուծել փոխատու, միջնորդ և փոխառու լեզուներում հնչյունական, ինչպես նաև բառիմաստային դրսևորումներն ու փոփոխությունները: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, միջնորդավորված փոխառությունները հաճախ կրում են միջնորդ լեզվի (լեզուների) ազդեցությունը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. փոխառություն, փոխատու լեզու, փոխառու լեզու, միջնորդ լեզու, բառիմաստային քննություն:

ARABIC BORROWINGS IN THE ARMENIAN LANGUAGE BORROWED FROM RUSSIAN

SONA MIKAYELYAN

NAS RA Institute of Language after H. Acharyan
Senior researcher, Ph.D., Associate professor
sonmiq20@gmail.com

Abstract

The definitions of the basic concepts of “contact” linguistics (source language, borrower language, phonetic adaptation, semantic change, etc.), as a science studying borrowings in a language, have been developed. However, the question of determining the role and influence of the intermediary language in the process of borrowing remains unclear: whether to consider the source of borrowing as the language in which the prototype exists, or the language that had a significant impact on changing the general description of the phonetic structure and semantic content of the borrowed lexical unit.

This paper examines lexical units of Arabic origin that entered the Armenian language through Russian. The purpose of the study is to identify the major changes that have occurred as a result of the borrowing process and assimilation of lexemes of Arabic origin in the Armenian language. The scientific novelty of this study is due to the almost unexplored indirectly borrowed lexemes of Arabic origin in the Armenian language. An attempt is made to comparatively analyze phonetic changes, as well as the semantic field of lexemes in the source language, intermediary language, and the borrower language. The results show that indirectly borrowed lexical units were influenced by the intermediary language.

Key words and phrases: borrowing, donor language, borrowing language, intermediary language, semantic study.

АРАБСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ, ВОШЕДШИЕ ПРИ ПОСРЕДСТВЕ РУССКОГО

СОНА МИКАЕЛЯН

Институт языка им. Р. Ачаряна НАН РА
Старший научный сотрудник, к.ф.н., доцент
sonmiq20@gmail.com

Аннотация

Основные понятия “контактной” лингвистики (язык-источник, язык-рецептор, фонетические адаптации и т.д.), как о науке, которая изучает заимствованные элементы в языке, разработаны. Однако вопрос определения роли и влияния языка-посредника в процессе заимствования остается невыясненным: считать ли источником заимствования язык, в котором присутствует прототип, или же язык, оказавший существенное влияние на изменение плана содержания и плана выражения заимствованной лексической единицы.

В работе рассматриваются лексические единицы арабского происхождения, которые при посредстве русского вошли в армянский язык. Цель исследования - выявить те существующие изменения, которые произошли в результате вхождения и ассимиляции лексем арабского происхождения в армянский язык. Научная новизна исследования заключается в анализе почти не изученных, опосредованно заимствованных лексем арабского происхождения. Делается попытка сопоставительно проанализировать фонетические изменения, а также семантическое поле лексем в языке-источнике, в языке-посреднике и в языке-рецепторе. Как показывают результаты, опосредованно заимствованные лексические единицы часто испытывали влияние языка-посредника.

Ключевые слова и словосочетания: заимствование, язык-донор, заимствующий язык, язык-посредник, семантический анализ.

Ներածություն

Լեզվի բառապաշարը՝ որպես անընդհատ փոփոխվող և զարգացող համակարգ, ներառում է բնիկ և փոխառյալ բառաշերտեր: Փոխառության գործընթացն ընդունված է բաժանել երկու՝ ներքին և արտաքին տեսակների: Ներքին փոխառությունը ենթադրում է ազգային լեզվաշերտերից (բարբառ, ժարգոն) տարբեր միավորների անցումը, ընդգրկումը գրական լեզվի մեջ, իսկ արտաքին փոխառություն ասելով առավել ընդհանուր բնորոշմամբ նկատի է առնվում լեզվական տարրերի (բառ, հնչյույթ, նշանակություն, մոդել) շարժը մի համակարգից մյուսը [9, էջ 13]: Այն տեղի է ունենում լեզվական շփումների հետևանքով, արտալեզվական՝ պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային գործոնների համատեքստում: Հարկ է նշել, որ հասարակության զարգացման տարբեր փուլերում փոխառությունները «ներմուծվում են» լեզվի մեջ ոչ հավասարաչափ, և դրանք գործածողները հասարակության ոչ բոլոր շերտերն են:

«Կոնտակտային» լեզվաբանությունը՝ որպես լեզվաբանական առանձին գիտաճյուղ, զարգացել է XIX-րդ դ. 2-րդ կեսից, երբ գիտնականների հետաքրքրության տիրույթում հայտնվեցին լեզվական շփումները, որոնք դրսևորվում էին խոսողի կողմից մեկից ավելի լեզուների կամ դրանց տարրերի կիրառմամբ: Այս համատեքստում է, մասնավորապես, Է. Սեպիրն իր «Լեզու. խոսքի ուսումնասիրության ներածություն» աշխատության մեջ կիրառել «լեզվական փոխառություն» եզրույթը՝ համարելով, որ փոխառություններն արտահայտություններ են, որոնց միջոցով տեղի է ունենում «լեզվական շփումը» [10, էջ 156]: Արդի փուլում «կոն-

տակտային» լեզվաբանությունը բնութագրվում է միջգիտակարգայնությամբ, քանի որ ուսումնասիրության առարկա են ոչ միայն փոխառությունն ինքնին, այլև այն պայմաններն ու հանգամանքները, որոնց համատեքստում տեղի են ունենում լեզվական շփումները, քանի որ փոխառության գործընթացը չի կարող դիտարկվել հասարակական համատեքստից դուրս:

Ներկայումս «կոնտակտային» լեզվաբանության՝ որպես լեզվում փոխառությունների ուսումնասիրության վերաբերյալ գիտության հիմնական հասկացությունների բնորոշումները (փոխատու լեզու, փոխառու լեզու, հնչյունական հարմարեցում, բառիմաստային փոփոխություն) իրատակ են: Այդուհանդերձ, դեռևս ոչ լիարժեքորեն է պարզաբանված փոխառության գործընթացում միջնորդ լեզվի դերի և ազդեցության բնորոշման հարցը. արդյո՞ք որպես փոխառության սկզբնաղբյուր պետք է համարել լեզուն, որում առկա է նախատիպը, թե՞ լեզուն, որն էական ազդեցություն է ունեցել փոխառվող բառային միավորի ձևի և բովանդակության պլանների փոփոխության վրա [9, էջ 17]: Այս առումով հետազոտողների տեսակետներն ու տարաբնույթ բառարանագրական աղբյուրներում վկայված տվյալները չեն նույնանում: Խոսքը հատկապես բացատրական, օտար լեզուների բառարանների մասին է, քանի որ ստուգաբանական բառարանները, իրենց բնույթով պայմանավորված, առավել հավաստի և հիմնավոր տվյալներ են ներկայացնում:

Հայերենի փոխառյալ բառապաշարի տարբեր շերտեր ներառում են նաև արաբերենից կատարված անմիջական և միջնորդավորված փոխառություններ: Վերջիններիս վերաբերյալ ուսումնասիրություններ գրեթե չեն կատարվել, չեն որոշվել միջնորդ լեզուները, արաբերեն ծագման այս կամ այն բառի՝ հայերենի մեջ թափանցելու ուղիները: Փոխառյալ մի բառաշերտ անվանվում է «արաբապարսկաթուրքական» բառեր կամ օսմանիզմներ: Ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած արաբերեն ծագման բառերին անդրադարձ առհասարակ չի կատարվել: Ուսումնասիրության նպատակն է ներկայացնել այդ բառապաշարը, քանի որ այն հատկապես արդի բանավոր խոսքում հիմնականում կիրառվելի է, որոշել, թե հնչյունական և բառիմաստային ինչպիսի փոփոխություններ են կրել բառային այդ միավորները, և ինչ ազդեցություն է ունեցել միջնորդ լեզուն (լեզուները):

Ուսումնասիրության մեթոդը

Ուսումնասիրությունը կատարվել է լեզուների ուսումնասիրման նկարագրական-վերլուծական, զուգադրական մեթոդներով: Լեզվական նյութը հավաքվել է հայերենի հիմնարար բառարանագրական աղբյուրներից՝ համատարած ընտրանքի սկզբունքով:

Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքեր

Թեև ռուս և արաբ լեզվակիրները միևնույն տարածքում համատեղ երբևէ չեն բնակվել, ռուս-արաբական լեզվական շփումները վաղ շրջանից են սկիզբ առնում: Մի շարք հետազոտողներ դրանց ելակետ են համարում XI-XII դդ., երբ ռուս առևտրականները սերտ առևտրային կապեր էին հաստատել արաբների հետ [8, էջ 6125]: Ավելի ուշ (հատկապես՝ թաթար-մոնղոլական նվաճումների շրջանում) արաբերեն փոխառությունները թափանցել են ռուսերեն թյուրքական լեզուների միջոցով [11, էջ 377]: Սկսած XVIII դ.՝ պետրոսյան բարեփոխումների ընթացքում և հաջորդ հարյուրամյակում, ռուսերենը բավականաչափ արաբերեն բառեր է փոխառել ֆրանսերենից, հոլանդերենից, անգլերենից և արևմտեվրոպական այլ լեզուներից: Տարբեր հաշվումների համաձայն՝ ռուսերենին արաբերենից անցել է ավելի քան 450 բառային միավոր [7, էջ 76]: Դրանք հիմնականում գիտության տարբեր ոլորտներին առնչվող եզրույթներ են, ինչպես նաև առօրյա-խոսակցական բառաշերտի մաս կազմող բառեր: Քանի որ ռուս-արաբական անմիջական շփումներ գրեթե չեն եղել, ռուսերենում արաբերեն բառերի գերակշիռ մասը փոխառվել է թյուրքական և եվրոպական լեզուներով միջնորդավորված: Օրինակ՝ թյուրքական լեզուներից են անցել *հալվա*, *մաղարիչ*, *խալաթ*, ֆրանսերենից՝ *սիրոպ*, *էլիկսիր*, *ժակետ*, *թալիսման*, *արսենալ*, անգլերենից՝ *կոֆե*, *սաֆարի*, գերմաներենից՝ *տարա*, *մապրաս*, *ալգեբրա*, *բալզամ*, լեհերենից՝ *ապրաս*, *ցիֆրա* և այլ բառեր [11, էջ 377-378]:

Նախորդ դարում՝ պատմական հանգամանքների բերումով ձևավորված հայ-ռուսական համակեցության պայմաններում, ռուսերենից բազմաթիվ փոխառություններ են անցել հայերենին. դրանց թվում են նաև արաբերեն ծագում ունեցող բառեր: Ուստի եթե արաբական անմիջական փոխառություններ կարելի է հանդիպել դեռևս միջնադարյան հայ մատենագրության մեջ, ապա ռուսերենով միջնորդավորված բառեր

վկայված են XX դ. 2-րդ կեսի և XXI դ. սկզբի բառարանագրական աղբյուրներում:

Ուսումնասիրության հիմք են հանդիսացել Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը», Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանը», Գ. Զահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանը», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բառարանը», Հ. Հայրապետյանի «Օտար լեզուների բառարանը», «Հայոց լեզվի բարբառային բառարանը» և բառարանագրական այլ աղբյուրներ: Դրանցից առանձնացվել են գրեթե երեք տասնյակ արաբերեն ծագման՝ ռուսերենի միջնորդությամբ հայերենի տարբեր բառաշերտերին անցած բառեր: Ուսումնասիրությունից դուրս են թողնվել հատկական փոխառությունները, նաև բառային այնպիսի միավորներ, որոնց արաբական ծագման վերաբերյալ ռուսերենի ստուգաբանական աղբյուրներում տարակարծություններ կան: Դրանց մի մասը թեև արդի հայերենում ունի համարժեքներ, սակայն փոխառյալ որոշ բառեր զուգահեռ կիրառվում են գրական կամ առօրյա-խոսակցական բառապաշարում:

Արդյունքներ

Ռուսերենի միջնորդությամբ հայերենի տարբեր բառաշերտերին են անցել *ալկոհոլ, արսենալ, ադմիրալ, ալմանախ, ալգորիթմ, ազիմուր, զենիթ, բենզին, սիրոպ, թալիսման, տարա* և այլ բառեր: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, դրանք հայերենին անցել են միջնորդ լեզվի (լեզուների) ազդեցությամբ՝ և՛ ձևի, և՛ բովանդակության պլաններում կրած փոփոխություններով: Մասնավորապես, հիմնականում կորցրել են սեմական լեզուներին բնորոշ եռաբաղաձայն արմատի և նրանից ածանցվող բառակազմական կաղապարների կառուցվածքը: Նաև արաբերենում բառակապակցությամբ արտահայտված միավորները սերտաճել են միմյանց հետ՝ կազմելով բառային մեկ միավոր: Որոշ բառեր միջնորդ լեզուներում ձեռք են բերել նոր իմաստներ, կիրառվել փոխաբերական իմաստներով: Արաբերեն բառերի հնչյունական կազմը ևս մեծապես փոխվել է: Հաճախ միջնորդ լեզվի ազդեցությունն այնքան մեծ է, որ ոչ ստուգաբանական մակարդակում, բառային միավորի պատմական զարգացմանը տեղյակ չլինելու պարագայում արաբական նախաձևերի վերականգնումը բավական բարդ է: Դիտարկենք մի քանի օրինակ. *արսենալ* բառը հայերենում արձանագրված է «զենքի պահեստ,

զինապահեստ» իմաստներով: Ստ. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարան»-ում (այսուհետ՝ ՀԲԲ) տրվում է, որ բառը ռուսերենի միջոցով ֆրանսերենից անցել է հայերենին: Նույնը նշվում է նաև «Օտար բառերի բառարան»-ում (այսուհետ՝ ՕԲԲ): Այլ բառարաններում այն կամ արձանագրված չէ, կամ չի նշվում, թե որ լեզվի միջոցով է անցել հայերենին: Ուշագրավ է, որ բառն առաջացել է արաբերեն *دار الصناعة* (dār uṣ-ṣinā'a) բառակապակցությունից, որը բառացի նշանակում է «արտադրության տուն»: Բառիմաստի լայնացմամբ՝ «զենքի արտադրամաս, պահոց» կիրառությունը ձեռք է բերել անգլերենում՝ անցնելով այլ լեզուների, նաև ռուսերենին, այսուհետև՝ հայերենին: Նկատելի է միջնորդ լեզվի (լեզուների) ազդեցությունը բառի հնչյունական կազմի, քերականական կառուցվածքի, բառիմաստի կրած փոփոխությունների վրա:

Հայերենում արձանագրված մեկ այլ բառ՝ *զենհիթ*, ունի աստղագիտական եզրույթի կիրառություն՝ «երկնքի այն կետը, որ գազաթափայաց ուղղությամբ գտնվում է դիտողի գլխի վրա» իմաստով: Ստ. Մալխասյանցի բառարանում արձանագրվում է, որ այն արաբերեն *سَمَت* (samt) բառն է՝ «ճանապարհ, ուղի» իմաստով, սակայն չի նշվում, թե որ լեզվի միջնորդությամբ է անցել հայերենին: Հատկանշական է, որ բառն աստղագիտական եզրույթի իմաստ ձեռք է բերել արաբերեն *سَمَت الرأس* (samtara's) «ճանապարհ գլխի վրայով» արտահայտությունից, որի երկրորդ բաղադրիչը՝ *الرأس* (ar-ra's), փոխառու լեզուներում դուրս է մղվել: Ինչ վերաբերում է *զենհիթ* բառի այլ՝ «ամենաբարձր դիրքը, որին մարդը կարող է հասնել» կամ «որևէ բանի զարգացման բարձրագույն աստիճանը» փոխաբերական իմաստներով կիրառությանը, ապա այն ձեռք է բերվել ֆրանսերենում, որից անցել է ռուսերենին ու հայերենին [9, էջ 16]: Այս դեպքում ևս կարելի է արձանագրել միջնորդ լեզվի ազդեցությամբ նոր բառիմաստի առաջացումը, բառի փոխաբերական իմաստով կիրառությունները:

Դիտարկենք արաբական նույն՝ *ṣifr* արմատից ծագող երկու բառ՝ *զրո* և *շիֆր*: Հայերենի հիմնարար մի շարք բառարաններում՝ «Միջին հայերենի բառարան»-ում, «Հայերեն արմատական բառարան»-ում (այսուհետ՝ ՀԱԲ), «Հայերեն ստուգաբանական բառարան»-ում, *զրո*

¹ 19-րդ դարավերջին հիմնադրված «Արսենալ» ֆուտբոլային ակումբի անվանումը ծագում է վերոնշյալ բառակապակցությունից. ակումբի առաջին խաղացողները թագավորական զենքի արտադրամասի աշխատակիցներ են եղել:

բառը վկայված չէ: Բառի առաջին՝ *գրո* արձանագրումը հանդիպում ենք Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» քառահատորում, որպես ֆրանսերենի *zéro* ձևից փոխառված. ֆրանսերենին անցել է արաբերենից: Հայերենում կիրառվում է իմաստային բազմազանությամբ՝ «1. տասը թվանշաններից մեկը, 2. ջերմության չափման այն աստիճանը, երբ ջուրը սկսում է սառչել», ունի նաև փոխաբերական իմաստով գործածություն՝ «ոչնչություն, ոչ մի արժեք չունեցող» [5, էջ 4]:

ՕԲԲ-ում նշվում է որպես ֆրանսերենի *zéro* ձևից ռուսերենի միջոցով հայերենին անցած փոխառություն: Բառի արաբական ծագման մասին հիշատակումներ չկան: Նշենք, որ բառը ֆրանսերենին անցել է իտալերենի *zéfiro* ձևից, որն ունի արաբերեն *şifr* նախատիպը [12, էջ 1312]: Նախաիսլամական շրջանում նշանակելով «դատարկ»՝ թարգմանական գրականության (հիմնականում՝ հնդկական փիլիսոփայության) զարգացման շրջանում այն կիրառվել է նաև «զրո» իմաստով, որն աստիճանաբար դարձել է առաջնային իմաստը:

Արաբերեն *şifr* նախատիպից է կազմված մեկ այլ բառ՝ *շիֆր*՝ «ծածկագիր» իմաստով: Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ում այն նշվում է որպես ռուսերենով միջնորդավորված, ֆրանսերենի *chiffre* ձևից անցած բառ՝ «անվան և ազգանվան սկզբնատառերից կազմված փակագետ, 2. գաղտնագիր» իմաստներով: ՕԲԲ-ը նշում է նույնը՝ ավելացնելով «գրանիշ» իմաստը [4, էջ 399]:

Գրական հայերենի «սուրճ» և «սրճարան» բառերի առօրյա-խոսակցական համարժեքներն են համապատասխանաբար *կոֆե* և *կահե* բառերը: Արդի բառարաններից ՕԲԲ-ն նշում է, որ բառը փոխառվել է ռուսերենից, որին անցել է հոլանդերենի *coffie* ձևից: Տրվում է բառի արաբական ծագումը, սակայն նախատիպը չի նշվում: Ստ. Մալխասյանցի ՀԲԲ-ի համաձայն՝ բառի արաբերեն համարժեքն է *kahve* «1. մշտադալար փոքր ծառ կամ թուփ, 2. սուրճի հատիկ» իմաստներով: Հ. Աճառյանի ՀԱԲ-ում որպես «սուրճ» բառի խոսակցական ձև՝ տրվում է *խահուէ* (*խահվէ/ղահվէ*) բառը [2, էջ 319], որը վկայված է Բժշկարանում: Այն ծագում է արաբ. *qahva* բառից²: Դրանից փոխառել են թուրքերենը՝ *qahve* տարբերակով, եվրոպական լեզուները, ռուսերենը:

² Արաբերեն բառի ծագման վերաբերյալ տեսակետները տարբեր են: Մի տեսակետի համաձայն՝ բառը ծագում է արաբերեն *qawwa* «աղքատ» բառից [15, էջ 9]: Միջնադարյան արաբական բառարաններն ավանդաբար արձանագրել են, որ *qahva* բառը նշանակում է

Հատկանշական է, որ հայերենի արևմտյան խմբակցության բարբառային՝ թուրքերենից անցած ձևերում *խախվէ /ղահվէ*³ բառն ունի և՛ «սուրճ», և՛ «սրճարան» իմաստները [3, էջ 160], մինչդեռ արևելյան խմբակցության բարբառներում կիրառվում են ռուսերենից փոխառված առանձին՝ *կոֆե / կոփե* «սուրճ» և *կաֆե* «սրճարան» ձևերը: Վերջինը ռուսերենին անցել է ֆրանսերենի *café* ձևից. այն արաբերենում չկա («սրճարան» բառի համար արաբերենում գործածվում է مقهى (maqha) բառը), ուստի չէր կարող լինել թուրքերենում և նրանից փոխառվել արևմտյան խմբակցության բարբառներում:

Ինչպես կարելի է նկատել, միևնույն նախատիպ ձևը, տարբեր լեզուների անցնելով, ենթարկվում է հնչյունական, բառիմաստային փոփոխությունների, ինչպես նաև միևնույն փոխառու լեզվում, տվյալ դեպքում՝ հայերենի երկու տարբերակներում, տարբեր միջնորդ լեզուներից անցած լինելու հետևանքով ունի հնչյունական և բառիմաստային տարբերություններ՝ պայմանավորված միջնորդ լեզուների ազդեցություններով:

Եզրակացություններ

Միջնորդավորված փոխառությունների բնորոշման և դասակարգման սկզբունքները լեզվաբանական տեսական գրականության մեջ ոչ ամբողջությամբ են պարզաբանված: Սրա հետևանքով միևնույն բառային միավորի ծագման կամ փոխառու լեզվին անցման ուղիների վերաբերյալ բառարանագրական տարբեր աղբյուրներում կարող են արձանագրված լինել տարբեր տվյալներ: Մասնավորապես, մի դեպքում օտար բառի աղբյուր կարող է նշվել այն լեզուն, որում առկա է նախատիպը, այլ դեպքում՝ միայն միջնորդ լեզուն, որն էական ազդեցություն է ունեցել

«գինի»՝ հաշվի առնելով նրա վառ արտահայտված մուգ գույնը և ծագում է qahiya) «ախորժակ չունենալ» բայից [14, էջ 557-558]: Թեև ըստ ստուգաբանության՝ բառի ծագումը կապվում է «գինի» բառի հետ, առավել լայն տարածում ունի այն կարծիքը, համաձայն որի՝ այն ամենայն հավանականությամբ կապված է Եթովպիայի Կաֆա շրջանի անվան հետ, որը բույսի հայրենիքն է: Հատկանշական է սակայն, որ այնտեղ սուրճն այլ՝ bmo անվանումն ունի, որը արաբերենը փոխառել է «հում սուրճ» իմաստով: Ժամանակակից արաբերենում qahwa-ն ունի այդ բոլոր իմաստները՝ «1.սուրճ, 2.սուրճի հատիկ, 3.գինի»: Հատկանշական է նաև, որ «սրճարան» բառի համար գործածվում է այլ՝ maqha բառը:

³ Հայերենի արևմտյան խմբակցության մի շարք բարբառներում, որոնց բառն անցել է թուրքերենից, հանդիպում են այլ զուգաձևեր ևս՝ *խախէ* (Լ.), *կախվա* (Պ.), *կայիֆա* (Վ.) [3, էջ 160]: և այլն:

տվյալ բառային միավորի վրա՝ հանգեցնելով հնչյունական, հաճախ նաև բառիմաստային փոփոխությունների և զարգացումների: Միաժամանակ փոխառու լեզվում միևնույն նախատիպն ունեցող բառային միավորը կարող է փոխառու լեզվում հնչյունական և բառիմաստային փոփոխություններով դրսևորվել՝ պայմանավորված միջնորդ լեզուների ազդեցություններով: Այս պարագայում ոչ ստուգաբանական մակարդակում, բառի պատմական զարգացմանը տեղյակ չլինելու պարագայում բառարանագրական աղբյուրներում երբեմն չի արձանագրվում օտար բառային միավորի ծագումը:

Գրականության ցանկ

1. Aghayan Ed., Ardi hajereni batcatrakan bararan [Explanatory Dictionary of Modern Armenian], Yerevan, 1976.
2. Ačaryan H. Hajeren armatakan bararan [Armenian Root Dictionary], Yerevan, 1973.
3. Ačaryan H., Thurqerenē p'oxareaal barer Polsi haj joghovrdakan lezuin mēj hamematut'eamb Vani, Gharabaghi ev Nor Naghijevani barbarnerun [Turkish Loanwords in the Armenian popular of Constantinople in Comparison with the Dialects of Van, Karabakh, and New Nakhichevan], Moscwua-Vagharshapat, 1902.
4. Hayrapetyan A., Otar bareri bararan [Dictionary of Foreign Words], Yerevan, 2011.
5. Malkhaseants St., Hayerēn bacatrakan bararan [Explanatory Dictionary of the Armenian Language], Yerevan, 1944-1945.
6. Jahukyan G., Hayeren stugabanakan bararan [Etymological Dictionary of the Armenian Language], Yerevan, 2010.
7. Al-Qadimi M. G. Č, Arabskie zaimstvovaniya v russkom yazike [Arabic Loanwords in the Russian Language], Vestnik, VGU, Seriya: Lingvistika i mejkulturnaya kommunikaciya, M., N 1, 2010.
8. Bakhtiyarova A. N., Fatkullina F. G., Arabskie zaimstvovaniya v leksicheskoy sisteme russkogo yazika, Filologicheskie nauki: Fundamentalnie issledovaniya [Arabic Loanwords in the Lexical System of the Russian Language], M., N2, 2015.
9. Gabreeva N., Svetlova R., Lesina G., Arabskie zaimstvovaniya v russkom yazike, voshedshie v yazik pri posredstve frantsuskogo, Filologuiya i kultura [Arabic Loanwords in the Russian Language Borrowed through French, Philology and Culture], 3, 2024.

10. Sepir Ė., Yazik. Vvedenie v izucheniye rechi [*Language: An Introduction to the Study of Speech*], 2025.
11. Ėl'- Sultani M. M. Is., Arabskie zaimstvovaniya v russkom yazike i osobennosti ikh aktualizacii v noveyshiy period, Prepodovatel' XXI vek [Arabic Loanwords in the Russian Language and the Specific Features of Their Actualization in the Most Recent Period, *Prepodavatel XXI vek*], 2018.
12. Tarek A., L'influence linguagière de l'arabe sur le francais contemporain [*The Linguistic Influence of Arabic on Contemporary French*], S., 2022).
13. Kaye, Alan S. "The Etymology of 'Coffee': The Dark Brew." Journal of the American Oriental Society, vol. 106, N. 3,
14. Pendergrast M., *Uncommon Grounds: The History of Coffee and How It Transformed Our World*, Basic Books, 2010
15. Origin and history of coffee, Online Etymology Dictionary <https://www.etymonline.com/word/coffee>, (accessed July 12, 2025).

«ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է Ը. ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ» (ԺԷ ԴԱՐ).

ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
Մ. Մաշտոցի անվան Մատենադարան
ավագ գիտաշխատող, ք. գ. թ.
tigran.sirunian@gmail.com

Համառոտագիր

Քերականական զրուցարանը (քերականական կատեխիզիս) հայերենի քերականության պատմության մեջ հայտնի ժանրային ձև է, այդպիսի գործեր պարունակող մեզ հայտնի ձեռագրերը թվագրվում են ԺԴ-ԺԹ դարերով:

Այս ժանրի՝ ծավալով փոքր գործերը, այսպես կոչված, մանր քերականությունները հազվադեպ են դարձել քննության առարկա, նաև ոչ միշտ է խնդիր դրվել դրանց ամբողջական ուսումնասիրության: «Քերականութիւն է Ը. մասանց բանի» վերնագրով զրուցարանի ուսումնասիրությունը Գ. Զահուկյանը սահմանափակել է մի քանի խոսքի մասերի նկարագրությամբ, ընդ որում՝ նկատի է առել ընտրովի հատկանիշներ, որոնք քննել է մեկ այլ կատեխիզիսի համեմատությամբ: Մենք փորձել ենք հնարավորինս սպառիչ կերպով նկարագրել այս քերականության բնույթը և հիմքում եղած աղբյուրները՝ նպատակ ունենալով որոշակի օրինակով ընդարձակել այդ քերականական ժանրի ճանաչողությունը:

Ուսումնասիրության համար հիմք ենք ընդունել ՄՄ 1916 ձեռագիրը, որը ամենավաղ օրինակն է՝ ամբողջական շարադրանքով և հստակ գրությամբ: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ զրուցարանի հեղինակը (անունը հայտնի չէ) օգտվել է մի շարք աղբյուրներից. գլխավորը Հովհաննես Ծործորեցու քերականությունն է, օժանդակ դեր են կատարել Հովհաննես Երզնկացու, Եսայի Նչեցու, Վարդան Արևելցու, Դավիթ Զեյթունցու գործերը: Աղբյուրների առատությունը հաշվի առնելով՝ այս քերականությունը համարել ենք բանաքաղություն, և քանի որ այն պատկանում է կատեխիզիսի ժանրին, այդպիսով նաև՝ այդ ժանրի ուշագրավ օրինակ: Նկատելի է նաև, որ հեղինակն աղբյուրների տեղեկությունները փոխանցել է ընտրողաբար՝ համառոտագրելով ու մշակելով դրանք և միաժամանակ մատչելի ձևակերպելով իր մեկնությունները: Այդ պարզ ոճը, ինչպես նաև կառուցվածքային որոշ առանձնահատկություններ վկայում են, որ զրուցարանն ունեցել է դասագրքի նշանակություն:

Բանալի բառեր և բառակապակցություններ. մանր քերականություն, քերականական զրուցարան, բանաքաղություն, խոսքի մասեր, աղբյուրներ, Հովհաննես Ծործորեցի, Պրիսցիանոս:

“GRAMMAR OF THE 8 PARTS OF SPEECH” (17TH CENTURY). ITS NATURE AND SOURCES

TIGRAN SIRUNYAN

NAS RA Institute of Language after H. Acharyan,
Matenadaran, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
Senior researcher, PhD
tigran.sirunian@gmail.com

Abstract

The Grammatical Dialogue (Catechesis) is a well-known genre in the history of Armenian grammar. The manuscripts containing such works that are known to us are dated from the 14th to the 19th centuries.

The shorter works of this genre, the so-called minor grammars, have rarely been the subject of study, and a comprehensive examination of them has not always been undertaken. The study of the dialogue titled “*Grammar of the 8 Parts of Speech*” by G. Jahukyan was limited to the description of a few parts of speech, taking into account selected features, which he examined in comparison with another catechesis. We have tried to describe the nature of this grammar and its underlying sources as thoroughly as possible, with the goal of expanding the understanding of this grammatical genre through a specific example of the dialogue.

For the study, we have used manuscript MM 1916 as the basis, which, in addition to being complete, is also the earliest known example and has a clear script. The study has shown that the author of the dialogue, who is anonymous, drew on several sources, the main one being the grammar of Hovhannes Tsortsorets'i, while the works of Hovhannes Yerznkats'i, Yesayi Nchets'i, Vardan Arevelts'i, and Davit Zeytunts'i played a supporting role. Considering the abundance of sources, this grammar can be regarded as a compilation, and since it belongs to the catechesis genre, it is also a remarkable example of that genre. It is noticeable that the author conveyed information from the sources selectively, summarizing and processing it while at the same time presenting his comments in an accessible form. This simple style, as well as certain structural features, indicate that the dialogue served the function of a textbook.

Keywords and phrases: grammatical dialogue, grammar composed on the question-and-answer principle, catechesis, compilation, parts of speech, sources, Hovhannes Tsortsorets'i, Priscian.

**«ГРАММАТИКА 8 ЧАСТЕЙ РЕЧИ» (XVII ВЕК).
ПРИРОДА И ИСТОЧНИКИ**
ТИГРАН СИРУНЯН

Институт языка им. Р. Ачаряна НАН РА,
Матенадаран имени М. Маштоца
Старший научный сотрудник, к.ф.н.
tigran.sirunian@gmail.com

Аннотация

Грамматический диалог (Катехизис) является известным жанром в истории армянской грамматики. Известные нам рукописи, содержащие такие произведения, датируются XIV–XIX веками.

Короткие произведения этого жанра, так называемые малые грамматики, редко становились предметом исследования, и не всегда проводилось их полное изучение. Исследование диалога под названием *«Грамматика 8 частей речи»* Г. Джахукяна было ограничено описанием некоторых частей речи с учетом выбранных особенностей, которые он рассматривал в сравнении с другой катехезой. Мы пытались максимально полно описать природу этой грамматики и содержащиеся в ней источники, с целью расширить знание об этом грамматическом жанре на примере конкретного диалога.

В качестве основы для исследования был принят манускрипт ММ 1916, который, будучи полным, также является самым ранним известным примером и имеет четкое письмо. Исследование показало, что автор диалога, который анонимен, опирался на несколько источников, главным из которых является грамматика Ованеса Цорцореци, а вспомогательную роль сыграли работы Ованеса Ерзнкаци, Есяя Нчеци, Вардана Аревелци и Давида Зейтунци. Учитывая обилие источников, эту грамматику можно рассматривать как компиляцию, а поскольку она относится к жанру катехезиса, также представляет собой заметный пример этого направления. Примечательно, что автор передавал сведения из источников выборочно, суммируя и перерабатывая их, при этом представляя свои комментарии в доступной форме. Этот простой стиль, а также некоторые структурные особенности указывают на то, что диалог выполнял функцию учебника.

Ключевые слова и словосочетания: грамматический диалог, грамматика составленная по принципу вопрос-ответ, катехезис, компиляция, части речи, источники, Ованнес Цорцореци, Присциан.

Ներածություն

Քերականական գրուցարանը (քերականական կատեխիզիս) հայերենի քերականության պատմության մեջ հայտնի ժանր է. Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ամենավաղ օրինակը թվագրվում է ԺԴ-ԺԵ դդ., ուշ շրջանի ձեռագրերի թվագրումները հասնում են մինչև

ԺԹ դարի վերջ [10, էջ 36 և հջ.]: Այս գրուցարանները միավորում է ուսումնական նպատակը, որին հարմարեցված են և՛ կառուցվածքով, և՛ բովանդակությամբ: Քերականությունը սխեմավորելու և խրատի պես մատուցելու ոճը նրանց գլխավոր առանձնահատկությունն է. կազմված են հարց-պատասխանի սկզբունքով՝ որպես ուսուցչի և աշակերտի զրույց: Տեսական նորոյթներ սովորաբար չեն պարունակում, այլ սեղմ և մատչելի ձևով վերարտադրում են հայտնի քերականությունները՝ միաժամանակ մեծ տեղ տալով օրինակներին, այսինքն՝ ամփոփում են քերականության հիմունքները՝ զարգացնելով նրա գործնական իմացությունը:

Այս ժանրային ձևն ունի զանազան դրսևորումներ, որոնք, սակայն, բավարար չափով ուսումնասիրված չեն: Հրատարակվել է միայն Դավիթ Զեյթունցու նշանավոր գրուցարանի բնագիրը [18, էջ 61-187], մյուս գրուցարանները, որ ծավալով համեմատաբար փոքր գործեր են, այսպես կոչված, մանր քերականություններ, հազվադեպ են դարձել քննության առարկա [9, էջ 340-354. 16, էջ 81-110 և հջ.], նաև՝ ոչ միշտ է խնդիր դրվել դրանց ամբողջական ուսումնասիրության:

«Քերականութիւն է Ը. մասանց բանի» վերնագրով¹ գրուցարանի ուսումնասիրությունը Գ. Զահուկյանը սահմանափակել է անվան, բայի, ընդունելության նկարագրությամբ, ընդ որում՝ նկատի է առել ընտրովի հատկանիշներ, որոնք քննել է 17-րդ դարի մեկ այլ կատեխիզիսի համեմատությամբ [9, էջ 344-350]:

Մեր խնդիրն է մանրամասնորեն քննել այս քերականությունը՝ պարզաբանելով նրա բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև առնչությունները այլ քերականությունների հետ, այդպիսով՝ հնարավորինս սպառիչ կերպով պարզել նրա բնույթը և հիմքում եղած աղբյուրները: Նպատակն է որոշակի օրինակով ընդարձակել գրուցարան կոչված քերականական ժանրի ճանաչողությունը:

Տեսամեթոդական հիմքեր

Քերականական այս աշխատությունը Երևանի Մատենադարանում պահվում է մի քանի ձեռագրերում՝ ՄՄ 1782, 76բ-99ա, ՄՄ 1916, 435բ-

¹ Վերնագրի այլ ընթերցում՝ «Քերականութիւն ըստ մասանց բանի» [9, էջ 344]:

461բ, ՄՄ 2286, 99ա-137ա, ՄՄ 2380, 216բ-235բ: Սրանք բոլորը քերականական և այլ նյութերից կազմված ժողովածուներ են. ՄՄ 1782-ը գրվել է 1652-1654 թթ. Կոզլովում [Mayr tsutsak 2009: 1207-1208, 1211-1212], ՄՄ 1916-ը՝ 1633-ին Լվովում [11, էջ 2011a: 537-538, 546-547], ՄՄ 2286-ը և 2380-ը՝ էջմիածնում համապատասխանաբար 1637 և 1635 թթ. [11, էջ 801-803, 1137-1138, 1140], հեղինակն անհայտ է: ՄՄ 1782, 2286, 2380 ձեռագրերում խոսքի մասերից շաղկապի նկարագրությունը թերի է՝ 8 տեսակից տրված է 5-ը, ուստի ուսումնասիրության համար հիմք ենք ընդունել ՄՄ 1916-ը, որը, բացի ամբողջական լինելուց, նաև ամենավաղ օրինակն է մեզ հայտնի ձեռագրերի մեջ և ունի հստակ գրություն:

Ուսումնասիրության մեթոդներ

Այս ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք նկարագրական-վերլուծական և համեմատության մեթոդները:

Արդյունքներ

«Քերականութիւն է Ը. մասանց բանի» երկը, համաձայն իր ժանրի, կազմված է հարց-պատասխանի սկզբունքով. դատելով մուտքի ծանուցումից՝ ստեղծվել է որպես խոսքի մասերի սերտման ձեռնարկ. «Ձքերականին Ը. մասունս բանին ի գործ ածել ի սմա հմտանիս յուսումնասէրս ստուգագոյն» (435բ): Սա հաստատվում է բուն շարադրանքով, որ ամփոփում է խոսքի մասերի իմաստաբանական-ձևաբանական նկարագիրը (առանց օժանդակ թեմաների)²՝ ըստ ավանդական դասակարգման, 8 տեսակների ներքո՝ անուն, բայ, ընդունելություն, հոդ, դերանուն, նախադրություն, մակբայ, շաղկապ:

Հոլովական և անհոլով հատկանիշները, որոնք Թարգմանչից² սկսած դրվել են անվան և բայի հակադրության հիմքում [6, էջ 12, 23], խնդրո առարկա քերականության մեջ դիտվել են ընդհանուր սկզբունք խոսքի մասերի ձևաբանական տարբերակման համար. «Հարցումն: Ո՞րք են հոլովականք: Պատասխանի: Անուն, ընդունելութիւն, [յ]ադ, դերանուն: Հարցումն: Եւ ո՞րք են անհոլովք: Պատասխանի: Բայ, մակբայ, նախադրութիւն, շաղկապ» (անդ):

² Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության հեղինակը, որը, անանուն լինելով, գիտական գրականության մեջ ստացել է Թարգմանիչ անվանումը:

Անվան բնորոշման մեջ այս հեղինակը նորություն չի բերել՝ կրկնելով Թարգմանչից ավանդված սահմանումը. «Անուն է մասն բանի հոլովական մարմին կամ իր նշանակելով» (անդ) [հմմտ. 6, էջ 12]. անվան «հասարակ» և «յատուկ» տեսակները, որ Թարգմանչի սահմանման մեջ կատարում են լրացուցիչ հատկանիշի դեր (մակբայական գործածությամբ՝ «հասարակաբար եւ յատկապէս»), քննել է առանձին՝ ըստ մեկնողական ավանդույթի. «Յատուկ անուանք են, որ զմի իր նշանակեն, որպէս՝ *Աղամ, Սէթ, Երուսաղէմ, Եփրայի*: Իսկ հասարակ զընդհանուրն յայտնէ, որզան՝ *կենդանի, մարդ, քաղաք, գետ*» (անդ) [հմմտ. 2, էջ 139. 12, էջ 169 և հջ.]: Պահպանելով սեռերի ավանդական անվանումներն ու քանակը (արական, իգական, չեզոք, հասարակ, մակաւասար)՝ դրանք տարբերակել է բառային նշանակությամբ կամ բնական սեռի հիմքով. արական՝ «հայր, որդի, ուստր», իգական. «մայր, դուստր, աղջիկ», չեզոք. «տղա, մանուկ, զաւակ» և այլն, «ըստ մեր հայոց լեզուի սովորութեան» (436ա). այս «սովորությունը», որ նկատել էր դեռևս Անանուն մեկնիչը, հետագայում, հատկապես Գրիգոր Մագիստրոսի հանգամանալի դիտողություններով, ճանաչվել ու հավաստվել է մեկնողական գրականության մեջ [2, էջ 139. 7, էջ 238-244 և հջ.]:

Անվան տեսակի, ձևի, թվի նկարագրության հիմքում ևս առաջին մեկնիչներից ավանդված ըմբռնումներն են, որ փոխանցվել են այս գրուցարան հետագա որևէ բանաքաղության (կոմպիլյացիա) կամ դրանից ազդված գործի միջոցով, հավանաբար՝ Հովհաննես Ծործորեցու քերականության: 14-րդ դարի այս քերականը, ինչպես հայտնի է, հաճախ հետևել է իր ուսուցչի՝ Եսայի Նչեցու բանաքաղությանը [4, էջ 68, 83-95]³ (քննվող մասում ևս), սակայն որոշ ոճական բնույթի համընկումներ ենթադրել են տալիս, որ խնդրո առարկա գրուցարանի աղբյուր ծառայել է նրա աշխատությունը: Օր.՝ նախագաղափար տեսակի հոմանիշ հատկանիշները՝ «նախատիպ եւ նախաւրինակ», որ առանձնաբար հիշատակել են առաջին մեկնիչները⁴, համադրել է Նչեցին, սակայն գրուցարանի հեղինակն ըստ երևույթին օգտվել է Ծործորեցու միջնորդ տեքստից. «Նախագաղափար ասի (= կոչի՝ Նչեցի) առաջինն, որ է նախատիպ եւ

³ Եսայի Նչեցու բանաքաղությունն ունի աղբյուրագիտական արժեքը պարունակում է տեղեկություններ առաջին մեկնություններից [1, էջ XIV]:

⁴ Դաւիթ Փիլիսոփան նախագաղափարը մեկնաբանում է որպես «նախաւրինակ», Անանուն Մեկնիչը՝ «նախատիպ» [5, էջ 104. 2, էջ 139]:

նախաարինակ» (անդ) [հմմտ. 13, էջ 107. 4, էջ 201], նաև՝ հարաբարդ տեսակի սահմանումը. «Ի յադեալն (= զադեալն՝ Նչեցի) այլ ինչ յաելուլ՝ է, որ ի սկիզբն, եւ է, որ յանգի (= է, որ ի... յանգի *չիք*՝ Նչեցի)» (437բ) [հմմտ. 13, էջ 113. 4, էջ 209] և այլն: Մի քանի մեկնություններում աննշան տարբերություններով կրկնվում են առաջին մեկնիչների դիտողությունները, բայց դարձյալ որոշ հուշումներ թույլ են տալիս պնդելու նախկին ենթադրությունը. «Իսկ պիտակապէսն՝ ի նախնեացն, քանզի ոչ ի հաւրէ (=քանզի պիտակ հայրանուն կոչի, որ ոչ ի հաւրէ՝ Նչեցի), այլ ի նախնեացն ունի զաճանցական անուն» (436բ) [հմմտ. 13, էջ 108. 4, էջ 202], «Յոքնական տառք են *կեն* եւ *քէ* եւ *ցոյ*, որ գոլով յանգին անուան՝ զբազումս նշանակեն: Բայց կայ ուրեք յանուան (= բայց... յանուան *չիք*՝ Նչեցի) միաւորական նշանակ (= նշան՝ Նչեցի) ի վերայ բազմաց եղեալ՝ առանց *ցոյի* եւ *քէի*, որպէս՝ *պար*, *յոռիմ*, *ամբոխ* (= *յոռիմ*, *պար*, *ամբոխ*՝ Նչեցի) ...» (438բ) [հմմտ. 13, էջ 115. 4 էջ 212] և այլն: Հավանական աղբյուր պետք է համարել սրանց անմիջապես նախորդած քերականի՝ Հովհաննես Երզնկացու բանաքաղությունը, որը, ինչպես հայտնի է, վաղ մեկնությունների համահավաք երկ է և դրանց վերծանման գործում որոշիչ դեր է ունեցել: Այս քերականությունից, օրինակ, կարող է քաղված լինել անվան բաղդատական տեսակը, որ տրված է ըստ Դավիթ փիլիսոփայի, և որի «զոյգ եւ անզոյգ» ձևերը հաջորդական թվարկմամբ չունեն Նչեցին և Ծործորեցին. «Բաղդատականացն են ձեւք երկու՝ զոյգ եւ անզոյգ, որ հասարակութիւն ունի եզ առ մու, նմանասերս, որգոն՝ *Դաւիթ արուորագոյն*, *քան զՍաւուդ*, եւ կամ միոյ առ բազումս այլասեռս՝ *Դաւիթ արուորագոյն քան զքեթացիսն*» (436բ) [հմմտ. 17, էջ 105, 106. 5, էջ 105. 13, էջ 1966: 110.4, էջ 205-206] (այլ օրինակներ՝ ստորև):

Անվան թվի ավանդական վերլուծություններն անտեսված են. եթե, օրինակ, Ծործորեցին հիշատակում է անվան 3 թիվ և հետևելով նախորդ մեկնիչներին՝ իբրև անհարազատ ձև դուրս թողնում երկակի թիվը [4, էջ 211-212], զրուցարանում տրված է միանգամից երկու թիվ՝ «եզական եւ յոգնական» (438ա):

Հոլովների դեպքում հեղինակն ընդունել է Թարգմանչի բաժանումը և անվանումները՝ ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական: Սրանց նկարագրությունը սկսել է՝ ձևաբանական վերլուծության օրինակելի նմուշ տալով. «Նախ եւ առաջ գիտել պարտ է, եթէ կամիմք *զմարդ* հոլովել, թէ *մարդ* անուն հասարակ է եւ ցուցանէ զա-

րական սեռն, զնախագաղափար տեսակն, զպարզ ձեւն, զեզական թին, նոյնպէս եւ զայլ անուան բառսն այս գաղափարաւ ի գործ ածցես եթէ զեզականսն, եւ եթէ զյոքնականսն» (438բ): Հոլովական տիպեր՝ հոլովումներ, ըստ ձևի առանձնացված չեն, մի քանիսի վերաբերյալ պատկերացում են տալիս օրինակները՝ *մարդ-մարդոյ, կին-կնոջ, տղայ-տղայի, Աղամ-Աղմայ* (439ա-440բ), դրանք, ինչպես նկատել է Գ. Ջահուկյանը, «խմբավորված են ըստ իմաստի՝ 1) անձերի հասարակ անուններ, *մարդ, կին, տղայ, իմաստուն, քահանայ, տէր*, 2) կենդանիների հասարակ անուններ՝ *գազան, անասուն, թռչուն*, 3) անձերի հատուկ անուններ՝ *Աղամ, Պեպրոս, Աննա*» [Jahukyan 1954: 345]: Ջահուկյանը նաև քննել է հոլովների կազմության սկզբունքները՝ համեմատությամբ 17-րդ դարի սկզբի մեկ այլ կատեխիզիսի [9, էջ 345-347]: Սրանք ամփոփելով և լրացնելով կարելի է նշել անվան հոլովման հետևյալ առանձնահատկությունները. 1) հոգնակիի -ք վերջավորությունը ընդհանրացվելով կիրառվել է բոլոր օրինակներում՝ տեղիք տալով անկանոնության. *մարդք*, լրացուցիչ ձև կրկնակի վերջավորությամբ՝ *մարդիկք*, նախդրիվ տր.՝ *ի մարդիկքն*, կոչ.՝ *ով մարդիկք* (439ա), նաև՝ որպես հոգնակի հայցականի լրացուցիչ ձև՝ *զմարդիկք* (անդ), 2) *տէր, Պեպրոս* բառերի սեռականը տրված է ածականական *տէրունեան, Պեպրոսեան* ձևերով (339բ, 440բ), 3) տրականը միշտ կազմված է *ի* նախդրով՝ *ի կինն, ի տղայն, ի քահանայ* (439ա-բ)՝ հավանաբար Ծործորեցու քերականության ազդեցությամբ, որտեղ այդ հոլովի համար բերված են միայն նախդրավոր օրինակներ [4, էջ 215], 4) առաքականի լրացուցիչ նախդրավոր ձևն արտահայտվել է *ընդ-ով* և սրա պահանջած տարբեր հոլովներով. *ընդ գազանսն, ընդ անասնով, ընդ քահանայիցն* (439բ-440ա), 5) կոչականը սովորականի պես նման է ուղղականին՝ բացառությամբ մեկ դեպքի, որ հունաբանություն է և տրված է իբրև զուգահեռ ձև. *ով Պեպրէ* (440բ), 6) հոլովման հարացույց են թափանցել խոսակցական ձևեր՝ հիմնականում իբրև լրացուցիչ հոլովաձևեր. *տղի, տղիւ, տղոց, ընդ տիրով* (439ա-բ):

Անվան մյուս տեսակները՝ իսկ, առասական, մակդիր, առինչունակ, իբր առինչունակ, հոմանուն, փաղանուն և այլն (ըստ Թարգմանչի՝ 23 տեսակ), այս քերականությունից դուրս են թողնված:

Բայի նկարագրության մեջ դարձյալ իշխող է քերականական ավանդույթը, ըստ որի՝ տրված են նրա սահմանումը և գրեթե բոլոր բաժանումները: Այսպես՝ «Բայ է բառ անհոլով ընդունական ամանակաց

դիմաց եւ թուոց, որ ներգործութիւն եւ կամ կիր յարկացոցէ», տեսակները՝ «խոնարհմունք, տրամադրութիւնք, տեսակք, ձեւք, թիւք, դէմք, ամանակք, լծորդք», եղանակները՝ «սահմանական, աներեւոյթ, հրամայական, ըղծական, ստորադասական», սեռերը՝ «ներգործութիւն, կիր, միջին», ժամանակները՝ «ներկայ, անցեալ, ապառնի», անցյալի տեսակները՝ «յարաձգական, յարակայ, գերակատար, անորիշ» (441ա-բ) և այլն, թիվը, ինչպես անվան դեպքում, կրճատված է երկուսի՝ «եզական, յոգնական» (442ա):

Սակայն այս մասի աղբյուրները թվում են ավելի բազմազան: Հովհ. Ծործորեցու քերականության դերը շարունակում է զգալի մնալ, որ հաստատվում է ոճական ընդհանրության մի շարք փաստերով: Օր.՝ Հովհ. Երզնկացու բանաքաղության⁵ Դավիթ փիլիսոփային հղված սեռի մեկնությունը Ծործորեցին տվել է սեղմ ձևով, որը նույնությամբ կրկնել է զրուցարանի հեղինակը. «Տրամադրութիւնդ փոխադրութիւն լսի ոչ ի վերայ հաստատութեան, այլ ի վերայ փոփոխման ըստ յերիս յեղանակս» (441ա) [հմմտ. 4, էջ 238, նաև 17, էջ 229. 5, էջ 112]: Նույն կերպ ընդօրինակված են սեռերի սահմանումները. «Հարցումն: Զի՞նչ է ներգործութիւն: Պատասխանի: Ներգործութիւնդ բուն եւ ստոյ զաւրութիւն է ի վերայ ուրուք, յորժամ եւ այլոյ ազդեմ, որպէս՝ *անեմ, կոփեմ, կտրեմ*: Հարցումն: Զի՞նչ է կիր: Պատասխանի: Իսկ կիրդ, յորժամ պարտիմ յումեքէ կամ ծառայիմ այլոց ազդմամբ, այսպէս՝ *կոփիմ, անիմ, սպանանիմ*: Հարցումն: Զի՞նչ է միջին: Պատասխանի: Այն է, որ երբեմն ներործութիւն եւ երբեմն կիր ցուցանեն նովին վանգիւ, յորժամ ձայնն կրաւորական է եւ իրքն ներգործական, որպէս՝ *տանիմ*, եւ կամ յորժամ ձայնն ներործական է եւ իրքն կրաւորական, որպէս՝ *զգենում*: Է եւ այսպէս որպէս ինքդ ասէ՝ *մեռանիմ, տանիմ, խորհիմ*, քանզի *մեռանիմդ* կիր, իսկ *տանիմդ* ներգործութիւն, եւ *խորհիմդ* ներգործութիւն եւ կիր, իսկ *սփածայ* ներգործութիւն եւ կիր» (441բ) [հմմտ. 4, էջ 238, նաև 17, էջ 229. 13, էջ 129]: Լծորդության ուսմունքը, որ բայի կարգերից առավել մանրամասն է նկարագրված (444բ-449բ), ամբողջովին վերարտադրված է այս աղբյուրից, և որ ուշագրավ է՝ շարադրանքի սկզբնական ձևով. հեղինակը բավարարվել է ընդհանուր հարցումով («Է՞ր ասէ՝ լծորդութիւն

⁵ Այս համահավաք քերականությունը Հովհաննես Ծործորեցու երկի գլխավոր աղբյուրն է [4, էջ 63-68]:

է կարգաւոր խոնարհութիւն բայից եւ են լծորդութիւնք շեշտողոր բայից ութ») և չդիմելով այլ տրոհումների, ինչպես ենթադրում է գրուցարանի կառուցվածքը, այդ մեկ հարցման ներքո զետեղել է Ծործորեցու գրեթե ամբողջ մեկնությունը: Այսպես, մուտք. «Լծորդութիւն կոչի ծայնակցաց տառից ելանել յիւրաքանչիւր շարէ՝ տեղի տալով ընկերին մտանել ի լուծ առ ի յարմարութիւն բանին, որպէս՝ *բենն զմենի*, կամ՝ *մենն զպէի*» (444բ-445ա), ավարտ. «Են եւ հոմանունութեամբ լծեալք այլեայլ միտք բանի ի մի բառ, որպէս *կէտ* ասելն, զի նշանակէ *զկէտ* գրոց, եւ զձուկն մեծ, եւ զչափ կենցաղոյս ընթանալ ի *կէտ* կոչմանն, եւ *զկէտ* գարնանային» (449բ) [հմմտ. 4, էջ 246, 259]:

Այս մասում ևս որոշ հատվածներ ուղղակիորեն ընդօրինակված են Հովհ. Երզնկացու բանաքաղությունից, օր.՝ հարակայի, անորիշի սահմանումները՝ ըստ Անանուն մեկնիչի. «Իսկ յարակայն նշանակէ զերկուց աւուրց անցելոց ազդումն կամ զամսոյ միոյ կամ զտարւոյ», «Որպէս անունդ իսկ յայտ առնէ անորոշաբար զամենայն ժամանակս նշանակէ զյարածգական, զյարակայն եւ զգերակատարն» (443ա) [հմմտ. 17, էջ 233. 2, էջ 148] և այլն: Սակայն աղբյուրի արհեստական օրինակներն անտեսված են, ինչպես՝ հարակայի *էգործէի*, *էկուիէի* ձևերի դիմաց տրված են անցյալ կատարյալի ձևեր՝ *շինեցի*, *տաշեցի* (խոնարհման հարացույցի մասին՝ ստորև):

Միաժամանակ նկատելի է 16-րդ դարի քերական Դավիթ Զեյթունցու կատարած խեղճի ազդեցությունը, որն այդ ժանրի ամենանշանավոր գործերից է հայերենի քերականության պատմության մեջ: Զեյթունցին, ինչպես հայտնի է, կարևոր նորություններ է բերել և՛ խոսքի մասերի ընդհանուր բնորոշումներում, և՛ առանձին հարցերի քննության մեջ [9, էջ 276, 333-344]. նրան է պատկանում նաև բայի սահմանական և աներևույթ եղանակների նորովի մեկնաբանությունը, որի հետքերը հանդիպում են խնդրո առարկա երկում: Այսպես, Զեյթունցին նշված եղանակները տարբերել է ժամանակ ցույց տալու կարողությամբ, բայց որպեսզի սահմանականի և ստորադասականի միջև շփոթ չառաջանա, պարզաբանել է, թե «սահմանականն ի ներկայն վերաբերի» [18, էջ 131]. սրա ամփոփումը տեսնում ենք գրուցարանում. «Իբր սահմանաւ ցուցանէ զներկայ ժամանակն եւ զդէմն, որպէս՝ *կու սիրեմ*» (441ա), *փիս*.՝ օրինակ, Ծործորեցու մոտ. «Իբր սահմանաւ եցոյց զդէպ, [զ] ժամանակն եւ զդէմն» [4, էջ 237]: Այլ տեղերում ևս Զեյթունցու քերականությունը ծառայել է

որպես լրացուցիչ աղբյուր և մյուս աղբյուրներին զուգորդված օգտագործվել որևէ իրողության նկարագրության մեջ: Օր.⁶ անցյալի տեսակներից հարաձգականի մեկնությունը քաղված է Երզնկացուց, ապա լրացուցիչ պարզաբանված է ըստ Զեյթունցու. «Յարաձգական նշանակե՛զմասն ինչ ներկային, յորմէ՛ մասն ինչ արարեալ է յիրացն, եւ մասն ինչ առնելոյ է, այս է, որ սկսեալ է եւ դեռեա ոչ է կատարեալ, իբր թէ՛ *դեռ շինէի* կամ *կու շինէի, կու տաշէի, կու հալէի*» (442բ) [հմմտ. 4, էջ 233. 18, էջ 134], գերակատարի մեկնությունը Ծործորեցուց է, տերմինի պարզաբանումը՝ Զեյթունցուց. «Գերակատար, այսինքն՝ առաւելակատար, զանցելոց աւուրց զգործոց աւարտման ազդումն ցուցանէ, որգոն՝ *շինեալ էի, տաշեալ էի, հալեալ էի*» (443ա) [հմմտ. 4, էջ 243. 18, էջ 134] և այլն:

Ինչպես անվան հոլովների դեպքում, խոնարհման ձևերի բուն նկարագրությանը նախորդում է ձևաբանական վերլուծության նմուշ. «Նախ եւ առաջին գիտելի է, զի թէ՛ ասես՝ *կու սիրեմ*, է բայ սահմանական, տրամադրութիւնք՝ ներգործական, տեսակ՝ նախագաղափար, ձեւք՝ պարզ, թիւք՝ եզական, դէմք՝ առաջին, ամանակ՝ ներկայ» (443բ): Խոնարհման հարացույցը, ըստ Գ. Զահուկյանի, համապատասխանում է Ծործորեցու մեկնությանը կցված աղյուսակին և նկարագրվել է նույն աղբյուրին հետևող «նախորդ քերականական կատեխեզիսի զգալի նմանությամբ» [9, էջ 276, 347]⁶: Համադրելով խնդրո առարկա նյութի տվյալները այս աղբյուրների հետ, ինչպես նաև հաշվի առնելով Զահուկյանի դիտողությունները [9, էջ 348-349]՝ կարելի է առանձնացնել խոնարհման ձևերի հետևյալ հատկանիշները. 1) միջինհայերենյան *կու* մասնիկը օրինականացված է՝ ունի կանոնավոր կիրառություն. *կու սիրեմ, կու սիրէի, վաշ թէ՛ կու սիրեմ* (443բ-444ա) և այլն, 2) սահմանականին, ինչպես սահմանման մեջ, հատկացված է ներկա ժամանակը, ընդ որում՝ ներգործականի ձևերը տրված են առանց ժամանակի որոշակիացման, կարծես այն ենթադրեն ինքնին. «Սահմանական, եզ. *կու սիրեմ, կու սիրես, կու սիրէ, բզ. կու սիրեմք, կու սիրէք, կու սիրեն...*» (443բ), մինչդեռ կրավորականի դեպքում՝ «Սահմանականին ըստ ներկայի, եզ. *կու սիրիմ, կու սիրիս, կու սիրի, բզ. կու սիրիմք, կու սիրիք, կու սիրին...*» (444ա), 3) հավանաբար Զեյթունցու քերականության հետևողու-

⁶ Զահուկյանը, հետևելով Ն. Ադոնցին, նույնացրել է Հովհաննես Պլուզ Երզնկացուն և Հովհաննես Ծործորեցուն, որը ևս հայտնի է եղել Երզնկացի անունով. երկու Երզնկացիներին մեկ անձնավորություն ճանաչող վարկածը ավելի ուշ հերքվել է [4, էջ 63-83]:

թյամբ՝ հարական տրված է պարզ կազմությամբ, գրաբարյան անցյալ կատարյալի ձևով, գերակատարը՝ վերլուծական կազմությամբ, իբրև բաղադրյալ ժամանակածն (Ծործորեցու աղյուսակում հակառակն է). *սիրեցի, սիրեցեր, սիրեաց...*, *սիրեալ էի, սիրեալ էիր, սիրեալ էր...* և այլն (443բ) [հմմտ. 18, էջ 134. 4, էջ 326], 4) ինքնատիպ են անորիշին վերագրված ձևերը, որ կազմվել են նախնական ըմբռնումների և հետագա ճշգրտումների համադրմամբ. հեղինակը, տուրք տալով ավանդույթին, անորիշը դիտել է ապառնիին հակված ձև. «անորիշն ընդ ապառնոյն միաբանի» (անդ) [17, էջ 233 և հջ.], իսկ նրա արտահայտման անորոշ կերպը ցույց տալու համար դիմել է կրավորականի գրաբարյան կազմությանը. միաժամանակ հետևելով Ծործորեցուն⁷ այն հավասարեցրել է աներևույթին և տվել դերբայական ձևով. «Անորիշ է, որ եւ ասի աներեւոյթ՝ *սիրել* կամ *սիրեսցի, սիրիցի*» (անդ), 5) կրավորականի *ու(ւ)* ածանցը օրինականացված է, սակայն սահմանափակ կիրառությամբ. ինչպես Ծործորեցու աղյուսակում՝ սահմանական ներկայի, ստորադասականի, ըղծական ներկայի և ապառնիի կրավորականն արտահայտվել է գրաբարյան եղանակով՝ *ե/է*-ի անցմամբ, նաև՝ դերբայական անորիշը, որի կրավորականը Ծործորեցին չի հիշատակել [4, էջ 325-327], այսպես՝ *սիրուէի, սիրուեցի, սիրուեալ էի, սիրուի՛ր, վաշ թէ սիրուել էի* և այլն, բայց՝ *կու սիրիմ, սիրիւ, սիրիմ, վաշ թէ կու սիրիմ, վաշ թէ կու սիրիցիմ* և այլն (444ա-բ):

Ընդունելության նկարագրությունը բավարար չափով հետևողական չէ. հեղինակը մեջբերել է ավանդական սահմանումը. «Ընդունելութիւն է բառ ընդունական բայից եւ անուանց յատկութեանց եւ յարին նմա այսք, որք եւ բային՝ թարց դիմաց եւ ներխոնարիութեանց» (449բ), սակայն շեղվել է սրանից, օրինակ, սեռերի մեկնաբանության մեջ՝ դեմքի և խոնարհման կարգեր վերագրելով չեզոք սեռի ընդունելություններին. «ներգործութիւն, այսինքն՝ *շինող, տնկող*, կիր, որ է՝ *շինեալ, տնկեալ*, միջին, որ երբեմն ներգործութիւն եւ երբեմն կիր ցուցանեն, այսպէս՝ *շինի, տնկի, տանի*» (450ա): Սեռերը սովորական «տրամադրութիւնք»-ից բացի անվանել է նաև «որոշմունք» (անդ), որ կարելի է նոր տերմին համարել: Ժամանակի կարգի ներքո տարբերել է 3 տեսակ, ընդ որում՝

⁷ Հովհաննես Ծործորեցու խոնարհման աղյուսակի առանձնահատկությունների մասին տե՛ս 9, էջ 276-277:

դարձյալ գործածելով դիմավոր ձևեր. «ներկայ, որպէս՝ *կու գործէ, կու շինէ* կամ *շինող*, անցեալ, որպէս՝ *կու գործէի կու շինէի* կամ *շինեալ*, ապառնի, որգոն՝ *կու գործեցից, կու շինեցից* կամ *շինեք*» (անդ). ինչպես նկատելի է՝ անորիշ-աներևոյթին այստեղ ևս հատկացվել է ապառնիի նշանակւոյթուն: Հոլովների նկարագրւոյթունը սովորականի պես սկսել է ձևաբանական վերլուծւոյթան օրինակով. «գիտասցիք, զի *գրող* է տրամադրւոյթինք՝ ներգործական, ամանակ՝ ներկայ, ձեւք՝ պարզ, թիւք՝ եզական» (450բ), ապա տվել է մի քանի բառերի հոլովման հարացոյցը՝ ըստ անվան հոլովական ձևերի⁸:

Հողի սպասարկու դերը, ըստ Զահուկյանի, առաջինը ճանաչել է Վարդան Արևելցին (13-րդ դ.) [9, էջ 254-255], նրա սահմանումը՝ «Յաւոն «կցումն» եւ «միաւորութիւն» կոչի. որպէս ջիւք եւ կապք մարմնոյն, այսպէս եւ յաւո՝ բանի» [3, էջ 132], նույնութեամբ կրկնել է զրուցարանի հեղինակը, բայց նաև ընդարձակելով միտքը և պարզաբանելով հողի քերականական նշանակւոյթունը. «Յաւո կցումն եւ միաւորութիւն լսի, որպէս ջիւք եւ կապ մարմնոյ, սոյնպէս եւ սա՝ կցի եւ միաւորի ի յանուն եւ ի բայ եւ նոքաւք ընդունի զհոլովումն» (451ա): Նախադասական և ստորադասական տեսակները տվել է ըստ Ծործորեցու և տուրք տալով ավանդւոյթին՝ հողը ներկայացրել է խայտաբղետ կազմով, իբրև կոչական բառ՝ *ո, ով*, հարաբերական դերանուն՝ *որ*, ցուցական դերանուն՝ *այս այդ այն*, դերբայ՝ *արարող, արարած* (451ա-բ) և այլն: Սակայն նաև թույլ տալով բռնազբոսիկ կրճատումներ և աղճատելով աղբյուրի տեղեկւոյթունը՝ *որ*-ի կիրառւոյթան մասնավոր դեպքը ընդհանրացրել է բոլոր ձևերի համար, հմմտ. «Եւ ստորադասական է՝ *որ, զի, ըզ*, զի գտանի ի բազում տեղիս՝ զկնի *ոյին որն*, իբր այն. «Ո, որ արարիչդ եք», «Ո, որ զհայելն ինձ» (451ա), «Եւ ստորադասական՝ որ երկուք զուգին, որպէս՝ *որ, զի, ըզ*....: Իսկ *որն* ստորադասական, զի գտանի ի բազում տեղիս զկնի *ոյին որն*՝ իբր այն. «Ո, որ արարիչդ ես ջրոց», «Ո, որ զհայելն ինձ ի կին մարդ ծանր գրեցեր» [4, էջ 264]: Նույն աղբյուրից ելնելով, որը շարունակում է մեկնողական ավանդւոյթը, կոչական բառերին և ածական դերբային վերագրել է սեռերի տարբերակիչ գործառւոյթ. ար.՝ «ով Գրիգոր», «արարող», իգ.՝ «ո Մանի», «արարած», չգ.՝ «արարուած» (451ա-բ) [հմմտ. 4, էջ 264-265]: Բացի այս՝ վերջադիր ն-ն, որը Ծործորեցին այլ տեղում հիշել

⁸ Ընդունելւոյթան հոլովման մասին տե՛ս նաև 9, էջ 349-350:

է իբրև հայերենին հատուկ ձև, ի տարբերություն սկզբնադիր իգական և արական հոդերի, զրուցարանի հեղինակը, խմբագրելով աղբյուրի կառուցվածքը, միացրել է չեզոք սեռի մեկնությանը և ըստ երևույթին համարել նրա ցուցիչ. «Սակայն յաւարտս զյաւդդ ունիմք յոքնագոյն, իբր՝ *ծովային, երկրային, ցամաքային, արքայական, տէրունեան* եւ որ սոյն-պիսիք: Քանզի վասն առատութեան լեզուիս մերոյ եւ գրոյ ոչ կարատիմք ըստ այլոց ազգաց նախադասեալ զյաւդ» (451բ) [հմմտ. 4, էջ 263]: Թվի կարգում կատարած ճշգրտմանը հետևելով՝ անտեսել է երկակի թիվը. «Հարցումն: Քանի՞ են թիւք: Պատասխանի: Երկու, եզական՝ *այս, այդ, այն*, յոքնական՝ *այսք, այդք, այնք*» (անդ): Հոլովման հարացուցում տվել է նաև անսովոր կամ խոսակցական ձևեր, ինչպես՝ հոգն. սեռական՝ *այսոց*, (նաև՝ *այսոցիկ*), առաքական՝ *այսովք* (նաև՝ *այսոքիք*), հայցական՝ *զայսք*, հոշական՝ *ովայսք* (452ա):

Դերանունը Հովհ. Ծործորեցու քերականության մեջ, ավանդական սահմանմանը զուգահեռ, բնորոշվել է նաև որպես հատուկ անվանը փոխարինող բառ. «Սահմանի և այսպէս՝ դերանուն է մասն բանի յոլովական, եղեալ ի տեղի յատուկ անուանն, ստոյգ զդէմն նշանակէ» [4, էջ 267]: Անձնանշության հատկանիշը բացակայում է հունատիպ սահմանումներում և ամենայն հավանականությամբ լատինական ծագում ունի. հմմտ. Պրիսցիանուս. “Pronomen est pars orationis, quae pro nomine proprio uniuscuiusque accipitur personasque finitas recipit” [14, էջ 577], (թրգմ.՝ «Դերանունը խոսքի մաս է, որը կիրառվում է յուրաքանչյուր հատուկ անվան փոխարեն և ստանում է ստույգ դեմքեր»)⁹: Ծործորեցու այս սահմանումը որոշ շարադասական փոփոխություններով արտացոլված է խնդրո առարկա զրուցարանում (դարձյալ որպես լրացուցիչ տարբերակ). «Դերանուն է մասն բանի հոլովական, եղեալ յատուկ ի տեղի անուան, որ յատուկ եւ ստոյգն զդէմն նշանակէ» (անդ). «յատուկ» բառի դիրքի փոփոխությունը, որը առանցքային է այս սահմանման մեջ, կարող է լինել անփոյթ արտագրության հետևանք, բայց հավանական է նաև, որ քերականը այդպիսով փորձել է դերանվան նորովի մեկնաբանությունը չհակադրել ավանդականին: Հետագա շարադրանքը կառուցված է հին ըմբռնումների հիման վրա, հատկապես Ծործորեցու երկի միջնորդությամբ, որ արտահայտվել է մեկնությունների ընդհանուր ոճով, օր.՝

⁹ Ավելին տե՛ս 15, էջ 62-68:

սեռերի անհարազատության պարզաբանման մեջ. «Սերք դերանուն ծայ-
նիւ ոչ նշանակին ասացեալ ի մերում լեզուիս, եւ ո՛չ՝ ի յունին» (անդ)
[հմմտ. 4, էջ 269, նաև 17, էջ 256. 13, էջ 153 և հջ.] և այլն: Ի տարբերու-
թյուն աղբյուր ծառայած քերականության՝ դերանվան երկակի թիվը
հայտնի ճշգրտման արդյունքում անտեսված է, ապա նաև մեծ տեղ է
տրված հոլովման ձևերի նկարագրությանը: Ըստ որդեգրած սկզբունքի՝
նախ բերված է դերանվան ձևաբանական վերլուծության նմուշ. «Եթէ *ես*
դէմն առաջին, տեսակ՝ նախագաղափար, ձեւք՝ պարզ, թիւք՝ եզական»
(452բ): Հոլովման հարացույցն ընդգրկում է այսպես կոչված «նախագա-
ղափար» և «ածանցական» մի շարք դերանուններ. *ես, դու, նա, սա, դա*,
ապա՝ *իմ, քո, նորա* (452բ-453բ). այս վերջինը, որ ենթակա չէ թեքման,
ընդհանուր կանոնի ներքո արհեստականորեն հոլովվել է. «Եւ սա է ա-
ծանցական եզական. ուղղական՝ *նորա*, սեռական՝ *նորայոյն* կամ *նո-
րայն*, տրական՝ *նորայում*, առաքական՝ *նորայովն*, հայցական՝ *զնորա*:
Բազմաւորական. ուղղական՝ *նոցա*, սեռական՝ *նոցունց*, տրական՝ *նո-
րայումք*, առաքական՝ *նորայովք*, հայցական՝ *զնոքս*» (453բ):

Նախադրություն կոչված խոսքի մասը ևս նկարագրված է բանա-
քաղության սկզբունքով: Այսպես, նախադրության մեկնությունը և նրան
վերագրվող մասնիկների խումբը տրված են ըստ Դավիթ փիլիսոփայի և
Համամ Արևելցու, որոնց մեկնությունները ամփոփել է Հովհ. Երզնկա-
ցին. «Նախադրութիւն ասի նախադիր այնր աղագաւ, զի նախ եղեալ
լինի, քան զանուն եւ զբայ, եւ քան զբնաւ տեղիս, իբրեւ զսպասաւոր: Իսկ
զի ոչ է, քան զսոսա պատուական, աստանաւոր անցեալ ունի զխոնարհ
տեղի», «Այլ ըստ իւրաքանչիւր բառիցն հետեւման դիցուք եւ բանս
լուծման գտանելով ի սովորաբար ասացելոց. *ներ. որպէս՝ ներգործել,*
ներծայնել, արտ. արտակացեալ, արտաբերեալ, արտ. արտախաւսիմ,
արտադարիմ, ապ. *ապաւար, ապաքինիչ...*» (454ա-բ) [հմմտ. 17, էջ 258-
260. 5, էջ 118. 8, էջ 267]: Ամփոփման մեջ ի հայտ են գալիս մի քանի
աղբյուր: Նախադրություն համարվող ածանցների և նախդիրների
կապակցական դերի գնահատականը, որ իբրև հեղինակային տեսակետ
տրված է առաջին դեմքով, դարձյալ քաղված է Երզնկացուց. «Իսկ զի
ասէ, թէ ըստ բարդութեան եւ ըստ բաղդասութեան, ինձ այսպէս թուի, թէ
յասացելոց բառիցն ոմանք բարդեալ միայն են ընդ անուն կամ ընդ բայի,
իբր զաւելորդ ի զարդ միայն եւ ոչ ի լրումն թերութեան, իսկ ոմանք բա-
ղդասեալ են, այսինքն՝ միաղասեալն ի շարն եւ ի դաս եւ ի կարգ

բանիցն պիտանացու առ ի լրումն» (455ա) [հմմտ. 17, էջ 1983: 261-262]: Սրան կցվել է ետադաս նախադրությունների մասին դիտողությունը Ծործորեցու ձևակերպմամբ. «Եւ զի ասէ ստորադասք են ի սոցանէ երեք՝ *սակս, կից, որդ.* սակս այսորիկ ասէ, զի մինդ եւ նախդիր կարէ լինել եւ ստորադիր, յորժամ ասիցես՝ *սակս քո* եւ *ի քո սակս*, իսկ երկուսդ՝ ստորադիր միայն, իբր՝*դրակից, հաղորդակից, ժառանգորդ, յաջորդ*» (անդ) [հմմտ. 4, էջ 278]: Սակայն այս պարբերությունը եզրափակող տողը՝ «քանզի հմտագունիցն ի մատեանս աստուածայինս դիւրին է զսոսա գտայ» (անդ), Ծործորեցու քերականության մեջ բերված է այլ տեղում՝ նախադրություն համարված մասնիկների խմբի տակ՝ իբրև դրանց մեկնություն [4, էջ 278]: Ջրուցարանի հեղինակը, ըստ երևույթին, հետևել է Նչեցու մեկնության կառուցվածքին, որտեղ այդ տողը, ինչպես զրուցարանում, հաջորդում է ետադաս նախադրությունների թվարկմանը [13, էջ 156]: Մինչդեռ նախադրության մեկնությունը «ըստ բարդութեան եւ ի բաղդասութեան», այսինքն՝ բառի կազմում իբրև ածանց և կապակցության մեջ իբրև նախդիր գործածվելու ունակության, ուղղակիորեն չի հանգում որևէ աղբյուրի. նյութը ավանդական կերպով կառուցվել է *վաղդուր* օրինակի վրա, սակայն ոճական որոշակի ինքնուրույնությամբ և առավել դյուրացված. «Բարդութիւնդ ի սակաւաբանութեան վերայ ասի, յորժամ պարզ բառ լինի, որպէս՝ *դուր*, այս պարզ բառ է, իսկ յորժամ ասես՝ *վաղդուր*, բարդեցեր ի վերայ զմիսն, եւ յորժամ աւելուս ի վերայ զխնդիրն, լինի բաղդասութիւն, յորժամ ասես՝ *վաղվաղակի դուր զգիրքն* եւ զայլ ինչ: Եւ այսպիսի բառիցս դատումն առնես եւ տեսանես, թէ որն է ոճով բարիոք դնել» (454ա) [հմմտ. 4, էջ 277, նաև 17, էջ 259, 13, էջ 155. 3, էջ 139-140 և հջ.]:

Ավանդույթը լրացնող էական դիտողություններ մակբայի մեկնություններում չեն հանդիպում: Հեղինակը բավարարվել է հայտնի տեղեկությունների վերաշարադրմամբ. «Մակբայ է մասն բանի անխաղաց՝ ստոր բայի ասացեալ կամ մակասացեալ բայի» (455ա), հաջորդող մեկնությունների ոճական նմանություններից դատելով՝ իբրև միջնորդ տեքստ ձեռքի տակ ունեցել է Ծործորեցու քերականությունը. «Քանզի մակբայդ լսի կրկնաբայ կամ որպէս ինքդ ասէ՝ բայ ի վերայ բայի ասացեալ: Եւ զի անխաղաց ասէ վասն այն, զի ոչ հոլովի իբր զանուն եւ ոչ խոնարհի իբր զբայ: Իսկ ասելն ստորաբայի ասացեալ կամ մակասացեալ բայի, իբր թէ ասես՝ *զայս ստոր շինեմ* կամ *մակ շինեմ զայս*» (455ա-բ) [հմմտ. 4,

էջ 279, նաև 17, էջ 1983. 13, էջ 156-157. 3, էջ 140 և հջ.]: Հետագա շարադրանքը կառուցված է մեկ այլ աղբյուրի, հավանաբար Նչեցու տեքստի տրամաբանությամբ: Այս քերականը տրոհել է մակբայի սահմանումը («Մակբայ է մասն բանի անխաղաց» / «Ստոր բայի ասացեալ կամ մակասացեալ բայի»)՝ օժտելով առանձին մեկնություններով, երկրորդ մասին կից տվել է կառուցվածքային տեսակները՝ «պարզք» և «ջուկադիրք», որոնց ներքո՝ իմաստային հիմքով առանձնացված 35 տեսակները [13, էջ 152-162]: Զրուցարանի հեղինակը աղբյուրի ոչ ճշգրիտ ընթերցման հետևանքով մակբայի՝ դեռևս Թարգմանչից հայտնի 35 տեսակները հասցրել է 36-ի. «Հարցումն: Քանի՞ են մասունք մակբայի: Պատասխանի: Երեսուն եւ վեց» (455բ): Այսպես, սահմանման երկրորդ մասի մեկնությունը դիտված է իբրև մակբայի առաջին տեսակ. «Առաջին. ստոր կամ մակբայի» (456ա), այնուհետև տրված են կառուցվածքային տեսակները. «Եւ մակբայիցս ոմանք պարզք են եւ ոմանք ջուկադիրք» (անդ), որոնց հաջորդում է իմաստային մյուս 35 տեսակների թվարկումը՝ «ամանակի յայտնիչ»-ից մինչև «մոլութեան»-ը (456ա-459ա), այսինքն՝ խախտվել է նաև շարադրանքի հետևողականությունը:

Շաղկապի՝ Թարգմանչից հայտնի սահմանումը՝ «Շաղկապ է մասն բանի, որ կապէ զտրամախոհութին ոճով եւ զմեկնութեան փեռեկումն յայտնէ»¹⁰, քերականը մեկնել է ավանդական կերպով, բայց նաև որոշ ինքնուրույնություն ցուցաբերելով բառընտրության մեջ. «Քանզի բառս այս, որ է շաղկապ, վասն զի ինքն զինքն կու յայտնէ, այսինքն՝ շաղէ եւ միաւորէ եւ ի մի ոճ կապէ՝ խառնելով զբառ ընդ բառ եւ զցրուեալ կամ զփեռեկեալ բառից զմեկնութիւն յայտնէ» (459ա) [հմմտ. 4, էջ 296-297, նաև 17, էջ 280. 13, էջ 162-163. 3, էջ 149-150 և հջ.]: Մեկնողական ավանդույթով է սահմանափակված նաև շաղկապի 8 տեսակների նկարագրությունը. «ջուկամանք, անջատականք, բաղմատք, տարբաղմատք, փաստաբանականք, տարակուսականք, բաղբանականք, թարմատարք» (459բ-461բ), և դարձյալ ոճական ընդհանրությունները մի քանի աղբյուրներ են մատնանշում, հաճախ միևնույն մեկնության մեջ: Այսպես, «ջուկաման» կոչված տեսակի սահմանման սկիզբը հիշեցնում է Երզնկացու մեկնությունը, հմմտ. «Ջուկամանդ շարաման կամ ժողով լսի» (459բ), «Ջուկամանք են, այսինքն՝ շարամանեալ, որ ասի ժողով» [Yerznac'i 1983:

¹⁰ Սկզբնօրինակից տարբերությունն աննշան է [6, էջ 35]:

281], շարունակությունն ընդօրինակված է Ծործորեցուց. «քանզի զմիաբանութին երկուց երեսաց առ իրեարս ածեալ ցուցանէ» (անդ) [հմմտ. 4, էջ 298, նաև 17, էջ 1983: 281. 13, էջ 163. 3, էջ 150-151 և հջ.]: Անջատականի սահմանումը տրված է Ծործորեցու ոճով. «Անջատական ընդդէմ է ջոկամանց, զի զատումն է դիմաց եւ ոչ մտաց, քանզի զմիտս իրին ոչ բաժանէ, այլ յատուկ գդէմսն որոշէ» (անդ) [հմմտ. 4, էջ 1984: 298, նաև 17, էջ 282. 13, էջ 164. 3, էջ 151 և հջ.], մինչդեռ անջատականների թվարկումն ամփոփված է Համամ Արևելցու դիտողությամբ, ամենայն հավանականությամբ Հովհ. Երզնկացու բանաքաղությունից ընդօրինակված. «Եւ սա բաժանի ի մասունս երեք՝ կամ, եւ կամ, եւ կամ թէ, ի խորհուրդս ինչ խտրոցին դնելով զկամն այսպիսի կերպի...» (անդ) [հմմտ. 17, էջ 282. 8, էջ 281]: *Բաղմատ* շաղկապը ևս մեկնված է ըստ Երզնկացու. ինչպես աղբյուրում՝ գրուցարանում բերված է Անանուն Մեկնիչի պարզաբանումը. «սոքա ոչ գոյութին, այլ գործ ինչ յայտնեն» (460ա) [հմմտ. 17, էջ 282. 2, էջ 154], որն ամփոփված է Երզնկացու արդեն ինքնուրույն դիտողությամբ. «Եւ այսոքիկ շաղկապ ի խաւսս եւ ի գիրս սուրբս դիւրաւ ճանաչին» (անդ) [հմմտ. 17, էջ 283] և այլն:

Այս գրուցարանը, սակայն, հաճախ առանձնանում է ինքնուրույն ոճով, որ թույլացնում է նրա կախումն աղբյուրներից: Նախ շարադրանքը ավանդական վերլուծություններով ծանրաբեռնված չէ, զուտ նկարագրական է, որ երևում է հատկապես հիմնական աղբյուրի՝ Ծործորեցու քերականության համեմատությամբ: Այսպես՝ ա) մեկնությունները կրճատված և պարզեցված են, օր.՝ «Հարցումն: Ո՞րք են պարզ ձեռք: Պատասխանի: Որ զմեկնակ պարզաբար անուն նշանակէ, որպէս՝ *Պեպրոս*» (437ա-բ), «Եզական է, որ զմի իր նշանակէ, որպէս՝ *մարդ*...: Բայց բազմատրական, որ զբազումս նշանակէ՝ *մարդք*» (438ա) [հմմտ. 4, էջ 209, 211-212] և այլն: Բ) Ծործորեցու մոտ մեկնելի թեմաները՝ «բան»-երը, տրված են նախնական՝ սկզբնագրային ձևով և պարունակում են հունաբանություններ. սրանք գրուցարանում խմբագրված են, հմմտ. «Բայաձական է, որ ի բայէն ածանցեալ է» (437ա), «[ԲԱՆ] Բայաձական է, որ յըմբայէ ածանցոցեալ է» [4, էջ 208], սակայն ոչ հետևողական կերպով (տե՛ս հաջորդ օրինակը): Գ) «Բան»-ը և բուն մեկնությունը համառոտագրված են մեկ պատասխանում, օր.՝ հմմտ. «Գերադրական է մակսաստութին, այս է, որ յոյժ առաւելութեամբ է ածանցեալ, միոյ առ բազումս յարառոցեալ ըմբաղդատութեամբ» (անդ), «[ԲԱՆ] Եւ գերադրական է մակսաստու-

թին՝ միոյ առ բազումս յարառոցեալ ըմբաղդատութեամբ...: [ՄԵԿՆՈՒ-ԹԻԻՆ].... Ձի գերադրական է, որ յոյժ առաւելութեամբ է ածանցեալ» [4, էջ 206-207]: Երբեմն նաև «բան»-ը անտեսված է, ինչպես, օրինակ, անվան «փաղաքշական» կոչված տեսակի մեկնության մեջ. «Փաղաքշական է, որ է ողորականն, որ զնուագութիւն իրացն ցուցանէ առանց համեմատութեան» (անդ) [հմմ. 4, էջ 207]: Ընդհանրապես աղբյուրի տեղեկությունները տրված են սեղմ ձևով՝ ըստ էական համարված հատկանիշների, օր.՝ «Յարանուն ասի, (+ զի ըստ առաջին վանգին միաբանի, իսկ վերջին փաղառութեանն զանազանի՝ Ծործորեցի.) որ (փ/ս. որպէս ինքն՝ Ծործորեցի) քերթողական արուեստիւ ի նախքին անունն յարեցուցանէ, իբր՝ *յառաքինութենէ առաքինի...*» [հմմտ. 4, էջ 208] և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով ուսումնասիրությունը՝ նախ պետք է ընդգծել զրուցարանի աղբյուրների առատությունը: Դրանց մեջ գլխավորը Հովհաննես Ծործորեցու քերականությունն է, օժանդակ դեր են ունեցել Հովհաննես Երզնկացու, Եսայի Նչեցու, Վարդան Արևելցու, Դավիթ Ձեյթունցու գործերը:

Հեղինակը հետևել է Թարգմանչի և առաջին մեկնիչների ըմբռնումներին՝ դրանք ներկայացնելով հետագա նշանավոր քերականների միջնորդությամբ և մեկնությամբ՝ ըստ այդմ փորձելով մեկտեղել քերականական ավանդույթը և մեկնողական լավագույն միտքը:

Մի շարք աղբյուրների առկայությունը թույլ է տալիս այս քերականությունը համարել բանաքաղություն, և քանի որ այն պատկանում է կատեխիզիսի ժանրին, այդպիսով նաև՝ այդ ժանրի ուշագրավ օրինակ:

Այդուհանդերձ, ընդօրինակված նյութը մատուցվել է որոշակի ինքնուրույնությամբ, հիմնականում ոճական բնույթի. հեղինակն աղբյուրների տեղեկությունները փոխանցել է ընտրողաբար՝ համառոտագրելով ու մշակելով դրանք և միաժամանակ մատչելի ձևակերպելով իր մեկնողական պատասխանները: Երբեմն նաև նյութը բավարար խնամքով չի մշակվել, ինչի հետևանքով խախտվել է շարադրանքի հետևողականությունը, նույնիսկ թույլ են տրվել բովանդակային աղճատումներ:

Այդ պարզ ոճը, ինչպես նաև կառուցվածքային որոշ առանձնահատկություններ (հատկապես կայուն կերպով հանդիպող քերականական վերլուծության օրինակելի նմուշները) անշուշտ ծառայում են ուսուց-

ման նպատակին՝ հաստատելով, որ զրուցարանն ունեցել է դասագրքի նշանակություն:

Գրականության ցանկ

1. Adonts N. Yerker [Works], vol. 3. Yerevan: YSU, 2008.
2. Ananum Meknic՝ k՛erakanin [Anonymous Author՝s Commentary]. Adonts N. Yerker [Works], vol. 3, 123-156. Yerevan: YSU, 2008.
3. Arevelc՛i V., Meknut՛iwn k՛erakani [Commentary on Grammar]. comp. by Y. Melqonyan. Los Yerevan: Armenian SSR Academy of Sciences, 1972.
4. Corcorec՛i Yovh., Hamarōt tesut՛yun k՛erakani [A Brief Theory of Grammar].comp. by L. Khacherian. Los Angeles: Alco Printing Co., 1984.
5. Dawt՛i P՛ilisop՛ayi Meknut՛iwn k՛erakani[Commentary on Grammar by David the Philosopher]. Adonts N. Yerker [Works], vol. 3, 77-124. Yerevan: YSU, 2008.
6. Dionisios, Aruest k՛erakani [Te Art of Grammar].Adonts N. Yerker [Works], vol. 3, 1-76. Yerevan: YSU, 2008.
7. Grigori Magistrosi ew Kitōnti vordwoy Vasakay Martirosi Meknut՛iwn k՛erakani[Commentary on Grammar by Grigor, Master and Chamberlain, son of Vasak the Martyros]. Adonts N. Yerker [Works], vol. 3, 221-249. Yerevan: YSU, 2008.
8. Hamamay Arewelc՛woy Meknut՛iwn k՛erakanin[Hamam the Oriental's Commentary on Grammar]. Adonts N. Yerker [Works], vol. 3, 251-285. Yerevan: YSU, 2008.
9. Jahukyan G., Qerakanakan ew ughagrakan achkhatutyunnery hin ew mijnadaryan Hayastanum (X-XV dd.)[Grammatical and Orthographic Works in Ancient and Medieval Armenia (V–XV c.)]. Yerevan: YSU, 1954.
10. Manukyan T., Katekhizisayin qerakanutyunnery XIV-XVII dd. hayeren dzeragrurum[Catechismal Grammars in the Armenian Manuscripts of XIV-XVII Centuries]. Banber Yerevani hamalsarani; Banasirutyun, 2013,140.2: 34-40.
11. Mayr tsutsak hayeren dzeragrats Mashtotsi anvan Matenadarani [General Catalogue of Armenian Manuscripts of the Mashtots Matenadaran]. vol. 5, comp. by O. Yeganyan. Yerevan: Nayiri, 2009; vol. 6, ed. by G. Ter-Vardanean. Yerevan: Nayiri, 2011;vol. 7, ed. by G. Ter-Vardanean.Yerevan: Nayiri, 2011.
12. Movsesi K՛erdoli Meknut՛iwn k՛erakanin [Moses Qerdogh՛s Commentary on Grammar]. Adonts N. Yerker [Works], vol. 3, 157-179. Yerevan: YSU, 2008.
13. Nēec՛i Y., Verlucut՛yun k՛erakanut՛ean [Analysis of Grammar]. comp. by L. Khacherian. Yerevan: Armenian SSR Academy of Sciences, 1966.
14. Prisciani Institutionum Grammaticarum Libri I-XII, ed. M. Hertz, Leipzig: 1855.

15. Sirunyan T., Latinereni qerakanutyun azdecutyun nmushner Hovhannes Tsorcoretsu “Hamarōt tesut‘yun k‘erakani” ashkhatutyun mej [Examples of the influence of Latin Grammar in the Work of Hovhannes Tsortsoretsi “A Brief Theory of Grammar”]. *Lezu ev lezvabanutyun*, 2021, 1(24): 62-68.
16. Sirunyan T., Manukyan T., “Sahman k‘erakanut‘ean”: arajin hunalatinatip manr qerakanutyuny (17-rd dar) [“Definitions of Grammar”: The First Brief Grammar of the Greek-Latin Type (17th century)]. *Banber Matenadarani*, 2020, 29: 81-110.
17. Yerznkac‘i Yovh., Havak‘umn Meknut‘yun k‘erakani [Collection of Commentary on Grammar]. comp. by L. Khacherian. Los Angeles: Alco Printing Co., 1983.
18. Zeyt‘unc‘i D., Meknut‘iwn k‘erakani [Commentary on Grammar]. comp. by Y. Melqonyan. Los Yerevan: Armenian SSR Academy of Sciences, 1981.

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

ԺԵՍՏԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԿԱՆ-ԽՈՍՔԱՅԻՆ ՆՇԱՆ ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

բ.գ.դ., պրոֆ.

ash.galstyan@mail.ru

Համառոտագիր

Մարդու հաղորդակցությունը չի սահմանափակվում միայն խոսքային լեզվով: Հաղորդակցմանն ուղեկցող շարժումները, դիմախաղերն ու ոչ լեզվական մյուս արտահայտչամիջոցներն ուսումնասիրող գիտությունը կոչվում է շարժաբանություն (կինեսիկա):

Խոսքին փոխարինող կամ լրացնող բաղադրիչ են ժեստերը, որոնք մարդու ներաշխարհը, հույզերը, մտադրությունն ու վերաբերմունքն արտահայտելու հզոր միջոցներից են: Ժեստը լիարժեք լեզվական-խոսքային նշան է, որն ունի իր իմաստը, կառուցվածքը և հաղորդակցական գործառնությունը:

Ժեստը մարդու մարմնի, հատկապես ձեռքի և գլխի շարժում է, որն օգտագործվում է երկխոսության ընթացքում որոշակի իմաստ կամ տեղեկույթ փոխանցելու համար:

Լեզվաբանության և հաղորդակցական տեսության մեջ ժեստը դիտվում է որպես նշանային համակարգի մաս: Այն ունի նշանային բնույթ, քանի որ արտահայտում է իմաստ և հաղորդակցում, ինչպես նաև ունի հատուկ նշանակություն տվյալ մշակույթում: Հայերը այլ ժողովուրդների նման ունեն տասնյակ շարժանշաններ:

Ժեստը, ինչպես մյուս նշանները, բաղկացած է արտահայտչաձևից՝ մարմնի որոշակի շարժումից, և բովանդակությունից՝ իմաստից, որը փոխանցվում է շարժման միջոցով (ձեռքի ժեստ, գլխի ժեստ):

Ժեստերը բազմազան են և կարող են դասակարգվել ըստ տարբեր չափանիշների՝ իմաստային, ուղեկցող, հուզական, մշակութային և այլն:

Բանալի բառեր և բառակապակցություններ. Ժեստ, լեզվական-խոսքային նշան, հաղորդակցություն, ձեռքի և գլխի ժեստեր, լեզվաբանության տեսություն, նշանային համակարգ, արտահայտչաձև և բովանդակություն, դասակարգում:

THE GESTURE AS A LINGUISTIC-SPEECH SIGN

ASHOT GALSTYAN

Dean of the Faculty of Philology at ASPU

Doctor of Philological Sciences, Professor

ash.galstyan@mail.ru

Abstract

Human communication is not limited solely to verbal language. The science that studies the gestures, facial expressions, and other non-linguistic means of expression that accompany communication is called kinesics.

Gestures serve as components that either replace or complement speech; they are powerful means of expressing a person's inner world, emotions, intentions, and attitudes. A gesture is a complete linguistic-speech sign that possesses its own meaning, structure, and communicative function.

A gesture is a movement of the human body, particularly of the hands and head, used during dialogue to convey a specific meaning or piece of information.

In linguistics and communication theory, the gesture is viewed as part of a semiotic (sign) system. It possesses a symbolic nature because it expresses meaning and communication, and it holds specific significance within a given culture. Like other nations, Armenians possess dozens of motion signs (gestures).

Like other signs, a gesture consists of a form of expression (a specific body movement) and content (the meaning conveyed through that movement, such as a hand gesture or a head gesture).

Gestures are diverse and can be classified according to various criteria: semantic, accompanying, emotional, cultural, and more.

Keywords and phrases: gesture, linguistic-speech sign, communication, hand and head gestures, theory of linguistics, sign system, form of expression and content, classification.

ЖЕСТ КАК ЛИНГВИСТИКО-ВЕРБАЛЬНЫЙ ЗНАК

АШОТ ГАЛСТЯН

декан филологического факультета АГПУ

д. филол. н., проф.

ash.galstyan@mail.ru

Аннотация

Человеческая коммуникация не ограничивается вербальным языком. Наука, изучающая движения, мимику и другие нелингвистические средства выражения, сопровождающие общение, называется кинесикой.

Жесты являются компонентом, заменяющим или дополняющим речь, и одним из мощных средств выражения внутреннего мира человека, его эмоций, намерений и

отношения к чему-нибудь. Жест – это полноценный лингвистико-вербальный знак, имеющий свое значение, структуру и коммуникативную функцию. Он представляет собой движение человеческого тела, особенно рук и головы, используемое во время диалога для передачи определенного смысла или информации.

В лингвистике и теории коммуникации жест рассматривается как часть знаковой системы. Он имеет знаковую природу, так как выражает смысл и коммуникацию, а также имеет особое значение в культуре конкретного народа. Армяне, как и другие народы, обладают десятками жестов.

Жест, как и другие знаки, состоит из формы выражения – определенного телодвижения, и содержания – смысла, передаваемого посредством этого телодвижения (жест рукой, жест головой).

Жесты разнообразны и могут быть классифицированы по различным критериям: смысловые, сопроводительные, эмоциональные, культурные и т. д.

Ключевые слова и словосочетания: жест, лингвистико-вербальный знак, коммуникация, жесты руками и головой, лингвистическая теория, система знаков, форма выражения и содержание, классификация.

Ներածություն

Ժեստը երկխոսության արտաքին տեսողական բաղադրիչ է: Մարմնի առանձին մասերի շարժումներն ու այլևայլ դիրքերը, ինչպես նաև առոգանական ծայնային երևույթները դառնում են ունկնդրի վրա ազդելու և ներգործելու կարևոր գործոն:

Հսկայական գրականություն է գրվել ժեստերի վերաբերյալ: Որոշ հեղինակներ տարբերակում են երկու կարգի ժեստեր՝ ոչ նշանային, որոնք լինում են դիմային և զգայական, և նշանային: Ոմանք մարմնի տարբեր ժեստերը համարում են խոսքի տեսողական ուղեկիցներ, որոնք ուժեղացնում են խոսքի հուզական ներգործությունը: Ժեստը մեծ մասամբ տեղեկատվություն է պարունակում և որպես այդպիսին՝ շարժանշան է և հաղորդակցական գործառնություն ունի: Ժեստերը, ըստ ֆիզիկական բնույթի, կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ձեռքի և գլխի: Հաղորդակցության արտահայտության այդպիսի ձևերը աշխարհի ժողովուրդների մոտ ունեն մշակութային արժեք և կարող են արտահայտել տարբեր իմաստներ:

Ուսումնասիրության մեթոդներ

Սույն հոդվածում կիրառվել են լեզվաբանական մի շարք մեթոդներ՝ նկարագրական, կառուցվածքային, ոճաբանական:

Ուսումնասիրել ենք բնագրերի ժեստային համակարգի տարրերը

(ժեստերը), տեքստի ձևի ու բովանդակության կապերը, քննել ենք այդ տարրերի հարաբերությունների հնարավոր տեսակները:

Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքեր

Աշխատանքի շարադրման սկզբնաղբյուր են հանդիսացել ինչպես հայ լեզվաբանների, այնպես էլ արտասահմանյան հեղինակների՝ թեմային առնչվող հետազոտությունները:

Արդյունքներ

Լեզուն համակարգ է տարբեր հարացույցներով: Լեզվաբանները գտնում են, որ լեզվական այդ համակարգը կարելի է ընկալել որպես մի մակրոկոսմոս, որի ամեն մի տարր միկրոկոսմիկական ձևով վերարտադրում է այդ ամբողջության կառուցվածքը:

Լեզվական որոշ միավորներ նշանային համակարգի տարրեր են, որոնք կարելի է դիտել նշանային գործընթաց կամ նշանային գործառություն: Լեզվական նշանները դինամիկ համակարգ են, այսպես ասած՝ գործառություն, որից դուրս լեզվական և խոսքային բևեռները միակողմանի վերացարկումներ են:

Ըստ Է. Աթայանի՝ նշանն առաջին հերթին իմացաբանական «հականշան» է՝ նշանի կարծես դրսից ներս ուղղված հայելակերպ «ընթերցում» [1, էջ 264]:

Խոսքային հաղորդակցման արտաքին տեսողական նշաններ են ժեստը և դիմախաղը: Սրանք վերջին հաշվով պայմանական նշաններ չեն: Նշանային համակարգերը արձանագրում են անվերջանալի աստիճանավորում, որտեղ լեզվական համակարգն ու նրա տարրերը իրենց գործուն գոյաձևերով գրավում են և՛ կենտրոնական, և՛ միջին դիրք և դառնում այսպես կոչված խորհրդանշային կազմավորումներ:

Ժեստը՝ որպես լեզվական-խոսքային նշան, ունի հաղորդակցական գործառություն: Ժեստերը և առոգանական ձայնային երևույթները դառնում են ունկնդրի վրա ազդելու և ներգործելու կարևոր ցուցիչներ:

Դեռևս երկու հազար տարի առաջ Յիցերոնը հռետորներին սովորեցնում էր համապատասխան ժեստեր գործածել: Ինչպես նշում է Շեքսպիրի Համլետը, շարժումների բառերիդ համապատասխանեցրու և բառերը՝ շարժումներիդ [12, էջ 65]:

Ժեստերի առաջին բառարանը պատկանում է հռոմեացի հռետոր Մարկոս Ֆաբիոս Կվինտիլիանոսին, որն ապրել է մ.թ.ա. առաջին դա-

րում: Զոն Բալիվերը 17-րդ դարում երկու գիրք է հրատարակել նվիրված մարդկային ժեստերին:

1872 թ. լույս տեսավ Չ. Դարվինի «Կենդանիների և մարդկանց զգացմունքային արտահայտությունը» աշխատությունը, որը խթան հանդիսացավ հետագա ուսումնասիրողների համար [2, 1953]: Ժեստերի նկարագրության վերաբերյալ արժեքավոր են ֆրանսիացի ռեժիսոր Դելսարտի աշխատությունները: Դելսարտի համակարգը 20-րդ դարասկզբին Ռուսաստանում տարածեց Ս. Վոլկոնսկին «Արտահայտիչ մարդ» գրքում: Նախորդ դարում մեծ հետաքրքրություն է առաջացել ժեստի գիտական ուսումնասիրության բնագավառի նկատմամբ: Հրատարակվել են վեց մեծ մենագրություններ: Հետաքրքրություն են առաջացրել Դ. Էֆրոնի, Մ. Կրիչլի, Չ. Մորիսի աշխատությունները: Ամերիկյան հոգեբան Ֆ. Սելժը «Ճշմարտություն ժեստի մասին» գրքում հավաստում է, որ զրույցի ժամանակ բառերի կարևորությունը 7% է, հնչերանգինը 38% է, իսկ ժեստինը և դիմախաղինը՝ 55 %: Անգլիացի հոգեբան Արչելի տվյալներով մեկժամյա զրույցի ընթացքում ֆիննը օգտագործում է միջինը մեկ ժեստ (նա նույնիսկ աչքերի հաղորդակցությունն է փախցնում), իտալացին՝ ութսուն, ֆրանսիացին՝ հարյուր քսան, մեքսիկացին՝ հարյուր ութսուն, ռուսը՝ քառասուն:

Ռուս նյարդահոգեբան Ա. Լուրիան «Նեյրոհոգեբանության հիմունքներ» գրքում նշում է, որ մարդու շարժումները համեմատաբար միայն առանձին դեպքերում են կատարվում մեկ ձեռքով: Որպես կանոն՝ դրանք պահանջում են երկու ձեռքերի համակարգված աշխատանք, որը կարող է լինել տարբեր աստիճանի բարդության [11, էջ 186]:

Հայերը այլ ժողովուրդների նման ունեն տասնյակ շարժանշաններ:

Ֆ. Խլղաթյանի «Ռճաբանական տերմինների բառարան-տեղեկատու»-ում շարժաբանություն տերմինը բացատրվում է հետևյալ կերպ. «Հաղորդակցմանն ուղեկցող շարժումները, դիմախաղերն ու ոչ լեզվական մյուս արտահայտչամիջոցներն ուսումնասիրող գիտություն (կինեսիկա)» [10, էջ 134]:

Հայ լեզվաբանության մեջ շարժաբանությունը որպես գիտակարգ առաջինը քննել է Գ. Զահուկյանը: Լեզվաբանը ընդգծում է, որ շարժանշանները կարող են լինել պայմանական և ոչ պայմանական: Ըստ Գ. Զահուկյանի՝ որոշ շարժանշաններ գործել են այս կամ այն ժողովրդի մեջ՝ որոշակի մշակութային շրջանում: Դրանց մի մասը պայմանական

բնույթ է կրում, օրինակ՝ գլխի շարժումը վերից վար իբրև հաստատման նշան՝ «այո՛», (աջ) ձեռքի շարժումը իրենից հեռու՝ որպես հեռացման նշան՝ «տա՛ր», «հեռացրո՛ւ», «գնա՛»» [9, էջ 118-124]: Այս կարգի շարժանքները երբեմն ուսումնասիրվում են որպես հարալեզվական միավորներ:

«Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն» գրքում Ժեստերին մի ամբողջ ենթագլուխ է հատկացրել Թ. Ղարաբյուլյանը [5, էջ 115-119]: Հեղինակը տարբերակում է Ժեստերի երկու խումբ՝ այսպես կոչված՝ ոչ նշանային, որոնք լինում են դիմային և զգայական, և նշանային: Ուղիղաձև Ժեստերն ընդգծում են տրամաբանական շեշտերը, իսկ զգայական Ժեստերը ուժեղացնում են խոսքի զգայական երանգավորումը: Նշանային Ժեստերը առավել կապված են տեղեկության հաղորդման հետ:

Ժեստերի լեզվին անդրադարձել է նաև Լ. Հախվերդյանը [7, 176-180]: Նա մարմնի տարբեր Ժեստերը համարում է խոսքի տեսողական ուղեկիցներ, որոնք ուժեղացնում են խոսքի հուզական ներգործությունը: Գիտնականն առանձնացնում է Ժեստի երեք տեսակ.

ա) մեխանիկական Ժեստեր (խոսելիս քորում է գլուխը, աչքերը ճաճպացնում, տեղ է որոնում ձեռքերը թաքցնելու համար),

բ) նկարագրական Ժեստեր (առարկայի մասին խոսելիս նրա կլորությունը ցույց տալը),

գ) հոգեբանական Ժեստեր (ծայնի հնչերանգը, մարդու կեցվածքը, դեմքի արտահայտությունը):

Վ. Համբարձումյանը «Լեզվաբանության հիմունքներ» գրքում նշում է, որ «հաղորդակցում նշանակում է տեղեկացնել (հաղորդել-ստանալ) ինչ-որ բան՝ որևէ պահանջի բավարարման նպատակով» [8, էջ 359]: Նա շարժումները համարում է հնչյունային կամ ձայնային լեզվին ծառայող միջոցներ:

Ժեստի գործածությանը, նրա դրսևորման միջոցներին է անդրադարձել Ե. Գևորգյանը: Հեղինակն ընդգծում է, որ շարժումների լեզուն իրականացվում է հինգ գլխավոր միջոցներով՝ Ժեստ, մարմնաշարժում, դիմախաղ, կեցվածք, քայլվածք: Ժեստն առավելաբար տեղեկատվություն է պարունակում և որպես այդպիսին լեզվական-խոսքային նշան է և հաղորդակցական գործառնություն ունի: Ըստ հեղինակի՝ Ժեստերը լինում են հնավանդ և նորավանդ: Հնավանդ Ժեստերի օրինակներ գտնում ենք

«Սասնա ծռեր» էպոսում: Դրանք առավելաբար կրոնական-պաշտամունքային բնույթի են [6]:

Մեր տարբեր աշխատանքներում անդրադարձել ենք ժեստերի մի շարք տեսակների, որոնք առանձնացրել ենք գեղարվեստական և գեղարվեստավերագրական արձակից [4, էջ 91-95. 3, էջ 162-164]:

Նշենք միայն, որ վերոնշյալ ժանրերում առկա են ողջույնի, հրաժեշտի, բարեկամության, ամոթի, զարմանքի, բարկության և մի շարք այլևայլ հասկացություններ արտահայտող շարժույթներ, որոնք, հանդես գալով իբրև խոսքի արտաքին տեսողական բաղադրիչներ, միաժամանակ խոսքին լրացնող, օժանդակող միջոցներ են:

Ձեռքի ժեստեր: Ձեռքսեղմումն ունի տարբեր իմաստներ. այն կարող է արտահայտել՝

ա. ողջույն, ծանոթացում, բարևում,

բ. հրաժեշտ, բաժանում,

գ. շնորհավորանք, գոհունակություն, շնորհակալություն,

դ. ցավակցում:

Ըստ հուշագրական արձակի՝ թարգմանիչը Հ. Թումանյանի և ամերիկացիների հանդիպման ժամանակ կարևորել է. «Լա՛վ և ուշադիր մտիկ տվեք նրա հայերեն խոսքին. ես թարգմանում եմ միայն իմաստը, մնացածը՝ բացականչություններ, շարժումներ, ժպիտ, դուք պետք է ավելացնեք, որպեսզի ստանաք ամբողջությունը» [13, էջ 140]: Այս ամենը կարելի է կոչել նաև խոսքի ոճական դրսևորումներ:

Երկխոսություններում առկա են ձեռքի ժեստերի այլ դրսևորումներ: Ձեռքի ժեստերի մեջ ակտիվ մասնակցություն ունի բթամատը: Օրինակ՝ «Բթամատը դրեց ճկույթի եղունգին.

-Էսքան չմտածես: Գնանք Պառլո Մակինցյանենց տուն»¹:

«-Սեր կա, համա էս անտերը չկա,- ասաց նա՝ բութն ու ցուցամատը իրար շփելով»:

Դեռ Հին Հռոմում բութ մատի գործածությունն էական նշանակություն է ունեցել մարդկանց դրական և ժխտական վերաբերմունքն արտահայտելու համար: Ռ. Ջովանյոլիի «Սպարտակ» վեպի երկխոսություններում կան բութ մատի ժեստային օրինակներ:

¹ Համապատասխան նմուշ-օրինակները քաղել ենք գեղարվեստական և գեղարվեստական-վավերագրական արձակից:

Ձեռքով որևէ բան ցույց տալը - ցուցական դերանվանը համարժեք է . «-Ես այս մագերը այս վանքի մեջն եմ սպիտակացրել,- նա ձեռքը տարավ դեպի գլուխը»:

Ձեռքով նշան անել – «անհամաձայնություն արտահայտել» - «Մի օր Վարպետին հարցրի.

-Մի՞թե էաչին վերջնականապես հրաժարվեց քաղաք տեղափոխվելուց:

Վարպետը ձեռքով նշան արեց, որից հասկացա իմ հարցի պատասխանը»:

Ձեռքերը վեր պարզել - «լռելու նշան արտահայտել» - «Ձեռքերս վեր պարզեցի Մովսես մարգարեի նման՝ որպես լռության նշան»:

Մալը (ցուցամալը) շրթունքին դնել - «լռել, չխոսել» - «Հետո մատով ցույց տվեց կառապանին, ապա մատը՝ շրթունքին... այս նշանակում էր չխոսել...»:

Մալով որևէ բան ցուցադրել - «Որպեսզի ունկնդիրներն իրեն սխալ չհասկանան, նա մատով օդի մեջ դնում էր ստորակետ»:

«Վիկտորիա» ժեստը ձեռքի ցուցամատի և միջնամատի օգնությամբ V տառի պատկերումն է, որը շատ երկրներում խորհրդանշում է հաղթանակ կամ խաղաղություն: Սակայն Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում և Ավստրալիայում եթե ձեռքի ավել V նշանով թեքված լինի դեպի զրուցակիցը, ապա այն կունենա «հեռու մնա ինձանից» նշանակությունը:

Գլխի ժեստեր: *Ամենապարածվածը գլխով համաձայնության նշան անելն է* - «համաձայնություն արտահայտել» - «Անտուանը գլխով համաձայնության նշան արեց, ժպտաց և մնաց լուռ», «Մյուսները գլխով համաձայնության նշաններ են անում», «Խոշոր, սպիտակ աչքերը ինկան վար, եւ իր գլխու շարժումը ըսավ թէ «այո» էր պատասխանը»: «Ազատը նայեց ինձ, նայեց նկարին, նորից ինձ նայեց, *ես գլխի թեթև շարժում արի*»: «Լևոնյանը ուշադիր նայեց ինձ և գլխով հավանության նշան արեց»:

Գլխով հերքել- «անհամաձայնություն ցուցաբերել» - «-Չեմ հավատում,- գլխով հերքեց բավականին վիատված», «Ես նրան հավատացնում էի, որ դա սխալ տպավորություն է, որ երիտասարդությունը նրան շատ է գնահատում, բայց նա *գլուխն օրորում էր*»: *Գլուխ խոնարհել*- «հրաժեշտ տալ» - «Ես խոնարհեցի *գլուխս* և դուրս եկա նվիրական

խցից»։ Գլուխն ասիների մեջ առնել՝ «տառապել, մտորել» - «Գլուխդ ա՛ն ասիներիդ մեջ և սուզվի՛ր անհուն վշտի մեջ»։ Գլուխ տալ-ողջունել։

Ոչ պայմանական են համարվում մարմնի շարժումները (մասնավորաբար ձեռքերի և դեմքի), որոնք հանդես են գալիս որպես հոյզերի արտահայտիչներ, և որոնցով դրսևորվում են համապատասխան հոգեկան գործընթացներ։ Զարմանքը, սարսափը, ուրախությունը, բարկությունը և այլն արտահայտվում են գլխի (աչքեր, բերան, դեմք) շարժանքի համապատասխան փոփոխություններով։

Գլխի ժեստերի մեջ հատկանշական է նաև աչքերի արտահայտությունը։ Աչքերով հաղորդակցումը երկխոսության բաղադրամասերից է։ Օրինակ՝

«Ինքն ու Սնջոն աչք աչքի կանգնեցին։ Սնջոյի աչքերն ասում էին. «Միրո՛, դու թուլիոգի ես»։

Իր աչքերի մեջ պատասխան ուներ.

«Քու կողմից սխալմունք է» »։

Ժեստերը, լինելով լեզվական-խոսքային նշաններ, առանձնահատուկ երանգ են հաղորդում խոսքային գործունեությանը և համարվում են երկխոսության արտաքին տեսողական բաղադրիչներ։ Ժեստի ընտրությունը պայմանավորված է՝

1. մարդու անհատականությամբ,
2. զրուցակիցների հաղորդակցման հարաբերությամբ (պաշտոնական, մտերմիկ, պատահական և այլն),
3. հաղորդակցման իրավիճակով։

Ժամանակակից աշխարհում, հատկապես մեդիայի և թվային հաղորդակցության պայմաններում ժեստերը շարունակում են պահպանել իրենց կարևորությունը։ Տեսազանգերը, սոցիալական ցանցերը և տեսանյութերն իրենց մեջ ներառում են լեզվական-խոսքային տարատեսակ շարժանշաններ։

Եզրակացություն

Ժեստը ոչ միայն ֆիզիկական շարժում է, այլև լեզվական-խոսքային նշան։ Մարդկանց հաղորդակցությունը իրականացվում է նաև ժեստերի միջոցով, որոնք ուղեկցում են խոսքին, լրացնում, հարստացնում, երբեմն նույնիսկ փոխարինում նրան, օրինակ՝ լռության պայմաններում։ Ժեստը միշտ ուղղված է հաղորդակցման գործընթացին։ Ժեստերը բազմազան են և կարող են դասակարգվել ըստ տարբեր չափանիշների։ Ժեստերի

ուսումնասիրությունը կարևոր է լեզվաբանության, հոգեբանության և հաղորդակցական տեսության համատեքստում:

Գրականության ցանկ

1. Atayan E., Lezvakan ashkharhi nerqin kerpavorum'y yev artaqin veraberutyun'y [The Internal Conceptualization of the Linguistic World and Its External Relations][, Yerevan, 1981.
2. Darwin Ch., Viraženiye emotsiy u cheloveka i zhivotnykh, Sochineniya, t. 5, M., 1953 [The Expression of the Emotions in Man and Animals, Collected Works, Vol. 5, Moscow, 1953].
3. Galstyan A., Gegharvestakan vaverragrutyun lezun, Girk B [The Language of Literary Documentation, Book B], Yerevan, 2021:
4. Galstyan A., Yerkkhosut'yun'y zhamanakakit's hayerenum (, Dialogue in Modern Armenian], Yerevan, 2003.
5. Gharagyulyan T., Zhamanakakits hayeren khosakts'akan lezun [Colloquial Language of Modern Armenian], Yerevan., 1981.
6. Gevorgyan E., Sharzhumneri lezun, Sharzhabanutyun [The Language of Movement, Kinesiology], Yerevan, 1988.
7. Hakhverdyan L., Zruyts'ner lezvi masin, [Conversations about Language], Yerevan, 1982.
8. Hambardzumyan V., Lezvabanutyun himunk'ner [Principles of Linguistics], Yerevan, 2019.
9. Jahukyan G., Zhamanakakits hayereni tesutyun himunkner'y [Principles of the Theory of Modern Armenian], Yerevan, 1974.
10. Khlghatyan F., Votshabanakan terminneri bararan-teg'hekatu [Dictionary–Reference of Stylistic Terms], Yerevan, 1977:
11. Luriya A., Osnovy neyropsikhologii, M., 2003 [Foundations of Neuropsychology, Moscow, 2003].
12. Shakespeare W., Yerker, Hamlet [Shakespeare, W., Collected Works, Hamlet], Yerevan, 1991.
13. Tumanyanə zhamanakitsneri husherum [Tumanyan in the Memoirs of His Contemporaries], Yerevan, 1967.

ՀԱՅԵՐԵՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱԶԳԵՆ ՀԱՄԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
գլխավոր գիտաշխատող
Բ. Գ. Պ., պրոֆ.
hambardzumyanvazgen01@aspu.am

Համառոտագիր

Հայերենի բառապաշարի պատմական ուսումնասիրության մի ոլորտ է արմատի (արմատական բառի) ծագումնային բնույթի որոշումը (ստուգաբանությունը): Այս ոլորտում դեռևս կան միավորներ, որոնց ծագումը մնում է չբացահայտված, այլև որոշ դեպքերում, նկատի ունենալով տվյալ գիտության ձեռքբերումները, հարկ է լինում կատարել լրացումներ կամ վերանայումներ: Այս դեպքում նման քննության են առնվում հայերեն *պաղ-* (*պաղպաջուն*), *փեյրուր*, *փիճի* («մի ծառատեսակ. սոճի»), (*ս*)*փիռ* // (*ս*)*փիռ* («փռել, տարածել. փռվածք») և *փուռն* «(հացի) փուռ» միավորները: Հայերենի ստուգաբանական բառարաններում դրանք համարվում են կա՛մ անհայտ ծագման, կա՛մ ոչ բավարար չափով ստուգաբանված բառ(արմատ)ներ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. արմատաբանություն, ստուգաբանություն և տիպաբանություն, հայերեն անհայտ ծագման բառեր, արմատի վերականգնում, ստուգաբանական ճշգրտում և լրացում:

ARMENIAN ETYMOLOGIES V. G. HAMBARDZUMYAN.

NAS RA Institute of Language after H. Acharyan
Chief Researcher, Doctor of Philology, Professor
vazgengurgeni@mail.ru
hambardzumyanvazgen01@aspu.am

Abstract

One of the fields within the historical study of the Armenian lexicon is the determination of the origin of roots (etymological analysis). In this domain, there remain lexical items whose origin is still unresolved; moreover, in light of the achievements of contemporary scholarship, certain cases require clarification or revision of earlier interpretations. The present study examines the Armenian units *pal-* (*palpaĵun*) ‘shining, bright; clear’, *p’etur* ‘feather,’ *p’iči* ‘a type of tree: pine’, (*s*)*p’ir* // (*s*)*p’iwr* ‘to spread, to extend; spreading’, *p’uʾn* ‘stove, (bread) oven’. In Armenian etymological dictionaries, these words (roots) are regarded either as being of unknown origin or as insufficiently substantiated in their etymological interpretation.

Keywords and phrases: etymology, historical-comparative and typological analysis, Armenian words of unknown origin, root reconstruction, etymological clarification and revision.

АРМЯНСКИЕ ЭТИМОЛОГИИ ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Институт языка им. Р. Ачабяна НАН РА
Главный научный сотрудник, д. ф.н., профессор
vazgengurgeni@mail.ru
hambardzumyanvazgen01@aspu.am

Аннотация

Одной из областей исторического изучения словарного состава армянского языка является определение происхождения корня (этимологический анализ). В данной сфере до сих пор сохраняются единицы, происхождение которых остается невыясненным; более того, с учетом достижений современной науки в ряде случаев возникает необходимость внесения уточнений и пересмотра прежних интерпретаций. В настоящей работе предметом подобного анализа являются армянские единицы *լիւն*- (*լիւնլիւն*) [pał- (pałrajun)] ‘блестящий, сверкающий; ясный’, *լիւննի* [p’etur] етур ‘перо», *լիւնի* [p’iči] ‘порода дерева: сосна’, (*լիւն* // (*լիւն* [(s)p’ir // (s)p’ir] ‘«рассилать, распространять; рассилание», *լիւն* [p’ur] «(хлебная) печь». В этимологических словарях армянского языка данные слова (корни) рассматриваются либо как единицы неизвестного происхождения, либо как недостаточно обоснованно истолкованные.

Ключевые слова и словосочетания: этимология, историко-сравнительный и типологический анализ, армянские слова неизвестного происхождения, реконструкция корня, этимологическое уточнение и дополнение.

Ներածություն

Հնդեվրոպական լեզուների մեջ վերջին ժամանակներս հայերենի ստուգաբանական-տիպաբանական քննության նոր խնդիրներ են առաջ քաշվում՝ ամենից առաջ, օրինակ, կապված պայթական բաղաձայնների համակարգի, այսպես կոչված, «տեղաշարժի» հետ, ըստ որում առաջարկվում է վերանայել այդ համակարգը՝ առավելապես հիմք ընդունելով հայերենի համապատասխան տվյալների հնատիպությունը (արխաիկությունը) (տե՛ս 9, էջ 7-8 և այլն): Այդուհանդերձ, ավելի լայն քննությունը ցույց է տալիս, որ մի շարք խնդիրներ մնում են չլուծված, քանի որ հետագա աշխատանքները շարունակում են կատարվել միայն ավանդականի սահմաններում (հմմտ. 6, 7 և այլն), իսկ նոր ձեռնարկումները

ավանդույթի ուժով կարող են շրջանցվել, և մեր այս աշխատանքում հաշվի են առնվում նորագույն ձեռքբերումներն այս ոլորտում:

Ուսումնասիրության մեթոդը. Կիրառված են դասական և ժամանակակից համեմատաբանության մեջ ընդունված ներքին վերականգնման և արտաքին համեմատության մեթոդները՝ կապված քննության առարկա միավորների ծագման, այլև տիպաբանական հավաստիության հետ:

Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքեր. Վերջին մի քանի տասնամյակում հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում հանդես են բերվում նոր մոտեցումներ, որոնք նկատի ունենալու դեպքում կարելի է ստուգաբանական ավելի լայն և հիմնավոր աշխատանք ծավալել: Տեսական-մեթոդական նման հիմքով հայերենի նախագրային պատմության ուսումնասիրությունը մտնում է նոր փուլ:

Արդյունքներ. Հայերեն յուրաքանչյուր բառի ծագումնաբանության վերհանումը այլ բան չէ, քան բացահայտում հայոց լեզվի պատմության ինչ-ինչ կողմերի: Ստորև անդրադառնում ենք մի խումբ բառերի ծագմանը:

1. Պաղ- < հե *p^hel-

Հայ. պաղ- (<պաղ- պաջ- ուն «փայլուն») բառը կրկնարմատ ածանցավոր կազմություն է (պաղ-պաջ-ուն), սովորաբար՝ «փայլփլուն. վճիտ», «ջինջ, մաքուր», փոխաբերաբար՝ «սառնորակ ու մաքուր», «հստակ ջուր ունեցող» իմաստներով գործածվել է լեզվի պատմության գրեթե բոլոր փուլերում (3, էջ 590. 1, էջ 1174. հմմտ. 5, էջ 42): Հ. Աճառյանը պաղպաջ բառի պաղ «փայլ, ցոլք» արմատը համարում է «առանձին անգործածական», այլև անհայտ ծագման (2, էջ 13-14): Զահուկյանը նույնպես պաղ-պաջ կրկնական արմատը դիտում է առանձին և կապում հիշյալ պաղ «փայլ» արմատի հետ՝ ոչ միայն գրելով «ծագումն անհայտ է», այլև փորձելով տալ նրա ծագումը՝ թեականով նշելով «որևէ հարաբերություն ունի՝ հնդեվրոպական *(s)pel- «փայլել» արմատի հետ» (7, էջ 618):

Բառի ծագմանը և իմաստային կողմին կարելի է անդրադառնալ ստուգաբանական նոր տվյալների հիման վրա՝ կատարելով որոշ լրա-

ցում և ճշգրտում: Ընդհանուր հնդեվրոպական «ծով. ջրի կուտակում» իմաստի համար առանձնացվում է արմատի բարբառային երկու տարբերակ՝ *or- (հմմտ. հինդկ. arnavá- «ծով», խեթ. aruna- «ծով. մեծ լիճ») և *p^hel- (հմմտ. հուն. πέλαγος «ծով»), որոնք, ի դեպ, իբրև լրացում՝ կարելի է կարծել, որ իրենց ճիշտ արտացոլումն ունեն նաև հայերենում. հմմտ. *առ-ու* (*առ-ոգ-անել*, *ոռ-ոգ-անել*. երկու դեպքում էլ՝ «ջրել»), *պաղ-* (*պաղ-պաջ-* «փայլ. փայլուն», *պաղ-ա-պանծ* «լուսափայլ. մաքուր») և այլն) (հմմտ. 15, էջ 831-832. 9, էջ 671-672):

Խեթալուվական լեզուների տվյալների անհայտ լինելու պայմաններում դասական համեմատաբանությունը *առոգ-//ոռոգ-* արմատի ծագումը բխեցնում է հե. *srov- արմատից, իսկ *առու* բառի ծագման դեպքում նշվում՝ «մեկնությունը ուղիղ չէ», թեև, այնուամենայնիվ, այն կապվում է նախորդի հետ (տե՛ս 2, էջ 263-265. 7, էջ 75):

Այնինչ նոր տվյալներն այս դեպքում հիմք են հանդիսանում հիշյալ արմատների «իմաստաբանությունը» կապել «ջուր» (երկրորդաբար՝ «ծով», «լիճ», «ջրակուտակում») գաղափարի հետ. այստեղ ուշադրության առարկա է հե. *p^hel- > հայ. *պաղ-* առնչությունը:

Ինչպես վերը նշեցինք, հե. *p^hel- «հարթ, ողորկ», «հարթ, ուղիղ. հավասար» արմատով ներկայանում են «ծով» գաղափարն արտահայտող հնդեվրոպական բարբառային այլ խումբ ներկայացնող լեզուները, որոնցում *ծով* կոչվում է ըստ «ջրի մակերևույթի հարթ լինելու» գաղափարի. հմմտ. հուն. πέλαγος «ծով», πλάξ «հարթություն». Πελασγοί (հատուկ անուն) [15, էջ 831-832], այլև լատ. æquor «հարթություն. ընդարձակ մակերես», «ծովի հավասար մակերես» (9, էջ 671-672): Ընդ որում բառարանում բուն արմատը բերվում է *k/*g ածանցական բաղադրիչներով, այնինչ հայերենում ներկայանում է պարզ՝ անաձանց ձևով, որ ավելի հին լինելու նշան է:

Այնուհետև, եթե հունարենում և լատիներենում *ծով* անվանումը, իմաստաբանորեն համարվում է բարբառային, ապա այն այդպիսին է նաև հայ. *պաղ* բառի դեպքում (ոչ միայն «փայլ. փայլուն», այլև հավանաբար «ծույլ, ողորկ». հմմտ. «Ճակատն պաղպաջուն, այտքն ի ներքոյ՝ միահարթ երկայնաձնօտք» [= Ճակատը փայլուն, այտերը ներքևի կողմից՝ միահարթ երկարաձնոտ] (3, էջ 590). ընդ որում՝ հայերենում առաջին իմաստը՝ «փայլ. փայլուն», ավելի հետին է, թերևս գրավոր շրջանին

հատուկ): Այս հարաբերակցությունը, բնականաբար, հայ-հունա-իտալյան զուգաբանության օրինակ է:

Նշենք, որ հե. *p^[h]el- > հայ. *պաղ-* առնչության հնչյունական անցումները ենթադրում են այնպիսի համապատասխանություններ, որ կարող են սովորական դեպքերում նկատվածից («օրենքից») հեռու լինել, սակայն ոչ անմեկնաբանելի (հե. *p^[h] > հայ. *պ*, *e* > *ա* և այլն):

2. Փետուր < հե. *p^[h]et^[h]r-

Հնդեվրոպական նախալեզվում «թռչնի մաշկի ծածկույթ՝ փետուր» իմաստի համար վերականգնվում է տարբերակային *p^[h]et^[h]r-//*p^[h]et^[h]er- արմատ՝ անկախ ածանցական նույնպիսի առանձնացումից: Նախկինում այս բառի ծագման վերաբերյալ եղել են տարբեր, նույնիսկ միմյանց հակառակ կարծիքներ՝ հատկապես Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի աշխատություններում: Հ. Աճառյանը *փեյրուր*-ը բերում է իբրև «անստույգ բառ» (2, էջ 498), Գ. Ջահուկյանը այն բխեցնում է հե. *pet-r (*pet- «թռչել») արմատից. «Փետուր բառը բնիկ հնդեվրոպական չէ, բայց կարող է վաղ շրջանում յուրացված լինել հնդեվրոպական որևէ լեզվից և թերևս առկա լինել հենց վաղնջահայերենում» (հմմտ. հինդկ. pát(t)ra-, հուն. πτερόν, հվգերմ. fedara) (8, 15 262), այլև Սվոդեշի 100-բառանոց ցանկի մեջբերման դեպքում *փեյրուր*-ը նշվում է փակագծերում: Նկատենք, որ ավելի վաղ գրված աշխատության մեջ անցկացված է եղել հետևյալ համեմատությունը. հմմտ. հինդկ. páttar- «թև, փետուր», հուն. πτερόν «փետուր, թև», հվգերմ. Feder «փետուր», pattar «թև» և այլն (10, 103, 306):

Միաժամանակ նշվում է, որ՝ ա) նման ծագումը մի դեպք է, երբ հայերենում հե. *p-ի դիմաց ունենում ենք *փ* (փխ. հ). ի դեպ՝ առանձնացվում է նաև նման անցման երկու տասնյակից ավելի դեպք, բ) միաժամանակ դա համարվում է շեղում «հայերենի տեղաշարժի մասնավոր առանձնահատկություններից» (հմմտ. 4, 30-31, այլև 13, էջ 25-32), գ) առանց *փ*-ի պատահում է հայ. *թռչիմ* «թռչել», *թեր* «կողմ», *թերթ* «թուղթ» բառերում (10):

Հետագայում Գ. Ջահուկյանը տարբեր մեկնաբանություններով է մոտենում *փեյրուր*-ի ծագմանը. ա) բառային զուգաբանությունների ցանկում չի դրվում *փեյրուր* բառը, ուստի այն չի հանգեցվում հե. որևէ ձևի, հատկապես այն ձևին, որ նշվում էր նախորդ աշխատության մեջ (տե՛ս վերը), բ) *փեյրուր*-ը բերվում է Մ. Սվոդեշի 100-բառանոց ցանկում՝

առանց որևէ զուգահեռի հետ. մյուս լեզուների հետ, այլ նշելով (փակագծի մեջ առնելով) իբրև «փոխառյալ կամ անհայտ ծագման բառ» (10, էջ 200-201), գ) գտնում է, որ «*փեյրուր* բառը բնիկ հնդեվրոպական չէ, բայց կարող է վաղ շրջանում յուրացված լինել հնդեվրոպական որևէ լեզվից և թերևս առկա լինել հենց վաղնջահայերենում (հմմտ. հինդկ. pátt(a)ra-, հուն. πτερόν, հվգերմ. fedara)» (10, էջ 262), դ) նշվում է, որ հայերեն որոշ բառերում, ընդ որում նաև *փեյրուր*-ի դեպքում, «*ուր*-ով վերջացող անունների մեջ թերևս մասամբ առկա են ուրարտական հետքեր», ուստի *փեյրուր*-ը նման մի բառ է, «եթե ծագում է *փեյր-ել* բայից և ոչ թե հ.-ե. *petr-ից՝ մի այլ հ.-ե. լեզվի միջնորդությամբ» (10, էջ 439), վերջապես, ե) հեղինակի «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» (6) գրքում նշվում է հետևյալը. «Պետք է կարծել, որ *t > ur, *p > ph և այլ փոփոխություններով բնորոշվող հայերեն մի շարք բառերի աղբյուրը պելասգերենը կամ մերձավոր լեզուներն են. այսպես, հայ. *փեյրուր* բառը, որ հաճախ համեմատում են խեթ. pattar, -anaš «թև» բառի հետ, լիովին բացատրվում է պելասգյան հնչյունական օրենքներով՝ հ.-ե. petr > պիլ. *phetur (> հայ. փետուր)» (6, էջ 96):

Իսկ հեղինակի ստուգաբանական բառարանում նշվում է, որ *փեյրուր*-ի «ծագումն անհայտ է» (7, էջ 763): Ավանդաբար քննության է առնվել միայն առաջինը՝ *թիռ*- (*թռչել*) (իմա՝ գործողություն), արմատը, որ նկատում ենք նաև ուշ երևան եկած աշխատանքներում (տե՛ս 9, էջ 153), այսինքն՝ քննությունից դուրս է մնացել գործողության միջոցը (հմմտ. 2, էջ 184-186. 7, 267). ըստ այս բառարանների՝ *փեյրուր* բառի ծագումը «անստույգ է» կամ «անհայտ» (տե՛ս 7, էջ 498 և 763):

Եվ այս ամենով հանդերձ՝ միակ հավանականը մնում է այն է, որ *փեյրուր* բառը բնիկ է, ծագում է հետ. *p^[h]et^[h]r-/-ո կամ *p^[h]et^[h]er-ո (<*p^[h]et^[h] // *p^[h]t^[h]-) արմատից (հմմտ. 9 էջ 153 և այլն):

Նման հավանականության հիմք է հանդիսանում ցեղակից լեզուների համար առանձնացվող մի շարք ձևերի առկայությունը. հմմտ. խեթ. pattar, սեռ. հոլ. pattana «թև», լատ. penna «փետուր», հիոլ. éon «թռչուն», հվգերմ. fedara, հանգլ. feather «փետուր», այլև՝ հուն. πτερόν, πτερνξ «ձև» (տե՛ս 9, էջ 57, 62, 1461, 152, 153, 216, 224, 226, 537):

Այսպիսով, հայ. *փեյրուր* (< *փեյր-ուր*) < հետ. *p^[h]et^[h]- // *p^[h]t^[h]-. այս դեպքում, հավանաբար, ավելի իրական կլինի, եթե տարբերակվի հետ. արմատի իմաստային երկու ոլորտ՝ 1) «թռչել» և 2) «թև, փետուր», ինչպես

որ առանձնացվում են այդ իմաստների կրող ձևեր ցեղակից մյուս լեզուներում. այդ արմատից ունենք հայ. ոչ միայն *թիռ-* (*թռչել*) (իմա՝ գործողություն), այլև *փեփուր* (իմա՝ գործողության միջոց). հմմտ. մի կողմից՝ հուն. πέτομαι «թռչում եմ», πτήσις «թռիչք» և այլն, իսկ մյուս կողմից՝ հինդկ. pátrata «թև», հրգերմ. fedara «փետուր» և այլն (9, էջ 153):

3. Փիճի < հե. * b^hahk'o-

Ըստ Հ. Աճառյանի՝ հայ. *փիճի* «մի տեսակ մայրի» բառը համարվում է փոխառություն վրացերենից. «վրաց. *փիճվի* «մի տեսակ մայրի», *փիճվիանի* «եղևնյա», *փիճվնարի* «եղևնյաց անտառ», որ զուգահեռներ ունի մենգրելերենում, լազերենում. նկատի է առնվում նաև այն, որ բառը կա հիշյալ մի քանի լեզուներում, այլև ունի ածանցված ձևեր, իսկ հայերենի մեջ ունի միայն այդ ձևը (2, էջ 1979, 503-504): Հ. Աճառյանը եղած ստուգաբանական փորձերից նշում է նաև Հյուբշմանի կարծիքը՝ հետևյալ ձևակերպմամբ. «ուրիշ կովկասյան լեզուների մեջ համապատասխան բառեր չգտնելով՝ վրացին դնում է հայերենից փոխառյալ» (2, էջ 504, տե՛ս նաև 14, էջ 501):

Գ. Զահուկյանը «Ստուգաբանական բառարանում» գրում է. «Աճառյանը համարում է վրացական փոխառություն, սակայն կապ է տեսնում հայ. *փիճի*, *նոճի* և *սոճի* բուսանունների կառուցվածքների միջև՝ նկատի ունենալով *-ճի* վերջածանցը» (8, էջ 764): Աճառյանը, իրոք, «կապ է տեսնում հայ. *փիճի*, *նոճի* և *սոճի* բուսանունների» միջև (տե՛ս 2, էջ 241), սակայն դրանցից վերջին երկուսի վարաբերյալ ունի այլ կարծիք¹: Զահուկյանը բառարանում *սոճի* (տարբերակ՝ *շոճի*) բառի վերաբերյալ գրում է. «Ծագումն անհայտ է. *-ճի* վերջածանցը առկա է նաև *փիճի* և *նոճի* բառերում, բայց անբացատրելի են մնում *սո-*, *փի-* և *նո-* արմատները» (7, էջ 686): Իսկ *նոճի* բառը (*նոճ* ձևով), ինչպես որ Հյուբշմանը և Աճառյանը, համարում է «փոխառություն իրանական աղբյուրից» (7, էջ 571. տե՛ս նաև 8, էջ 537)²:

¹ Աճառյանը *նոճի* բառը բերում է *նոճ* «մշտադալար վայրի մի ծառ. կիպարիս» ձևով՝ ոչ անկախ Մեյից և Հյուբշմանից, փոխառություն պիլ. *ոճճ «մշտադալար վայրի մի ծառ» (հմմտ. պրս. ոճճ, ոճ և այլն), իսկ *սոճի* «վայրի պիստակենի» բառը համարում է անհայտ ծագման (2, էջ 463-464. 1979, 241):

² Ի դեպ՝ Զահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ չի անդրադառնում *փիճի* բառին, այլև *սոճի* բառը (իբրև հետազայում հայտնի) բերում է բարբառային տարբերակների ցանկում՝ *թեղաւշ*, *մայրի* բառերի հետ (7. էջ 398):

Սակայն կան նոր տվյալներ՝ վերանայելու այդ ստուգաբանությունը:

Հնդեվրոպական «բուսական աշխարհ» բառիմաստային (թեմատիկ) խմբում ուս. 6γк ծառատեսակի համար վերականգնվում է *b^[h]aHk'o- արմատ՝ համեմատությամբ ցեղակից լեզուների՝ լատ. fāgus (իգ սեռ.) «հաճարենի (ծառը)» (հմմտ. գալլ. ' bāgos. Bāgācon տեղանվան մեջ), հվգերմ. Buohha «հաճարենի» (գերմ. Buche), հիսլ. bók (իգ սեռ.) հաճարենի (ծառը)», հանգլ. bōc «հաճարենի» և այլն < հե. * b^[h]aHk'o- (9, էջ 621-623):

4. (Ս)փիռ / / (ս)փիւռ < հե. *sphēr-s

Այս արմատից ունենք *փռել* «տարածել, փռել», *փռվածք* «տարածք», *սփռել* (*ս-փռել* <*q- *փռել*), *սփիւռք* «սփռվածք, տարածվածություն» և այլն:

Բառի ծագումը հայտնի է. Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից (մանավանդ՝ «Նոր հայկազյան բառարանից») համարում են ծագած հե. *(s)phēr-s «փռել» արմատից՝ համեմատությամբ հուն. σπείρω «ցրել, ցանել», հվգերմ. sprint «ցանել, շաղ տալ, մանել» (տե՛ս 2, էջ 287, 531. 7, էջ 698, 770):

Միաժամանակ նկատենք, որ թե՛ Աճառյանը և թե՛ Զահուկյանը առանձին բառահոգված են դիտում հիշյալ արմատը և *փռել* «տարածել, փռել» բայաձևը՝ այն տարբերությամբ, որ, ասենք, Զահուկյանը վերջին դեպքում հուն. σπείρω ձևի համար նշում է «ցանել, սփռել» (հմմտ. վերը), այլն բերում է մվգ. sproewen «ցայտել, դուրս տալ», լատ. spargō «ցանել, ցրվել» ձևերի հետ համեմատություն, իսկ Աճառյանը համեմատում է ավելի մեծ թվով ցեղակից լեզուների ձևերի հետ» (տե՛ս ն. տ.):

Իբրև լրացում բերվածի՝ թերևս հավանական պետք է համարել իրանական լեզուներից քրդերենի մի ձևի հետ համեմատությունը՝ այն նկատառումով, որ այդ ձևը գտնում ենք հայ. *Բաթմանի կամուրջ* տեղանվան մեջ (քրդ.՝ *Փրա Բաթման*, որ նշանակում է «Բաթմանի կամուրջ». տե՛ս 4. Պետոյանի «Սասուն» գիրքը (Ե., 2016, էջ 25):

Ըստ այսմ՝ քրդ. *փրա* բառարմատի «կամուրջ» իմաստը հավանաբար պետք է հասկանալ նախնական՝ «բացվածք, փռվածք, տարածված (գետի վրա՝ մի ափից մյուսը)»: Մեր այս նկատառումը թվում է հավանական, քանի որ այս իմաստով («փռված, տարածված») հայերենի բարբառներում ունենք *փռե* բառը՝ «թափթփված՝ ցրիվ, (անխնամ) մազերով

(աղջիկ), մանավանդ մանկահասակ» (Մուշ, Ալշ.). բարբառներում բառը գործածվում է հանդիմանական երանգով՝ ուղղված մազերը թափթփված մեկին: Մեր բերած օրինակը լրացուցիչ փաստ է հնդեվրոպական բնիկ արմատի՝ ոչ միայն տեղանվանական, առտնին-սոցիալական բնույթի առումով, այլև արևմտյան և արևելյան տարածքների ցեղակից լեզուների համար:

5. Փուռն < հե. *bhu-ro- (< *bheu-) «(հացի) փուռ»

Բառի արմատը համարվում է փոխառություն հունարենից, որն իր հերթին փոխ է առել լատիներենից (հուն. φούρος < լատ. furus) (14, էջ 387. 2, էջ 526). այսպես է դիտում նաև Ջահուկյանը (8, էջ 769):

Այնինչ կան նոր տվյալներ, որոնց հիման վրա թերևս կարելի է ներկայացնել առարկություններ: Նախ՝ այնքան էլ դյուրին չէ հուն. ձևից հայ. *փուռ-ն* անցումը հնչյունապես ցույց տալու համար, երկրորդ՝ հայ. բառը նշանակում է ոչ միայն «փուռ», այլև «(հացի) փուռ. հացաթխման միջոց» իմաստները, այսինքն՝ վերաբերում է հացաթխման գործին: Իսկ այս վերջինը, անշուշտ, ունի հին ակունքներ՝ կապված ընտանիքի, առհասարակ բնատնտեսության, այլև համայնքի, ընտանեկան առնչությունների, ընծայաբերումների (պաշտամունքային) նշանակման հետ և այլն (հմմտ. «կրակ. կրակարան», «օջախ», «տուն»):

Կարելի է մտածել, որ բառը ծագում է այլ աղբյուրից, կամ էլ կարող է բնիկ լինել, եթե ոչ լինել, այսպես կոչված, (լեզուների) միջ-ընտանիքային առնչությունների իրողություն:

Այս դեպքում նկատի ունենք հետևյալը:

Նախ՝ հնարավոր զոգահեռներ կան խուռերենի և ուրարտերենի բառապաշարում. ըստ Ջահուկյանի՝ խուռ. *purli* «տուն» (?) (11, էջ 18), այլև ըստ Խաչիկյանի՝ խուռ. *fur^ula*, *fur^ula* «(?) տուն», ուրարտ. *furula*, *furna* «տուն. տնտեսություն, տաճար» (12, էջ 46): Երկրորդ՝ Ջահուկյանը խուռ. *purli* «տուն» (?) ձևն առնչում է հնդեվրոպական մի քանի ձևերին՝ իբրև ընդհանուր արմատ վերականգնելով հե. **bhur-o-* (պարզ՝ **bheu-*) «աճել, հասունանալ, ծաղկել. առաջանալ, լինել, ապրել և այլն»՝ ի համեմատություն հրգերմ. *būr* «տուն, վանդակ, մեսապ. Βύριον «բնակատեղի» ձևերի, ընդ սմին տալով հետևյալ ծանոթագրությունը. «Հմմտ. նաև խեթ. *pir*, *par-n*, լուվ. հիեր. խեթ. *parna*. լիկ. *prāna*, լիդ. *bira*

«տուն», որոնք խոռ. purli և եգիպտ. br ձևերի հետ միասին Ֆ. Ջոմերը (356, էջ 32. իմա՝ Sommer F., Hethiter und Hethitisch, Stuttgart, 1947.- Վ.Հ.) համարում է թափառող մշակութային բառ (technisches Wandeswort): Գործ ունենք ընդհանուր ժառանգություն հանդիսացող բառի հետ» (11, էջ 177):

Հայերեն բառի այս ձևով ստուգաբանությունը, թերևս, ավելի համոզիչ կարող է լինել, քան նախկինում առաջադրվածը: Ըստ այսմ՝ խոռ. purli «տուն» - հայ. *փուռ-ն* «փուռ, կրակարան. օջախ (?)», խեթ. pir, par-n [խե. * bhu-ro- < *bheu- (?)]. հմմտ. նաև հայ. (բրբռ.) *փուռնիկ* (< *փուռ-ն-իկ*) «թոնրի տակ շիկացած կրակին եփվող խմորագնդից թխված մի տեսակ հաց» (Ալշ., Մշ.):

Եզրակացություններ

Հոդվածում բերված բառերի համեմատական լրացուցիչ քննությունից պարզվում է դրանց՝ հավանականության ավելի բարձր շեմով բնիկ լինելը:

Համեմատության մեջ են դրվում ոչ միայն հնդեվրոպական, այլ նաև այլ ցեղակցության բառային միավորներ, որոնք ի տարբերություն Զահուկյանի հայտնի տեսության՝ օրինակ են անմիջական շփումների:

Ըստ այդմ էլ քանակապես մեծանում է հայերենի բնիկ բառապաշարի ծավալը:

Գրականության ցանկ

1. Aghayan Ed., Ardi hajereni batcatrakan bararan [Explanatory Dictionary of Modern Armenian], Yerevan, 1976.
2. Ačaryan H., Hajeren armatakan bararan [Armenian Root Dictionary], vols. 1–4. Yerevan, 1971-1979.
3. Avetikean G., Syurmelian Kh., Augerian M. Nor bargirq haykazeen lezui [New Dictionary of the Haikazian (Classical Armenian) Language], vol. 2, Venice, 1837.
4. Hambardzumyan V.G., H.-e. payt'akan baghazaynneri teghasharji vochliarjek artacolumen hayerenum- Tezisner. Nshanagitutyun ev lezuni dasavandum (tesakan himunqner ev gortsakan kirarutyun) [The 'Non-Complete' Reflection of the Shift of Proto-Indo-European Plosive Consonants in Armenian. In Theses: Semiotics and Language Teaching (Theoretical Foundations and Practical Application)], Yerevan, 1996, pp. 30–31.

5. Malkhaseants St., Hayerēn bacatrakan bararan [Explanatory Dictionary of Armenian Language], vols. 1–4, Yerevan, 1944-1945.
6. Jahukyan G. B., Hayerenə ev hndevropakan hin lezunerə [Armenian and the Ancient Indo-European Languages], Yerevan, 1970.
7. Jahukyan G. B., Hayoc lezvi patmutyun (nakhagrayin jamanakashrjan), [History of Armenian language (Pre-Literary period)], Yerevan, 1987.
8. Jahukyan G. B., Hayeren stugabanakan bararan [Etymological Dictionary of Armenian Language], Yerevan, 2010.
9. Gamkrelidze T. V., Ivanov V. V., Indoeuropeyskiy yazik i indoeuropeyski. Rekonstrukciya i istoriko-tipologičeskiy analiz proyazika i protokulturi [Gamkrelidze T. V., Ivanov V. V. Indo-European and the Indo-Europeans: A Reconstruction and Historical-Typological Analysis of the Proto-Language and Proto-Culture], vol. II, Tbilisi, 1984.
10. . Jahukyan G. B., Očerki po istorii dopismennogo perioda armyanskogo yazika [Essays on the History of the Pre-Literate Period of the Armenian Language], Yerevan, 1967.
11. Jahukyan G. B., Vzaimootnosheniye indoeuropeyskikh, khurritsko-uratskikh i kavkazskikh yazikov [Interrelations of Hurrian-Urartian and Caucasian languages], Yerevan, 1967.
12. Khachikyan M. L., Khurritskiy i urartskiy yaziki [Hurrian and Urartian languages], Yeevan, 1985.
13. Hambardzumyan V. G., The “non-complete” schift of Indo-European plosives in Armenian // “Semiotics and Language teaching. Theoretical Princeps, Ann Arbor: Caravan Books”, 2001, p. 25-32 [The ‘Non-Complete’ Shift of Indo-European Plosives in Armenian.- In “Semiotics and Language Teaching: Theoretical Princeps]. Ann Arbor: Caravan Books, 2001, pp. 25–32.
14. Hübschmann H., Armenische Grammatik, Leipzig, 1897 (Armenische Grammatik. Leipzig, 1897.
15. Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch, 1 Band, Bern-München, 1959 (Indogermanisches etymologisches Wörterbuch, vol. 1. Bern-Munich, 1959.

**LAS FUNCIONES E STILISTICAS DE LA ANTITESIS EN LOS
CUENTOS POPULARES ESPAÑOLES**

ZARUHI AZIZBEKYAN

Universidad Estatal de Ereván, Departamento de Filología Románica,

Doctora en Ciencias Filológicas, profesora titular

zaruhiazizbekyan@ysu.am

Resumen

El presente artículo tiene como objetivo examinar la antítesis como parte inseparable del sistema artístico-figurativo del cuento maravilloso español, mediante la cual se construye la trama del relato. Los cuentos se basan en el principio de la oposición, lo que está determinado por sus particularidades genéricas. Aquí, la trama, por regla general, se construye sobre la base de la lucha entre el bien y el mal, lo cual constituye el fundamento del recurso de la antítesis. En los cuentos maravillosos españoles, las antítesis se caracterizan por una figuratividad viva, una profunda emotividad y expresividad, y poseen un gran valor cognitivo y estético. Constituyen uno de los medios textuales fundamentales propios del sistema figurativo de estos cuentos, que, con sus matices emotivo-expresivos, resaltan la caracterización de los personajes y las valoraciones subjetivas del narrador respecto al mundo del cuento.

Palabras clave y expresiones: antítesis, recurso estilístico, cuento maravilloso, función estilística, sistema artístico, figuratividad.

ՀԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԻՍՊԱՆԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔՒԱԹՆԵՐՈՒՄ

ԶԱՐՈՒՀԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԵՊՀ. Ռոմանական բանասիրության ամբիոն

Բ. գ. թ., դոց.

zaruhiazizbekyan@ysu.am

Ամփոփում

Սույն հոդվածի նպատակն է քննության առնել հակադրությունը՝ որպես իսպանական հրաշապատում հեքիաթի գեղարվեստական-պատկերավոր հա-

մակարգի անքակտելի մաս, որի միջոցով կառուցվում է հեքիաթի սյուժեն: Հեքիաթները հիմնված են հակադրության սկզբունքի վրա, որը պայմանավորված է դրանց ժանրային առանձնահատկություններով: Այստեղ սյուժեն, որպես կանոն, կառուցվում է բարու և չարի պայքարի հիման վրա, որն էլ ընկած է հակադրության հնարի հիմքում: Իսպանական հրաշապատում հեքիաթներում հակադրություններն օժտված են վառ պատկերավորությամբ, խոր հուզականությամբ ու արտահայտչականությամբ և ունեն ճանաչողական ու գեղագիտական մեծ արժեք: Դրանք տվյալ հեքիաթների պատկերավոր համակարգին բնորոշ տեքստակազմից կարևոր միջոցներից են, որոնք իրենց հուզարտահայտչական երանգներով վեր են հանում հերոսների նկարագիրը, հեքիաթային աշխարհի հանդեպ հեքիաթասացի սուբյեկտիվ գնահատականները:

Բանալի բառեր և բառակապակցություններ. հակադրություն, ոճական հնար, հրաշապատում հեքիաթ, ոճական գործառույթ, գեղարվեստական համակարգ, պատկերավորություն:

STYLISTIC FUNCTIONS OF ANTITHESIS IN SPANISH

FOLKTALES

ZARUHI AZIZBEKYAN

YSU, The Romance Philology Department,

PhD, Associate Professor

zaruhiazizbekyan@ysu.am

Abstract

The aim of the present article is to examine antithesis as an integral component of the artistic-imagistic system of the Spanish fairy tale, through which the narrative structure is formed. These tales are grounded in the principle of contrast, a feature conditioned by their generic characteristics. As a rule, the plot is built upon the struggle between good and evil, which lies at the core of the device of antithesis. In Spanish fairy tales, antitheses are endowed with vivid imagery, profound emotionality, and marked expressiveness, possessing significant cognitive and aesthetic value. They constitute one of the essential textual-constructive means characteristic of the imagistic system of these tales, revealing—through their emotional-expressive nuances—the characters' traits as well as the storyteller's subjective evaluations of the fairy-tale world.

Keywords and phrases: antithesis, stylistic device, fairy tale, stylistic function, artistic system, imagery.

**СТИЛИСТИЧЕСКИЕ ФУНКЦИИ АНТИТЕЗЫ В ИСПАНСКИХ
НАРОДНЫХ СКАЗКАХ
ЗРУИ АЗИЗБЕКЯН**

ЕГУ, Кафедра романской филологии
Кандидат филологических наук, доцент
zaruhiazizbekyan@ysu.am

Аннотация

Цель настоящей статьи исследовать антитезу как неотъемлемую часть художественно-образной системы испанской волшебной сказки, при помощи которой строится сюжет сказки.

Сказки основаны на принципе противопоставления, что обусловлено их жанровыми особенностями. Здесь сюжет, как правило, строится на основе борьбы добра и зла, что и лежит в основе приёма антитезы. В испанских волшебных сказках антитезы наделены яркой красочностью, глубокой эмоциональностью и выразительностью и имеют большую познавательную и эстетическую ценность. Они являются важными текстообразующими средствами образной системы данных сказок, которые своими эмоционально-выразительными оттенками выявляют облик героев, субъективные оценки сказочника по отношению к сказочному миру.

Ключевые слова и словосочетания- антитеза, стилистический прием, волшебная сказка, стилистическая функция, художественная система, образность.

Introducción.

El uso de la antítesis en los cuentos ha constituido, desde hace tiempo, un objeto de estudio para varios lingüistas. Varios investigadores han tratado el tema de la antítesis en los cuentos, pero, sin embargo, como recurso literario, la antítesis aún no ha sido objeto de un estudio específico, a pesar de su frecuente uso de las variadas funciones estilísticas que desempeña en los cuentos. En la estilística la antítesis se considera una figura retórica mediante la cual el discurso literario adquiere un matiz expresivo. El lingüista español J. Antonio Mayoral define la antítesis como: “contrapuesto o contención, antitetoso antítesis, es cuando en la oración se juntan contrarios o se trastruecan, y se halla en toda suerte de oposición” (Mayoral, 1994: 263). Mayoral distingue cuatro tipos de oposición entre unidades léxicas: relativos (padre/hijo), contrarios (bueno/malo), privativos (muerte/vida) y contradictorios (es/noes) (Mayoral, 1994: 264). J. Morata Pedreño en una discusión sobre la retórica periodística indica que la contraposición consiste en presentar dos palabras u oraciones que expresan ideas que se oponen o contrastan. Según Morata, la antítesis es una contraposición que requiere la construcción simétrica de sus miembros. La manifestación léxica de la antítesis son los antónimos o contrarios: todo–nada, sombra–luz, vida–muerte, alto–bajo (Morata, 2000: 277).

El objetivo de este artículo es estudiar las principales antítesis que figuran en los cuentos de hadas españoles, en particular, determinar su lugar dentro del conjunto de otros recursos estilísticos, revelar sus funciones principales, así como sus medios de formación.

En el lenguaje de los cuentos, el recurso de la antítesis aparece con bastante frecuencia. Se puede afirmar que los cuentos están basados en el principio de la oposición, lo cual está condicionado por las características propias del género. Como es sabido, la trama del cuento se construye sobre el conflicto de contradicciones, por lo que la antítesis constituye la base de su sistema poético. El cuento, por regla general, se estructura sobre la lucha entre el bien y el mal, fundamento esencial del recurso de la antítesis. Esta se expresa no sólo a través de la oposición semántica de conceptos, sino también mediante los recursos gramaticales, sintácticos y léxicos (Ведерникова, 1975: 78), que en el género del cuento adquieren funciones estéticas particulares.

En los cuentos, la comparación y la antítesis suelen emplearse conjuntamente; de hecho, el contenido semántico principal de los cuentos se revela a través de la antítesis, mientras que la comparación introduce nuevos matices en el desarrollo del tema, contribuyendo principalmente a intensificar la expresividad poética del texto (Яцунюк, 1975: 159-160). Por lo tanto, la antítesis cumple una función doble en cuanto al contenido: une dos aspectos de un mismo fenómeno o bien contraponen dos fenómenos distintos entre sí.

La función principal de la antítesis en los cuentos es aportar un matiz emocional adicional y crear una atmósfera mágica y enigmática. En muchos cuentos la antítesis es uno de los recursos compositivos fundamentales del texto. A través de la antítesis en los cuentos se presenta la caracterización de los personajes, se describe su posición dentro de la familia, las relaciones entre ellos, las circunstancias de sus acciones, etc. En la mayoría de los casos, una sola antítesis cumple simultáneamente varias funciones dentro del cuento.

Según la estructura, se puede distinguir dos tipos de antítesis. La primera es de carácter particular, basada en la confrontación entre dos objetos o fenómenos; la segunda es de carácter más general y supone la confrontación entre varios objetos o fenómenos. En los cuentos españoles prevalece la confrontación entre dos objetos, lo que permite concluir que en ellos predomina el uso del primer tipo de antítesis.

A su vez, la antítesis se forma de diferentes maneras: con frecuencia, en una de las partes de la antítesis se presenta la negación de una característica o estado de un objeto, y en la otra, la afirmación. Por ejemplo: *Y la hermanita no quiso comer, pero los hermanos sí comieron. (El palacio de Jarancón, p. 375). Y a media noche gritó una voz desde el techo: -¿Caigo o no caigo? (El que no conocía el miedo, p. 414).*

La antítesis también puede expresarse mediante el uso de antónimos: *Y la vieja contesta: -Acortando las noches y alargando los días. (Los cuarenta y un*

ladrones, p. 444). Y bajas tú a la cuadra y ai verás dos caballos, uno gordo y muy bonito y otro malo y flaco. (Marisoles, p. 392).

A menudo la antítesis se expresa mediante la mención de diferentes objetos o fenómenos y en este caso el contexto desempeña el papel más importante.

-¡Oy, siendo yo tan blanca y tan hermosa y yendo a la fuente por agua! ¡Rómpete, cantarete! (La negra y la paloma, p. 382). -¡Riao, riao, riao! ¡La Estrellita de Oro en la cenicera está y la Rabo de Burro en el coche va! (Estrellita de Oro, p. 370).

Con el fin de lograr una antítesis marcada, dos objetos, personas o estados se contraponen mediante la exageración intencionada de una de sus características positivas o negativas. Según A. Rama, “frecuentemente se utilizan antítesis marcadas, percibiendo la obra literaria como un tenso equilibrio conquistado sobre oposiciones que el escritor unce, casi forzándolas, casi venciendo su tendencia centrípeta, al servicio de la creación (Rama, 1981: 45). Por ejemplo: Y si guapa era la madre, *más guapa, mucho más guapa era la niña. (Blanca Flor, p. 376).*

La oposición de dos objetos o estados se vuelve más expresiva y se intensifica su impacto estético mediante la exageración intencionada de sus características (Кулагина, 1975: 93).

El sistema de antítesis en los cuentos maravillosos es complejo. Puede manifestarse tanto en un sentido general e ideológico (bien-mal, vida-muerte), como a través de la trama (libertad-esclavitud, amor-odio), o mediante la oposición de personajes (esposo-esposa, hermano-hermana). Desde la primera línea, el cuento maravilloso traslada a los oyentes a un mundo particular, distinto de la realidad, donde los héroes están dotados de poderes y sabiduría extraordinarios, y los objetos comunes poseen características mágicas. En esencia, el mundo del cuento se contrapone al mundo real. Esta oposición es una característica distintiva del género del cuento y la base del sistema poético del cuento. Mediante el recurso estilístico de la antítesis se revela el conflicto entre el héroe y el mundo exterior.

En el cuento, todo es opuesto y, por ello, respectivamente todo es convencional. La convencionalidad del mundo fantástico del cuento también determina la convencionalidad de los personajes. La antítesis sirve principalmente para caracterizar a los personajes del cuento y, a menudo, resulta decisiva para el nudo y el desenlace de toda la trama. El personaje del cuento es un tipo determinado de ser humano. Pero mientras que en las obras literarias un héroe puede poseer tanto características positivas como negativas, en los cuentos populares cada personaje es o bien positivo o bien negativo. Por eso, la antítesis basada en la contraposición de dos héroes no es sólo una comparación de dos personas, sino también una oposición entre caracteres contrapuestos. La antítesis inicial se refuerza con la posterior oposición de las acciones y de las características de los héroes (Ведерникова, 1975: 67). Habitualmente, en la descripción de los personajes se emplean características opuestas como bueno-malo, rico-pobre,

tonto-listo, etc. Por ejemplo: *Y en este castillo vivía el diablo con su mujer y tres hijas. Y Blanca flor, la hija menor del diablo era santa. (Blanca Flor, la hija del diablo, p. 389). Este era un padre que tenía tres hijas. Y el menor era tonto, feo y lagañoso. (El tonto lagañoso y magañoso, p. 434)*

El cuento comienza frecuentemente a través de la contraposición de los personajes principales. Desde el inicio de la historia se establece el conflicto posterior. Por ejemplo, el cuento “**Las tres avellanas**” comienza con la siguiente antítesis: *Este era un rey que tenía dos hijos, una muy guapa y la otra muy fea. Y a la bonita la pretendían todos y la querían mucho, y a la fea naturalmente no le hacían caso los mozos ni nadie. Y por eso el padre quería más a la fea, y a la guapa siempre maltrataban. (Las tres avellanas, p. 442).*

Las funciones de la antítesis se intensifican mediante la contraposición de personajes según su condición social (pobre-rico), situación familiar (esposo-esposa, hermano-hermana), género (rey-reina) y edad (joven-viejo). Por ejemplo:

Este era un rey que era viudo y que tenía tres hijos. Y en otro reino había una reina viuda que tenía una hija mu guapa. (La cosa más rara del mundo, p. 435)

Estos eran un padre y una madre que tenían dos hijos, un hijo y una hija. (Dos almas en pena, p. 448)

Paralos cuentos de hadas españoles es característico la contraposición entre la belleza y la fealdad. Esta es, probablemente, uno de los grupos más numerosos y extendidos de las contraposiciones propias de estos cuentos. Por ejemplo: *Este era un rey que tenía dos hijos, una muy guapa y la otra muy fea. (Las tres avellanas, p. 442).* -¡Ay qué asquerosa y qué fea! ¡Mátala!

Pero el rey dijo: -¡Ay, qué bonita es la palomita! ¡Qué suaves sus plumitas! ¡Qué linda mi palomita! (El palacio de Jarancón, p. 375).

En los cuentos, el héroe o la heroína suelen ser representados como personas comunes, aunque su descripción física casi nunca se detalla. Por el contrario, los antagonistas se describen detalladamente, ya que a menudo son monstruos extraordinarios. Frecuentemente, estos se presentan mediante la exageración, como por ejemplo la serpiente de siete cabezas, que es el monstruo más usado en los cuentos maravillosos españoles. Por ejemplo:

-A mí me guarda una serpiente de siete cabezas que puede ver a todas partes a un tiempo. (El Castillo de Irás y no Volverás, p. 417)

En las antítesis suele resaltarse el valor simbólico de los colores. Por ejemplo, en los cuentos españoles, los héroes positivos suelen asociarse con el blanco y el dorado, mientras que los negativos se vinculan con el negro. La oposición cromática incluso se refleja en los nombres de los personajes de los cuentos. Por ejemplo: **Estrella de Oro, Blanca Flor, Siete Rayos de Sol, La negra y paloma, La loba negra.**

En los cuentos de hadas españoles se expresa de forma destacada la idealización de los hijos menores, contraponiéndolos con los hijos mayores. Por lo general, en los cuentos el padre tiene tres hijas, siendo la menor la más querida. Las hijas mayores suelen ser malvadas y envidiosas. La idealización del hijo en los cuentos españoles se manifiesta a través de la realización de tareas difíciles, en las cuales sólo el hijo menor tiene éxito (generalmente después de los fracasos de los hermanos mayores). En el cuento, el hijo menor alcanza el éxito con la ayuda de personajes positivos u objetos mágicos. Según el folclorista ruso E. Meletinski el cuento popular maravilloso hay dos protagonistas principales: uno de origen "noble" y otro "bajo", "desalentador", que suele ser el hermano menor, quien inesperadamente realiza un acto heroico y alcanza el objetivo del cuento (Мелетинский, 2005: 179-193). Meletinski también añade que "el cuento idealiza al hijo menor como salvador del padre" (Мелетинский, 2005: 131).

El recurso estilístico de la antítesis también ayuda a revelar de manera completa y convincente el estado psicológico de los personajes. Las antítesis psicológicas se manifiestan a través de las emociones y sentimientos de diferentes personajes. Por ejemplo: *Un rey tenía tres hijas. Un día se encerró en un cuarto con las tres hijas. Y a la mayor le habló primero y le preguntó que cuánto le quería. Y ella respondió que le quería como a sí misma. Entonces le preguntó a la segunda que cuánto le quería, y ésta le respondió que le quería como a las niñas de sus ojos. Le hizo la pregunta a la tercera, y ésta le dijo que le quería como la vianda quiere a la sal. (Como la vianda quiere a la sal, p. 361)*

En este ejemplo, la antítesis se expresa de manera destacada en la manifestación del amor de la tercera hija que, a diferencia de las dos primeras, inicialmente percibida con un sentido negativo, adquiere posteriormente una connotación positiva en el contexto del cuento.

En los cuentos a veces se contraponen un número desigual de personajes, es decir, un personaje se opone a dos, dos a tres, etc. En los cuentos maravillosos españoles es característico que un personaje se oponga a otros dos. Por ejemplo: *Y los hermanos mayores, como que siempre estaban con la envidia, se fueron solos y el menor se fue con el padre por otro lado. (La gaita que hacía a todos bailar, p. 442). Este era un rey que tenía tres hijas muy guapas. Y a la menor, que era la más guapa, le dio el rey una bola de oro. (El príncipe rana, p. 405).*

En los cuentos, la triplicidad aparece constantemente como un recurso para intensificar ciertas características: el hermano mayor es inteligente, el mediano menos inteligente y el menor es tonto, etc. Cabe destacar que la triplicidad implica no sólo comparación, sino también oposición. Así, mientras en la comparación va intensificándose sucesivamente cada característica de los miembros comparados, la oposición siempre supone una contraposición entre los primeros dos y el último.

Conclusión

Así, la antítesis en los cuentos es uno de los recursos estilísticos más usados e importantes. La especificidad del uso de este recurso está condicionada por las particularidades genéricas del cuento. A pesar de que la concepción ideológico-moral del cuento se realiza a través del sistema complejo de oposiciones, los cuentos se puede agrupar en torno a la oposición principal, entre lo positivo y lo negativo. En los cuentos no se opone el bien al mal, sino el mal al bien. Como afirma J. Cortázar, “el cuento no puede ser malo por el tema, porque en la literatura no hay temas malos, hay solamente un buen o un mal tratamiento del tema” (Cortázar, 2009: 406). El cuento afirma las ideas del bien y la justicia, rechazando el mal, la envidia y la injusticia. Los portadores de estas ideas son los personajes tradicionales. Cada personaje actúa conforme a sus propios principios de vida. Al enfrentarse a los aspectos contradictorios de la vida, el pueblo los reflejaba en los cuentos.

Se puede afirmar que la antítesis, teniendo un papel importante en los cuentos, es uno de los recursos principales del sistema poético de los cuentos españoles otorgándoles un gran valor estilístico y emocional y haciéndolos más profundos y significativos.

Referencias bibliográficas

1. Cortázar J. Algunos aspectos del cuento, Alicante: Biblioteca Virtual Miguel de Cervantes, 2009, pp. 403-416. [*Some Aspects of the Short Story*]. Alicante: Biblioteca Virtual Miguel de Cervantes, 2009, pp. 403–416.
2. Espinosa A. M. Cuentos populares recogidos de la tradición oral de España. [*Popular Tales Collected from the Oral Tradition of Spain*]. Madrid: Higher Council for Scientific Research (CSIC), 2009.
3. Mayoral J. A., Figuras Retóricas, Editorial Síntesis [*Rhetorical Figures*], Madrid: Editorial Síntesis, 1994.
4. Morata J., Estudios sobre el mensaje periodístico [*Studies on the Journalistic Message*]. Madrid: Ediciones Complutense, 2000.
5. Rama A. Hispamérica: revista de literatura [*Hispamérica: Literary Journal*], No. 30, 1981.
6. Vedernikova N. M. Antiteza v volshebnyh skazkah // Fol'klor kak iskusstvo slova, vypusk 3 [Antithesis in Fairy Tales. In *Folklore as the Art of the Word*, Issue 3], Moscow: Moscow University Press, 1975.
7. Kulagina A. V. Antiteza v balladah // Fol'klor kak iskusstvo slova, vyp. 3. Pod redakciej professora N.I.Kravcova [Antithesis in Ballads." In *Folklore as*

the Art of the Word, Issue 3, edited by Prof. N. I. Kravtsov], Moscow: Moscow University Press, 1975.

8. Meletinskij E. M. Geroj volshebnoj skazki [*The Hero of the Fairy Tale*]. Moscow–Saint Petersburg: Academy of Cultural Studies, 2005.

9. Jacunok E. I. Antiteza v horovodnyh pesnjah // Fol'klor kak iskusstvo slova, vyp. 3 / Pod redakciej professora N.I.Kravcov ["Antithesis in Round Dance Songs." In *Folklore as the Art of the Word*, Issue 3, edited by Prof. N. I. Kravtsov]. Moscow: Moscow University Press, 1975.

**«ԲՆԱԿԱՎԱՅՐ, ԿԱՅԱՐԱՆ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ ՈՐՈՇ
ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ
Ավագ գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ
silvapapikyan 23@gmail.com
papikyansilva@yandex.ru

Համառոտագիր

«Բնակավայր, կացարան» իմաստային խմբի հատկական փոխառությունները հայերենին անցել են տարբեր լեզուներից: Դրանք արաբական, թյուրքական, իրանական, ռուսական փոխառություններ են՝ որպես հետևանք տարաբնույթ կապերի և հարաբերությունների, որոնց մեջ կան նաև միջնորդավորված փոխառություններ: Որոշակի քանակ են կազմում նաև արևմտյան լեզուներից անցած հատկական փոխառությունները՝ հայերենին անցած թարգմանական գրականության միջոցով: Այդ բառերի մի մասը ենթարկվել է իմաստային փոփոխության:

Հոդվածում տրված է դիտարկված բառերի գործածության հաճախականությունը՝ ըստ «Արևակ» արևելահայերենի կորպուսի:

Բանալի բառեր և բառակապակցություններ. հատկական փոխառություններ, իմաստային խումբ, միջազգային բառեր, պատմաբառեր, իրոյթ, իմաստափոխություն, բարբառ, ժողովրդախոսակցական լեզու, փոխատու լեզու, փոխառու լեզու:

**EXAMINATION OF SOME EXOTICISMS
TO THE SEMANTIC GROUP “DWELLING,SETTLEMENT”**

NAS RA Institute of Language after H. Acharyan
Senior researcher, PHD, Associate professor
silvapapikyan23@gmail.com

Abstract

The exoticisms associated with the semantic group "dwelling, settlement" have passed into Armenian from different languages, and there are also mediated borrowings among them. These are Arabic, Turkic, Iranian, Russian borrowings as a result of various relations and interactions. There is also a certain number of exoticisms from Western languages that have passed into Armenian through translated literature. Some of these

words have undergone semantic changes. The article presents the frequency of usage of the discussed words according to Eastern Armenian National Corpus (EANC).

Keywords and phrases: exoticisms, semantic group, international words, historicisms, realia, change of meaning, dialect, source language, borrowed language, figurative use.

АНАЛИЗ ЭКЗОТИЗМОВ, ВЫРАЖАЮЩИХ ЗНАЧЕНИЯ “ЖИЛИЩЕ, МЕСТО ЖИТЕЛЬСТВА”.

научный сотрудник Института языка НАНРА,
кандидат филологических наук, доцент
silvapapikyan23@gmail.com

Аннотация

Экзотизмы, принадлежащие смысловой группе «жилище, место жительства», перешли в армянский язык из разных языков, среди которых есть и опосредованные заимствования. Это заимствования из арабского, тюркского, иранского, русского, как результат различных связей и взаимоотношений. Существует также определенное количество экзотизмов заимствованных из западных языков, которые перешли в армянский через переводную литературу. Некоторые из этих слов претерпели семантические изменения.

В статье представлена частота употребления рассмотренных слов по данным Восточноармянского национального корпуса (ВАНК).

Ключевые слова и словосочетания: экзотизмы, семантическая группа, интернациональные слова, историзмы, реалии, изменение значения, диалект, исходный язык, заимствованный язык, образное употребление.

Ներածություն

Փոխառությունների առանձին շերտ են կազմում հատկական փոխառությունները¹: Սրանք այն բառերն են, որ բնորոշ են տարբեր ժողովուրդների կյանքին, կենցաղին, սովորույթներին, մշակույթին, հոգեկերտվածքին: Անվանվում են նաև *տարաշխարհիկ բառեր*, *օտար բառեր*, *էկզոտիզմներ*: Ընդհանրապես հատկական փոխառությունների գործածությունը հատուկ է թարգմանական գրականությանը. թարգմանիչը տվյալ ժողովրդի առանձնահատկություններին բնորոշ բառերը չի թարգմանում՝ տեղական կոլորիտը և հուզազգացական կոդը պահպանելու, ինչպես նաև արտահայտչականություն ստեղծելու համար, ինչպես՝

¹ Հարկական փոխառություն տերմինը շրջանառության մեջ է դրել Էդ. Աղայանը [2, էջ 169]:

ճապոներենից՝ *իկեբենա*, *խարակիրի*, *կաբուկի*, *սակուրա* և այլն, հնդկերենից՝ *գուրու*, *մահաթմա*, *մահառաջա*, *սարի*, արաբերենից՝ *իմամ*, *իսլամ*, *մեդրեսե*, *մզկիթ*, *ջիհադ* և այլն: Սովորաբար այդ բառերը թարգմանելի չեն. երբեմն կարող են արտահայտվել թարգմանությամբ՝ հեղինակի կամ թարգմանչի բացատրություններով՝ փակագծերում կամ տողատակում:

Ընդունված է հատկական փոխառությունները բաժանել երկու խմբի՝ նեղ և լայն ընդգրկում ունեցողների: Նեղ ընդգրկում ունեցողները հատուկ են մեկ-երկու լեզվի, լայն ընդգրկում ունեցողները հանդիպում են շատ լեզուներում, ինչպես՝ *չադրա*, *գեյշա* և այլն: Որոշ հատկական փոխառություններ փոխաբերացման և հաճախակի կիրառության հետևանքով տարածվում են, հասկանալի դառնում և կարող են համալրել միջազգային փոխառությունների շարքը, հմմտ. ճապոներենից *ցունամի*² «սեյսմիկ ծովային ալիքներ» և այլն:

Որոշ հատկական փոխառություններ, ձեռք բերելով փոխաբերական գործածություն, հետագայում առաջացնում են բառի բազմիմաստություն, ինչպես՝ *նիրվանա*² «1. Բուդդայական ուսմունքի համաձայն՝ աշխարհային ամեն ինչից հրաժարվելու միջոցով ձեռք բերվող երանավետ հանգստի վիճակ: 2. փխբ. Անդորր, երանավետ խաղաղություն՝ հանգըստություն» [1, էջ 1072].

Սովորաբար հատկական փոխառությունների գործածությունը լեզվակիր հանրության մոտ առաջացնում է որոշակի զգացողություններ՝ կապված փոխատու լեզվի իրությաների (ռեալիաներ) [8, էջ 7-8] հետ՝ վերաբերող օտար մշակույթին, աշխարհայացքին, հոգեկերտվածքին: Մեր նպատակն է այս հոդվածում դիտարկել տարբեր լեզուներից հայերենին անցած «բնակավայր, կացարան» իմաստային խմբի որոշ հատկական փոխառություններ: Չանազան աղբյուրներից (գրականություն, մամուլ, հեռուստատեսություն) հայերենում որոշակի հաճախականություն ունեցող այդ փոխառությունները փորձել ենք դասակարգել ըստ իմաստային խմբերի, ծագման, հաճախականության և այլն:

«Բնակավայր» իմաստն ունեցող հատկական փոխառություններից դիտարկել ենք *աուլ*, *էմիրաթ*, *խալիֆաթ*, *խուլորր*, *ռանչո*, *վիլայեթ*,

² *Նիրվանա* < սանսկրիտ՝ nirvāṇa՝ մարում. բուդդայականության հիմնական հասկացությունն է, որը ցույց է տալիս մարդու հոգևոր զարգացման բարձրագույն վիճակը:

Ֆազենդա, «կացարան» իմաստն ունեցող բառերից՝ բունգալո/բենգալո, իզլու, խանակա, յուրպ/դ/, չում, վիլա, վիզվամ բառերը: Անհրաժեշտության դեպքում բերվել են օրինակներ³:

Մեթոդը: Հոդվածում հիմնականում օգտվել ենք նկարագրական-վերլուծական մեթոդից:

Արդյունքներ

Բնակավայր բառն ունի «1.Բնակատեղի, 2. Շեն տեղ, որտեղ բնակություն կա» [1, էջ 196], *կացարան*-ը՝ «կենալու, մնալու՝ ապրելու տեղ, բնակարան» իմաստը [1, էջ 712]: Դիտարկված բառերը ծանոթ են ոչ միայն հայերին, այլև մեծ տարածում ունեն աշխարհի շատ լեզուներում: Դրանք, կարելի է ասել, միջազգային բառեր են, որոնք հատկանշում են տվյալ ժողովրդին և նրանց կյանքի կարևոր մասն են կազմում:

1. Բնակավայր

Առկա: Փոխառություն է թուրքերենից՝ «գյուղ» նշանակությամբ՝ «1. Կովկասյան լեռնաբնակների գյուղի անվանումը: 2. Միջինասիական քոչվորների բնակության վայրի անվանում» [5, էջ 74, նաև՝ 1, էջ 148]: Ինչպես հայտնի է, միջինասիական երկրներում աուլները շարժական են. ավելի առատ արոտավայրեր գտնելու համար աուլի բնակիչները հաճախ փոխում են իրենց բնակավայրը: Կովկասում աուլները սովորաբար կառուցվում էին լեռների լանջերին, որոնք նախկինում ունեին նաև պաշտպանական նշանակություն: Օր.՝ «Աուլը զգվելի դարձավ Եդիգեյի համար» [3, էջ 67]:

Էմիրաթ: Պատմական և ժամանակակից երկրներ իսլամական աշխարհում՝ էմիրի կառավարմամբ. հիմնականում ղեկավարվում են մահմեդական օրենքներով՝ Շարիաթով: *Էմիր*-ը ցեղապետի, իշխող կառավարչի և Մուհամեդի հետնորդների տիտղոսն է մի քանի մահմեդական երկրներում [1, էջ 39]: Ստ.Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանում» (այսուհետև՝ ՀԲԲ) և Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (այսուհետև՝ ԱՀԲԲ) *Էմիրաթ*-ն արձանագրված

³ Օրինակները բերված են «Արևակ» արևելահայերենի կորպուսից՝ www.eanc.net/EANC/search/?interface_language=am կամ բնագրային են:

չէ: Վկայված է Ա.Հայրապետյանի «Օտար բառերի բառարանում» [6, էջ 186]: Հայերենում գործածական է *էմիրություն* ձևը, հմմտ. Արաբական Միացյալ Էմիրություններ (կազմված է 7 էմիրություններից): Օր.՝ «Յուրաքանչյուր *էմիրություն* ունի իր պատմությունը, ավանդույթները, առանձնահատկությունները» [«Առաւօտ» (օրաթերթ), 2005.03.12]:

Էմիրություններ եղել են Հայաստանում արաբական և սելջուկյան տիրապետության շրջաններում:

Խալիֆաթ < արաբ. (xalīfa⁴ *փոխանորդ, կառավարիչ*). «1. Կրոնապետական իշխանությամբ պետական կառուցվածքի համակարգ ֆեոդալական մուսուլմանական երկրներում: 2. Արաբական նվաճումների հետևանքով կազմված ֆեոդալական պետություն, որի գլուխն էր կանգնած խալիֆը»: *Խալիֆ (խալիֆա)* բառը արդի հայերենում բազմիմաստ է, ունի 5 իմաստ՝ *արաբների ամիրապետի փոփոխորդ, մուսուլմանների գերագույն գլխավորը, եգիպտական, իսկ հետո թուրքական սուլթանի՝ որպես բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդի փոփոխորդ, փխբ. հին կարգի՝ տերթոդիկյան դպրոցի ուսուցիչ, քրիստոնեական կաթողիկոսի փոփոխորդ մահմեդականների հորջորջումով*» [1, էջ 554]:

Հայերենում ավելի հաճախ գործածվում է *խալիֆայություն* բառը՝ խալիֆա+-ություն վերջածանց: Օր.՝ «Մուհամեդ մարգարեի եւ նրա ստեղծած կրոնի շնորհիվ հաջողվեց միավորել արաբական ցեղերին եւ հիմնադրել արաբական պետություն, որը հետագայում կոչվեց *խալիֆայություն*» («Ազգ» (շաբաթաթերթ), 2003. 08. 26):

Խուտոր < ռուս. хутор < գերմ. Huntari [11, էջ 483]: «Մեկուսի՝ առանձնացած կալվածք՝ հողամաս՝ տիրոջ տնտեսության և բնակության շինություններով (Ռուսաստանում)» [1, էջ 619]: Օր.՝ «Թող նրանք իջնեն ցածր տեղով ու վազ տան մինչև *խուտոր*, իսկ այնտեղից խփեն կարմիրների թիկունքին» (Մ. Շոլոխով, Խաղաղ Դոնը):

Ռանչո < իսպ. Rancho: «1. Անասնապահական ֆերմա Լատինական Ամերիկայում» [5, էջ 471]: Լատինական Ամերիկայում իսպանական գաղութարարները ստեղծեցին մեծ տարածք զբաղեցնող առաջին *ռանչոները*: Բառը հայերենում հանդիպում է գեղարվեստական գրականությամբ:

⁴ *Խալիֆները* համարվում էին Մուհամեդի հաջորդներ, որ համատեղում էին աշխարհիկ և կրոնական գործառույթները Մուհամեդից հետո արաբների ստեղծած պետություններում. մահմեդականների հոգևոր և աշխարհիկ գլխավորի տիտղոսը:

յան մեջ, հեռուստասերիալներում: Օր.¹ «Մեկ օրը բավական էր նրան, որ-
պեսզի տեսներ ու համոզվեր, որ այստեղ հնարավորություն կա ոչ
միայն ու մեծ ֆերմա՝ *ռանչո*, այլև ամբողջ թագավորություն հիմնելու
(Ստ. Յվայգ, «Մարդկության աստեղային ժամերը»), «.... դա իսկական
ռանչո էր, Ամերիկայի անասնապահական հնամենի ֆերմաներից մե-
կը» (Ջոն Սթայնբեք, Մեր հոգսերի ձմեռը):

Վիլայեթ < թուրք. < արաբ. vilâyat՝ «նահանգ»՝ «վարչատարածքա-
յին միավոր Թուրքիայում» [5, էջ 547]: Բառն առնչվում է Թուրքիային և
թուրքական իրականությանը: Թուրքիայում վիլայեթների բաժանումը
եղել է 19-րդ դարի կեսերին: Արևմտյան Հայաստանի տարածքները
ընդգրկված էին վիլայեթների մեջ: Օր.¹ «Դարերի մշուշից ելած, /Ձեռքին՝
հնամյա մի նետ, /Դարերի մշուշի վրա/ Գրում էր՝ Վեց *վիլայեթ*.... »
(Ե. Չարենց):

Ֆազենդա < հին պորտ. *fazenda*՝ Լատինական Ամերիկայում խոշոր
անասնապահական կամ հողագործական կալվածք, որի տարածքում
գտնվում էր տիրոջ տունը, եկեղեցին, շինություններ ստրուկների համար,
օժանդակ կառույցներ և այլն: Բառն արձանագրված չէ ՀԲԲ-ում, ԱՀԲԲ-
ում: Այժմ այս անվանումով Հայաստանում կան ռեստորաններ, թոնրա-
տներ: Տեղի է ունեցել բառիմաստի նեղացում՝ հասարակ անուն>հատուկ
անուն անցում:

Վերջին տարիներին աշխարհի շատ լեզուներում այս բառի գործա-
ծությունը մեծացել է՝ թերևս կապված լատինաամերիկյան հեռուստասե-
րիալների հետ, որոնք մեծ տարածում և հեռուստալսարան ունեն ամբողջ
աշխարհում:

2. Կացարան

Բունգալո /բենգալո/- անգլ. bungalow < հինդի banglā՝ «գյուղական
փոքր տուն՝ ծածկապատշգամբով՝ հիմնականում Հնդկաստանում և
Մալայզիայում» [5, էջ 109]: Այդ տները տարածված են եղել Արևելյան
Ասիայում. հետագայում տների կառուցման այդ ձևը յուրացրել են
բազմաթիվ ժողովուրդներ: Օր.¹ «*Բունգալո* տիպի տնակները գեղեցիկ
էին, հաստատուն և հաճելի՝ աչքի համար (Ջ.Լոնդոն «Մեծ տան փոք-
րիկ տիրուհին»), «Չնայած համեստ միջոցներիս՝ վարձել էի մի ընդար-
ձակ *բունգալո*, նրանցից մեկը, որ երազում էինք երեխա ժամանակ
....» (Շ. Ազնավուր, Անցած օրեր, 2004):

Իգլու < էսկիմոսերեն *igdlu' yron'* «կանադական էսկիմոսների գմբեթածն տնակ՝ կառուցված սառցե մեծ աղյուսներով» [5, էջ 215]: Ինչպես հայտնի է, էսկիմոսները բնակվում են փայտե, քարե կիսագետնափոր տներում և ձյունե գմբեթածն «*իգլու*»ներում:

Խանակա < պարսկ. *խանե'* տուն, *գա'* վայր՝ «հյուրատուն՝ բաղկացած մզկիթից և խուցերից՝ Մերձավոր Արևելքում, Միջին Ասիայում»: Խանակաները, սկսած 11-րդ դարից, դառնում են սուֆիստների⁵ բնակության և ուսումնառության կենտրոններ:

Յուրդ/յուրտ < թուրք. *yurt' pñakayuteghi, nort'* «շարժական վրան Կենտրոնական և Միջին Ասիայի վաչկատուն ժողովուրդների մոտ» [5, էջ 381]: Հայերենում ուղղագրական տարբերակներով է՝ *յուրպ/յուրդ*: Բառը բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում *յուրդ* տարբերակով է. կա համարյա բոլոր բարբառներում, բազմիմաստ է. առաջնային իմաստն է «բնակատեղի», ապա «տուն, վրանատեղի, շարժական կոնաձև վրան (վաչկատունների)» [4, էջ 122]: Փոխաբերացման հետևանքով բառն ունեցել է բառիմաստի ընդլայնում՝ «1. Թաղիքե վրան: 2. փխբ. Բնակարան, տուն: 3. Վրանատեղի» [1, էջ 1043]: Օր.՝ «Երկարուկ բլրակների լանջերին ցրված բյուրավոր սպիտակ *յուրպերը* նման էին խոշոր թռչունների երամի» [3, էջ 134]:

Հայտնի դարձվածային արտահայտություն է «*Յուրդդ բլի/չբլի*», որ կշտամբանք է:

Վիգվամ < հնդկց. «Հյուսիսամերիկյան հնդկացիների՝ ճյուղերից, ծառերի կեղևից կամ կենդանիների մորթիներից սարքած հյուղերը՝ խրճիթները» [5, էջ 546]:

Հնդկացիների ավանդական կացարաններն էին «վիգվամ» հյուղերը՝ մորթեծածկ «տիպի» վրանները: Բառը հանդիպում է հյուսիսամերիկյան կյանքը նկարագրող գործերում, հատկապես Ջեկ Լոնդոնի ստեղծագործություններում, հեռուստասերիալներում:

⁵ Սուֆիզմը առաջացել է 7-8-րդ դարերում: Այն միստիկ ճգնավորական ուղղություն է մահմեդականության մեջ: Սուֆի բառի ծագումը, ենթադրվում է, կապված է «սուֆի»՝ *բուրդ* բառի հետ: Ճգնավորները հազել են բրդից հագուստներ: Ուսմունքի ներկայացուցիչները թողել են աշխարհիկ կյանքը և նվիրվել ճգնավորության. նրանց կարծիքով՝ անընդմեջ պաշտամունքային արարողությունները կարող են մարդուն օգնել՝ ձեռք բերելու բարձրագույն երանություն, որ կնպաստի «բարձրագույն գիտելիքի»՝ Ալլահի ճանաչմանը: Սուֆիզմի աստվածաբանության գլխավոր խնդիրը Ալլահին ճանաչելն է, նրա հետ ձուլվելը [7, էջ 332-333]:

Քարվանսարա < պարսկ. *kārbānsaray*՝ «1. Իջևանատուն: 2. փխբ. Կեղտոտ՝ աղտոտ տեղ: 3. փխբ. Անկարգ՝ խառնաշփոթ միջավայր՝ տեղ» [1, էջ 1562]: Քարվանսարաները իջևանատեղի էին ճանապարհների վրա կամ քաղաքում՝ ներսի բակով, խանութներով: Բառը ժամանակակից հայերենում հազվադեպ գործածություն ունի: Հասարակական-քաղաքական զարգացումների հետևանքով՝ հատկապես Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միավորվելուց հետո, դուրս է եկել գործուն բառապաշարից: Այժմ այս անվանումով Հայաստանում հանդիպում են թոնրատներ, հացատներ, ռեստորաններ: Տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում:

Ըստ հաճախականության՝ դիտարկված բառերը «Արևակ» արևելահայերենի կորպուսում ներկայացնում են հետևյալ պատկերը:

ա. բնակավայր՝ աուլ - 28 համատեքստ / 26 տեքստ, *էմիրություն* - 7 համատեքստ / 6 տեքստ, *էմիրաթ*՝ 3 համատեքստ / 3 տեքստ (առաջինը քանակապես գերազանցում է), *խալիֆաթ* - 6 համատեքստ / 6 տեքստ, *խալիֆայություն* - 19 համատեքստ / 13 տեքստ, *խուլոր* - 152 համատեքստ / 30 տեքստ, *ռանչո* - 26 համատեքստ / 7 տեքստ, *վիլայեթ*՝ 94 համատեքստ / 34 տեքստ:

բ. կացարան՝ բունգալո - 4 համատեքստ / 2 տեքստ, *իզլու* - 1 համատեքստ, 1 տեքստ, *խանակա* - 2 համատեքստ / 2 տեքստ, *յուրյ* - 17 համատեքստ / 17 տեքստ, *յուրդ* - 7 համատեքստ / 5 տեքստ, *վիզվամ* - 59 համատեքստ / 43 տեքստ:

Եզրակացություններ

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ «բնակավայր, կացարան» իմաստային խմբի՝ մեր դիտարկած հատկական փոխառությունները հայերենին անցել են տարբեր լեզուներից. դրանց մեջ կան նաև միջնորդավորված փոխառություններ:

1. «Բնակավայր, կացարան» իմաստային խմբի վերոբերյալ բառերից թյուրքական փոխառություններ են *աուլ*, *յուրյ/դ*, *վիլայեթ*, արաբ.՝ *էմիրաթ*, *խալիֆաթ*, պարսկական՝ *խանակա*, *քարվանսարա*, ռուսական.՝ *խուլոր*, իսպանական.՝ *ռանչո*, էսկիմոսերենից՝ *իզլու*, ամերիկյան հնդկացիների լեզվից՝ *վիզվամ*, հին պորտուգալերենից՝ *ֆազենդա*:

2. Դիտարկված բառերի մի մասը դուրս է եկել գործածությունից՝ համալրելով պատմաբառերի շարքը, դրանք գործածվում են ըստ անհրաժեշտության:

3. Բառերի մի մասը փոխաբերացման հետևանքով ձեռք է բերել նոր իմաստներ, ունեցել բառիմաստի ընդլայնում՝ *խալիֆաթ, յուրդ/յի/*:

Գրականության ցանկ

1. Aghayan Ed., Ardi hajereni batcatrakan bararan [Explanatory Dictionary of Modern Armenian], Yerevan, 1976.
2. Aghayan Ed., Yndhanur ev haykakan baragitu'tyun [General and Armenian Lexicography], Yerevan, 1984.
3. Ayt'matov CH., Ev darits erkar dzgvum e ory [And the day stretches longer than a century], 1983.
4. Hayots lezvi barbarayin bararan [Dialectal Dictionary of the Armenian Language], Yerevan, 2007,
5. Hayrapetyan A., Otar bareri bararan [Dictionary of Foreign Words], Yerevan, 2011.
6. Malkhaseants St., Hayeren batsatrakan bararan [Armenian Explanatory Dictionary], vols. 1-4, Yerevan, 1944-1945.
7. Sargsyan A.H., Kroni tesut'yun ev patmut'yun [Theory and History of Religion], Yerevan, 2014.
8. Vlahov S., Florin S., Neperevodimoe v perevode [The Untranslatable in Transformation], Moskva, 1980.
9. Oghegov S., Slovar russkogo yazuka [Dictionary of the Russian language], Moskva, 1970.
10. Slovar inostrannikh slov [Dictionary of foreign words], Moscow, 1949.
11. Shanskiy N., Ivanov V., Shanskaya T., Kratkiy etietimologicheskii slovar russkogo yazika [A Brief Etymological Dictionary of Russian language], Moskva, 1971.

ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱԽՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Լոյս է տեսել բարբառագէտ Գ. Հանանյանի մի կարեւոր աշխատությունը¹: Պէտք է նշել, որ Սուէտիոյ բարբառի մասին կայ բաւականաչափ գրականութիւն: Ուշագրաւ է, Իգնատիոս Մարտիրեանի (Հաճի Հապիպլի գիւղէն) աւարտական շարադրանքը, որուն առաջին մասը տպուած է «Էջմիածին» հանդէսին մէջ²: Ի. Մարտիրեան կը յայտնէ, որ Անտիոքի շրջանի բարբառները ժողովուրդին կողմէ կը կոչուին «Քիստինյութ», այսինքն՝ քրիստոնեայի լեզու, անով իրենց խօսուածքը տարբերելով արաբերէնէ եւ թրքերէնէ: Միայն Սուէտիոյ կամ Մուսա լեռան վեց գիւղերուն մէջ խօսուող հայերէն բարբառը Իգնատիոս Մարտիրեան կը բաժնէ երեք մասնաճիւղերու՝ խօսուածքներու:

1.- Հաճի Հապիպլիի մասնաճիւղ՝ «խապլըցնյութ», որով կը խօսին Հաճի-Հապիպլիի եւ Պիթիասի բնակիչները:

2.- Եողուն-Օլութի մասնաճիւղ՝ «եւոլնըլըցնյութ», որով կը խօսին Եողուն-Օլութի, Խտըրպէկի եւ Վազըֆի բնակիչները:

3.- Քապուսիէի մասնաճիւղ՝ «քեպուսցընյութ», որով կը խօսին քապուսիէցիները:

Ա. Ղարիբեան 1958 թ. հրատարակեց «Հայերէնի նորայայտ բարբառների մի նոր խումբ» ուսումնասիրությունը: Հեղինակը Քապուսիէի բարբառին նուիրուած բաժնին մէջ կը յայտնէ, թէ Քապուսիէն Սուէտիոյ բարբառին մէջ կ'առանձնանայ իբրեւ առանձին խօսուածք³: Յաջորդը Տ. Անդրեասեանի աշխատութիւնն է, որ խմբագրած է Ա. Փաշայեան: Գործին մէջ լայնօրէն արժեւորուած են Ի. Մարտիրեանի վերոյիշեալ աշխատութեան անտիպ բաժինները⁴:

¹ Գաղթուի Հանանեան, Բառարան Սվեդիայի բարբառի (Խտրքեկի խոսվածք), Ե., Հեղ. հրատ., 2024, 255 էջ:

² Ի. Մարտիրեան, Ջերել Մուսայի բարբառը, Էջմիածին, 1952, թիւ 3, էջ 33:

³ Ա. Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակություն, Ե., 1958, էջ 79-78:

⁴ Տ. Անդրեասյան, Սվեդիայի բարբառը կամ Քիսթինըզ լեզուն, Հայկական ՍՍՀ հրատարակչություն, Ե., 1967:

«Յուշամատեան Մուսա Լերան» ժողովածոյին մէջ Սուէտիոյ բարբառին մասին Յակոբ Թորոսեան ունի երկու ուսումնասիրութիւն՝ «Ակնարկ մը Մուսա Լեռան (Սուէտիոյ) գաւառաբարբառին վրայ» եւ «Համառօտ բառացուցակ Մուսա Լեռան գաւառաբարբառին»⁵: Բառագիտական իմաստով կարելի է ներդրում է Թովմաս Հապէշեանի «Մուսա-Տաղի պապենական արծազանգներ» գիրքին այն բաժինները⁶, որոնք քննութեան առարկայ կը դարձնեն բառամթերքը՝ «Հայերէն ուշագրաւ բառեր», «Հայերէնանման բառեր», «Ծագումը անծանօթ բառեր», «Եւրոպական բառեր Մուսա-Տաղի բարբառին մէջ», «Մանուկներու յատուկ բառեր» եւ «ձայնարկութիւններ»:

Ըստ Գ. Զահուկեանի կատարած հայերէն բարբառներու բազմա-յատկանիշ վիճակագրական դասակարգումին՝ Անտիոքի կամ ծայր հարաւ-արեւմտեան բարբառախումբին մէջ կը մտնեն երկու ենթախումբ. ա.- Պէյլանի բարբառ, բ.-Քեսապի, Քապուսիէի, Եողուն-Օլուքի, Հաճի Հապիպլիի եւ Արամոյի խօսուածքները իբրեւ Քեսապ-Սուէտիա անկախ ենթախումբ⁷:

Սուէտիոյ բարբառի Խտրպէկ-Եողնուլուք-Վազըֆ խօսուածքի մասին բարբառագէտ Գաղթուհի Հանանեան ունի շարք մը յօդուածներ եւ երկու գիրք «Սվեդիայի բարբառը (Խտրբեկի խոսվածք)», ԵՊՀ հրատ., 1995 եւ այս գրախոսուող գիրքը:

«Բառարան Սվեդիայի բարբառի (Խտրբեկի խոսուածք)» գործը կ'ընդգրկէ Սուէտիայի բարբառի՝ Խտրպէկի խօսուածքի բառերը, «որոնք,- կը գրէ Հանանյանը,-ըստ մեր դիտարկումների և բարբառի իմացության աստիճանի, ծառայում են կենդանի հաղորդակցմանը՝ անկախ նրանց ծագումից (բնի՞կ, թե՞ փոխառյալ)»:

Բառարանն ունի առաջաբան, ուր, ի միջի այլոց, կը ներկայացնէ գլխաբառի հնչիւնական կազմի, անոր առկայացական-իրադրական հիմ-

⁵ Յուշամատեան Մուսա Լերան, խմբ՝ Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, հրատ. Ճեպէլ Մուսայի հայրենակցական միութեան, Պէյրութ, 1970:

⁶ Թովմաս Հապէշեան, «Մուսա-Տաղի պապենական արծազանգներ», Պէյրութ, 1986: Հեղինակը ունի առաւելաբար բանահիւսական նիւթերու ծողովածոյ մը եւս. «Յիշատակարան Մուսա-Լերան բարբառի», Պէյրութ, 1993:

⁷ Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 132:

քային տարբերակի, քերականական յատկություններու եւ իմաստներու ներկայացման սկզբունքներու շղթան:

Բառարանը երկար տարիներու յամառ հետապնդումներու արդիւնք է: Հեղինակը բարբառակիր ըլլալով՝ իր հայրենաբնակ եւ մասամբ նաեւ սփիւռքի հայրենակիցներէն հաւաքագրած բառերու կողքին օգտուած է Սուէտիոյ բարբառին նուիրուած այլ աշխատութիւններէ, անոնց ընդգրկած բառացանկերէն: Եւ բնական է կարծել, որ այս գործը չէր հասներ այս վիճակին, եթէ հեղինակը նախօրօք հրատարակած չըլլար մենագրութիւն մը եւ շարք մը յօդուածներ Սուէտիոյ բարբառի Խտրպէկի խօսուածքի մասին:

Գ. Հանանեանի բառարանին մեջ գլխաբառը, ըստ Անտիոքի բարբառի բնորոշ յատկութեան, բերուած է չէզոք-անուանողական հիմքով, ապա նշուած՝ վերջավանկին մէջ իր ձեռք բերած փոփոխութիւնը՝ իբրեւ անոր առկայացական-իրադրական հիմքը: Հանանյանը մեծ բծախնդրությամբ բառերը կու տայ գիտական տառադարձութեամբ՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով բառերու հնչիւնական կազմին եւ անոր գրանցման հարազատութեան: Բարբառը ունի պարզերու կողքին նաեւ քմային *𐎠𐎡𐎴*, *𐎠𐎡𐎴* եւ տեւական (երկար) *𐎠𐎡𐎴𐎠* ձայնաւորները: Բաղաձայնական համակարգը եռաստիճան է. ձայնեղներն են *ա, կ, տ, ծ, ճ*, խուլերն են *բ, գ, դ, ծ, ջ*: Բաղաձայնական համակարգին մէջ «բարբառն ունի ետնալեզվային պայթաշփական մի հնչյուն՝ *𐎡*, որը ստուգաբանորեն համապատասխանում է մե'րթ ետնալեզվային ձայնեղ պայթական գ-ին, մե'րթ ետնալեզվային խուլ պայթական կ-ին, մե'րթ էլ փոխառյալ բառերի ետնալեզվային ձայնեղ շփական դ-ին և նույն շարքի խուլ շփական խ-ին» (*𐎡* ըննիլ < գըտնել, *𐎡* ըղդիլ < կտրել, ունի *𐎡* < ընկոյզ): Գլխաբառի դիմաց կը տրուին անոր քերականական յատկութիւնները, ինչպէս գոյական՝ յոգնակիի կազմությամբ, ածական, մակբայ եւ այլն: Բայական գլխաբառերը տրուած են աներեւոյթ ձեւով (*Խըրաւդիլ, խուսիլ, խընդիլ*), որ միշտ կը վերջանայ *իլ*-ով, նշուած են իրենց սեռով եւ խոնարհման իրայատկութիւններով, որոնցմով կը բացայայտուի տուեալ բային խոնարհիչը:

Կազմողը իր առջեւ ստուգաբանական խնդիր չէ դրած, այսուհանդերձ, շարք մը բառերու պարագային կը կատարէ բառի ծագման մասին որոշ նշումներ:

Այնուհետեւ տրուած է բառիմաստը՝ երբեմն մէկէ աւելի հոմանիշներով ու բացատրութեամբ: Բառարանի ծանրակշիռ բաժինը բառի իմաստը բացայայտող նախադասութիւնները կը կազմեն: Նախադասութիւնները վերածուած են նաև արեւելահայերէնի: Վերածման մէջ բարբառային բառը երբեմն բացատրուած է քանի մը հոմանիշներով, որպէսզի աւելի յստակ բացայայտուի անոր իմաստային բովանդակութիւնը: Տեղտեղ գլխաբառը բերուած է արդէն գրականացած ձեով, նոյնութեամբ, երբ հնարաւոր չէ եղած հոմանիշ գտնել գրական լեզուին մէջ: Վերածման մէջ բացայայտուած են նաեւ բարբառի շարահիսական իրայատկութիւնները:

Գլխաբառերու բացատրութիւններն ու համապատասխան նախադասութիւնները կ'ընդգրկեն ազգագրական եւ բանահիւսական հարուստ նիւթեր: Յատկապէս լայն տեղ կը գրաւեն ազգագրական բնոյթի երեւոյթները՝ խոհանոց, ասեղնագործութիւն, կար ու ձեւ, մանկան դաստիարակութիւն, աշխատանքի տեսակներ ու գործիքներ, բնութիւն, խաղեր, տօներ ու ծէսեր:

Բառարանը կը հրատարակուի հեղինակի մահէն ետք: Հանանեանը կը պատրաստուէր սոյն աշխատանքը հրատարակութեան յանձնել՝ մուտքագրման վերջին փորձերը ստուգելէ ետք: Մուտքագրումը կատարած է Տ. Հանեանը: Խմբագրութիւնը ինծի վիճակուած է: Հեղինակը, շատ հաւանաբար, տակաւին ուղղումներ եւ լրացումներ կը կատարէր: Յայտնի է, որ լրացումներու այս գործընթացը երբեք կանգ չէ առած, որովհետեւ շատ բառեր տակաւին չեն ներկայացուած հեղինակի որդեգրած սկզբունքներով: Անոնք չունին քերականական յատկանիշներու ամբողջական ներկայացում եւ բացատրութիւններուն կից համապատասխան նախադասութիւններ: Ակնյայտ է, որ առաջաբանը գրելէ ետք եւս բառարանին մէջ նոր բառեր մուտքագրելու աշխատանքը չէ աւարտած: «Բառարանները միշտ կարելի է համալրել, թարմացնել: Այն պետք է շարունակական աշխատանք լինի», - կը գրէ ան:

Այսուհանդերձ, բառարանը իր այս վիճակով եւս արժանահաւատ աղբիւր է բարբառի եւ կարեւոր իրագործում՝ հայ բարբառագիտութեան համար:

Կ'արժէ նշել, որ վերջերս Պէյրութի մէջ հրատարակուած է Այնճարէն Յակոբ Փամպուքեանի (Փամպակեան) կազմած Խտրաբէկի խօսուած-

քի բառարանը⁸: Հայանցիկ ակնարկ մը իսկ կը բաւէ նկատելու, որ բառապաշարի զգալի տարբերութիւններ կան մէկ կողմէ Այնճար հիւղաւանի մէջ օգտագործուող բառամթերքի եւ Գաղթուհի Հանանեանի կազմած բառարանին միջեւ: Փաստ է, որ այսօր Այնճարի (Ուր համախումբ կ'ապրին Սուէտիոյ երեք խօսուածքները կրող հայրենակիցները դեռ 1939էն ի վեր) մէջ գործածուող բարբառը ունեցած պէտք է ըլլայ նորամուծութիւններ, նորակազմութիւններ, հնչիւնական փոփոխութիւններ: Փոխակերպում մը անպայման գոյացած պէտք է ըլլայ նախկին խօսուածքներուն եւ ընդհանուր բառամթերքին մէջ: Բան մը, որ իր արտացոլումը չէր կրնար գտնել Գ. Հանանեանի բառարանին մէջ, տրուած ըլլալով որ Հանանեանի վկայողները առաւելաբար 1946-ի իր հայրենադարձ հայրենակիցներն են:

Յակոբ Չոլաքեան
Բանասիր. գիտ. դոկտոր

⁸ Յակոբ Փամպուքեան(Բամպակեան), Ինչ որ կը յիշեմ Մուսա Լեւրան բարբառի Խտրպէկի խօսուածքէն որպէս բառամթերք, Պէյրուօ, 2022:

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.
КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ. BOOK REVIEWS

Լույս է տեսել Դ. Ս. Գյուրջինյանի «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի արտացոլումը հայերենի բառապաշարում. *հայ բաղադրիչով բառեր*» (Ե., «Լինգվա» հրատ., 2025, 192 էջ) աշխատությունը:

Ինչպես նշում է հեղինակն իր «Երկու խոսք»-ում, «գիրքը պարունակում է յոթ հետազոտություն, որոնք մեկ միասնական շղթայի մասեր են, բայց և առանձին միավորներ», որոնք, ի դեպ, մինչ այդ լույս են տեսել տարբեր պարբերականներում (այն է՝ «Վէմ», 2018, 2, 2019, 4, «Էջմիածին», 2015, 8, 2016, 2, 2016, 4, 2017, 1, «Կամուրջ» տարեգիրք, 2015), ներկայումս «մենագրության շրջանակում դրանք վերամշակվել են և դրվել ընդհանուր հյուսվածքի մեջ՝ մեկ խորագրի ներքո», և այդուհանդերձ՝ «թեման,- նշում է հեղինակը,- լիովին սպառված չենք համարում, ուստի կշարունակենք մեր ուսումնասիրությունները» (էջ 4-5):

Ինչպես ասում են՝ կա գիտական թեմատիկ ուսումնասիրության մեջ ձեռքբերում, և վերջինիս առումով՝ պատրաստականություն: Եվ ի՞նչ ձեռքբերում է երևան եկել այս լավ հրատարակությամբ լույս տեսած աշխատանքում: Թեմատիկան այնքան ամբողջական է, որ այն կարելի է համարել հայերենի բառապաշարի մի ոլորտի մանրամասն կարևոր ուսումնասիրություն:

Աշխատանքում բավականին հետաքրքիր է բառապաշարի իմաստաբանությանը վերաբերող վերլուծությունը: Նրանում մեծապես երևում է հայության պատմական ձեռքբերումների և կորուստների, բախտորոշ և տարաբախտ դիպվածների «պատմությունը, որ ինչպես հեղինակն է ներկայացնում, իրոք, «արտացոլում է հայ ժողովրդի պատմական ճակատագիրը». ինչպես նկատում ենք լեզվաբանության պատմության վերաբերող աշխատություններից մեկի վերնագրում՝ «բառի պատմություն հանրության պատմության մեջ»: Սա գիտական բարձր գնահատության արժանի աշխատություն է :

Այդ ոլորտը *հայ* և նրանով բաղադրված, մեծ մասամբ նոր ժամանակներում երևան եկած միավորներ են, որոնք մանրամասն քննության առարկա են ամենից առաջ պատմական բառագիտության տեսանկյունից, ընդ որում համաժամանակյա գնահատության մեջ:

Տեսական գրականության ճիշտ և տեղին օգտագործմամբ, լեվական նյութի աղբյուրագիտական տվյալների վերհանումով հեղինակը բնորոշում է ամեն մի միավորի ոչ միայն կազմությունը և իմաստաբանությունը, այլև գործառական-կիրառական յուրահատկությունները: Ըստ այդմ հրապարակ է բերվում արդի հայերենի բառագիտությանը վերաբերող մի ուշագրավ աշխատություն, որ գնահատելի է ոչ միայն նյութի մանրամասն իմացության, այլև գիտական հետաքրքիր շարադրանքի առումով:

Աշխատության տարբեր մասերի վերնագրերը բավականին ճիշտ են, վերաբերում են ինչպես բուն լեզվական կողմին, այնպես էլ, կարելի է ասել, արտալեզվական հանգամանքին (հայ համակեցությանը, հոգևոր-մշակութային միությանը, պատմական-վերաբերմունքային ձևին): Նման համատեքստում կատարվում է հավաքականություն նշանակող բառերի, հայությանը վերաբերող հասկացությունների բառային դրսևորումների, ազգային ինքնության փոփոխության, ինչպես նաև բնաշխարհիկ և օտար հաղորդակցման պայմաններում բառային միավորների ստեղծման և գործածության բանիմաց ուսումնասիրություն:

Տեղ գտած հոդվածները, այս դեպքում՝ աշխատության առանձին բաժինները ներկայացվում են նյութի մանրամասն վերլուծությամբ, հարակից (մասնագիտական և այլ կարգի) գրականության օրինակելի ներառումով, քննության մեջ բանավիճային հմուտ ապացուցողականությամբ:

Իսկ շարադրանքի ոճը, իրոք, լեզվաբանական է, ավելի կոնկրետ՝ լեզվագիտական: Նման աշխատության լույսընծայումը, ինչ խոսք, նկատելի ձեռքբերում է արդի հայերենագիտության բազավառում:

Տարիների տևական աշխատանքի ընթացքում բառապաշարային նյութը կարող է լիովին օգտագործվել արդի հայերենի ընդարձակ բացատրական բառարան կազմելու դեպքում:

Վ. Գ. Հ.

2025թ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի է ունեցել գիտխորհրդի 12 նիստ: Քննարկվել են գիտաշխատողների տարեկան թեմաները, գիտական միջոցառումների, գիտաժողովների կազմակերպման հարցեր, հաստատվել են թեկնածուական ատենախոսությունների թեմաներ, հրատարակության են երաշխավորվել Վ. Համբարձումյանի «Ակնարկներ գրական հայերենի պատմության» աշխատանքը և այլ ուսումնասիրություններ:

Կիրառական լեզվաբանության բաժնում ստեղծվել է նյարդահոգե-լեզվաբանական լաբորատորիա, և հասարակական հիմունքներով լաբորատորիայի վարիչ է նշանակվել Ս. Հովհաննիսյանը:

Ինստիտուտում ավանդույթ է դարձել Մայրենիի օրվան նվիրված միջոցառումների կազմակերպումը: Այդ շրջանակում կարևորվում է հայերենի մաքրության հարցերին վերաբերող «Գրական հայերենը ՁԼՄ-ներում» խորագրով գիտաժողովը: Քննարկման նյութ է հանդիսացել զանգվածային լրատվամիջոցների՝ հեռուստաընկերությունների, թերթերի, կայքերի, սոցիա-

լական ցանցերի լեզուն: Նշված գիտաժողովը կարևոր էր հատկապես նոր միջոցառումների անցկացման, ծրագրերի իրականացման և արդյունավետ գործակցության համար:

Ինստիտուտը կազմակերպվել է նաև Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային և «Բառագիտության արդի խնդիրներ» խորագրով հանրապետական գիտաժողովներ, ապա և նյութերն առցանց հրապարակել էլեկտրոնային ժողովածուներում:

Ինստիտուտում պարբերաբար կազմակերպվում են սեմինար-քննարկումներ հանրապետության գիտակրթական ոլորտների ներկայացուցիչների, ուսուցիչների, ուսանողների, լեզվաբանների, մտավորականների համար: Լեզվական ու լեզվաբանական գիտելիքների տարածման ու գիտականորեն ճիշտ պատկերացումների ձևավորման հարցերը մշտապես լեզվի ինստիտուտի ուշադրության կենտրոնում են:

Ս. թ. հոկտեմբերին լեզվի ինստիտուտում կայացել է ՀՀ ԳԱԱ տերմինաբանական հիմնախնդիր-

ների հանձնախմբի նիստը, որին մասնակցում էին ակադեմիական և բուհական համակարգի ականավոր լեզվաբաններ, նաև այլ ոլորտների մասնագետներ:

Ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն», «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հանդեսները, որոնք կարևոր նշանակություն ունեն հանրապետության գիտական կյանքում:

Գիտական աշխատանքների արդյունքները ներկայացվել են միջազգային և հանրապետական գիտաժողովներում:

Ինստիտուտի մի շարք գիտաշխատողներ մասնակցել են հանրապետական, ՀՀ-ում և արտերկրում կազմակերպված միջազգային գիտաժողովների, խորհրդաժողովների, քննարկումների. «Բառագիտության արդի խնդիրներ», «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի արդի խնդիրներ» հանրապետական գիտաժողովներ, Գևորգ Զահուկյանի ծննդյան 105-ամյակին նվիրված հայերենագիտական նստաշրջան, Սերգեյ Աբրահամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր», ՌԴ-ում՝ Պետերբուրգում կայացած՝

Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի 300-ամյա մշակութային ժառանգությանը նվիրված, Մոսկվայում կայացած՝ նյարդալեզվաբանության խնդիրներին նվիրված «Քիչ ուսումնասիրված լեզուների փորձարարական ուսումնասիրություններ», Սանկտ Պետերբուրգի համալսարանում կայացած՝ արևելյան լեզուների ֆակուլտետի 170-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովներ, Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի կազմակերպած «Հայագիտությունը լեզուների և մշակույթների համատեքստում» միջազգային գիտագործնական կոնֆերանս, Չինաստանում կայացած՝ «Արիեստական բանականության մարտահրավերները քիչ ուսումնասիրված լեզուներում. ներդրակաստիկության հեռանկարը» միջազգային գիտաժողով, Կիրառական լեզվաբանության արդի խնդիրներին նվիրված միջազգային առցանց խորհրդակցություն, ԿԳՄՍ նախարարության կազմակերպած միջոցառման աշխատանքներ, զանգվածային լրատվամիջոցներում լեզվին ու լեզվաքաղաքականությանը վերաբերող քննարկումներ:

Ինստիտուտի մի շարք գիտաշխատողներ գիտական համագոր-

ծակցության մեջ են Վենետիկի համալսարանի հայագետների, Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ինստիտուտի, Ս. Պետերբուրգի և Մոսկվայի պետական համալսարանների գիտաշխատողների հետ, ընդգրկված են ԻԻՀ Փայամե Նուր համալսարանի «Applied Linguistics Research Journal», Բրուկլինի հետազոտության ինստիտուտի «International Journal of Language and Linguistics» հանդեսների խմբագրական խորհուրդներում, անդամակցում են նաև Փարիզի Հայագիտական ընկերակցությանը (Société des Etudes Arménines):

Լեզվի ինստիտուտը գործակցության պայմանագրեր ու հուշագրեր ունի ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրի մի շարք գի-

տակրթական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով հաստատելու և զարգացնելու գիտական կապեր, աջակցելու կողմերի համար ընդհանուր հետաքրքրություններ ներկայացնող հիմնարար գիտական հետազոտությունների կատարմանը:

2025թ. ինստիտուտում հյուրընկալվել են մասնագետներ ՌԴ-ից, Ֆրանսիայից: Ձեռք են բերվել գործնական պայմանավորվածություններ՝ իրականացնելու համատեղ հետազոտություններ և ծրագրեր հայերենագիտության ոլորտում:

Սույն թվականի միջազգային գիտաչափական շտեմարաններում տպվել և տպագրության են ներկայացվել տասնյակ հոդվածներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Աբրահամյան. ծննդյան 100-ամյակ

Սարգսյան Ա., Մինասյան, Շ. Ալթունյան Է., Սերգեյ Աբրահամյանի բարբառագիտական ներդրումը.....	3
--	---

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Միքայելյան Ս. Ա. Հայերենում ուսերենի միջնորդությամբ կատարված արաբական փոխառություններ.....	15
Սիրունյան Տ. Ղ., «Քերականություն է Ը. մասանց բանի» (Ժէ դար). բնույթը և աղբյուրները.....	26

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գալստյան Ա. Վ., Ժեստը որպես լեզվական-խոսքային նշան.....	47
Համբարձումյան Վ. Գ., Ստուգաբանական դիտարկումներ.....	57

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ազիզբեկյան Զ., Հակադրության ոճական գործառույթները իսպանական ժողովրդական հեքիաթներում	68
Պապիկյան Ս. Վ., «Բնակավայր, կացարան» իմաստային խմբի որոշ հատկական փոխառությունների նույնություն.....,,.....	77

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Չոլաքեան Յ., Բարբառագիտական արժեքատու աշխատություն...	86
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	91
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	93

СОДЕРЖАНИЕ

А. Саргсян, Ш. Минасян, Э. Алтунян, Диалектологическое наследие Сергеч Абраамяна - 3. **Статьи:** С. А. Микаелян, Арабские заимствования в армянском языке, вошедшие при посредстве русского - 15. Т. Г. Сирунян, «Грамматика 8 частей речи» (17-й век). природа и источники - 26. **Дискуссии и обсуждения:** Ашот Галстян. Жест как лингвистико-вербальный знак - 47. В. Г. Амбарцумян, Этимологические заметки - 57. **Сообщения:** З. Азизбекян, Стилистические функции антитезы в испанских народных сказках - 68. С. В. Папикян, Анализ экзотизмов, выражающих значения «жилище» - 77. **Рецензия:** А. Чолакян, Ценное диалектологическое исследование - 86. **Книжное обозрение** - 91: **Научная жизнь** - 93

CONTENTS

A. Sargsyan, L. Minasyan, E. Althunyan, On the Sergey Abrahamyan's dialectological Heritage - 3. **Articles:** S. A. Mikayelyan, Arabic borrowings in the armenian language borrowed from Russian-15. T.G. Sirunyan, "Grammar of the 8 parts of Speech" (17th century). its nature and sources- 26. **Discussion:** A. V. Galstyan, The Gesture as a linguistic-speech sign - 47. V. G. Hambardzumyan, Etimological reviews- 57. **Reports:** Z. Azizbekyan, Stylistic functions of antithesis in spanish folktales - 68. Papikyan S. V. Examination of some exoticisms to the semantic group «Dwelling, Settlement» - 77. **Review:** H. Tcholakhyan. The Valuable dialectological work - 86. **Book reviews** - 91: **Science News** - 93:

Ի Գ Ի Տ ՈՒԹ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջի նիստարը լույս է տեսել 2003 թ.:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ inslang@sci.am

К СВЕДЕНИЮ

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Язык и языкознание”, первый номер которого был издан в 2003г.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
(Հայերենագիտական հանդես)

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
(Журнал арменоведческих исследований)

LANGUAGE AND LINGUISTICS
(Journal of Armenian Studies)

2 (33)
2025

Գլխավոր խմբագիր Վ. Գ. Համբարձումյան

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Հ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի